

ԱՐԴԵՆ ԶԱՐՅԱԼ


# ՀԱՍԻԹԻԿ



ՍՈՎԵՏԱՀԱՅ

Բ Ե Մ Ի

ԿԱՐԴԵՏՆԵՐ





ՀԱՅԿԱԿԱՆ  
ԹԱՏԵՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊՈՒԲԵԼ ԶԱՐՅԱՆ



ՕՐԵՎԱՆ  
1970



**Рубен Варосович Зарян**  
**А С М И К**

(На армянском языке)

Армянское театральное общество (АТО)

Ереван 1970

Երբ մոտիկից ծանոքանում ես Հասմիկի կյանքի մանրամասնություններին, զարմացնում և միաժամանակ հիացնում է այն շերմ սերը, որով նա դեռ շատ վաղ հասակից փայտիայել է քատրոնի գաղափարը և մանավանդ այն հաստատմությունը, որն առաջնորդել է նրան դեպի քատերական ասպարեզ:

Նա ծնվել ու մեծացել է գավառական միջավայրում, որի համար քնորոշ էին հանապետական իրականության հետամնացությունը՝ տգիտություն, սահմանափակություն, նախապաշտամություն: Եվ, չնայած դրան, Հասմիկը երազել է քատրոնը: Այն ժամանակ, երբ նրա հանապարհին եղած դժվարություններն ու խոշնդրությունները մի ուրիշին կարող էին ընկենել, նուսահատության հասցնել, Հասմիկի մեջ, ընդհակառակը՝ սաստկացրել, շատ ավելի ուժգին ու բուն են դարձել ձգումը դեպի քատրոն:

Ոչինչ չէր ազդում նրա վրա, ոչ հարազատների հորդունները, ոչ ամուսնու սպառնալիքները, ոչ էլ տգետ շրջապատի ծաղրն ու քամբասանքը: Զկար մի այնպիսի



ուժ, որ կարողանար նրան կանգնեցնել, շեղել այն նպատակից, որին նա մղվում էր մի անզուսպ կրքով:

Չի կարելի ասել, թե նա ներքին պայմար չի ապրել, կամ հոգեկան հոգումներ չի ունեցել: Ունեցել է: Եվ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, բայց ամեն անգամ, երբ Հասմիկի առաջ կանգնել է այն օրիասական հարցը—տո՞ւմը, թե՝ բատրոնը, բնտանեկան անխոռվ խաղաղությունը, թե բատրոնը, նա այնին հոգեկան արիություն է ունեցել, որ բատրոնը գերադասել է ամեն ինչից: Չի կարելի ասել, թե նրա մեջ այդ երկուար համատեղելու ցանկություն չի եղել, բայց, եթե այդ անկարելի է բվացել ու երե ընտրությունը պիտի է երկուսից միայն մեկի վրա կանգ առներ, ապա այդ մեկը նրա անսասան վճռով, ինարկե, բատրոնն է եղել, բատրոնը, եթե նույնիսկ մի օր փակ գտներ իր առաջ սեփական տան դռները:

Ամեն անգամ, երբ նրա նանապարհին որևէ դժվարություն էր պատահում, և դեռ շնաղրահարած այն, պահ մի մտածում էր, թե ինչ է անելու ինքը, եթե ստիպված լինի հրաժարվել բատրոնի գաղափարից, ապա նրա հուսանատությունը նույնին բուռն էր արտահայտվում, որ տան և ձգտումը:

Հասմիկը շնաշտվեց տգետ ու նախապաշտառված շրջապատի հետ, բարձր կանգնեց բարոյականության նրա ժաղթենիական հասկացողությունից և, վստահ իր ուժերին, ոտք դրեց բատրոն:

Այս ամենը վկայում էն, որ դեռ այն ժամանակ բատերական միջավայրը գործ է ունեցել մի շեշտված ան-

հատականության տեր կնոջ հետ: Բայց որքան էլ նա զորեղ կամֆի տեր լիներ, դժվարությունների առաջ շրնկրկվող, սահմանափակ շրջապատից բարձր, ձգումների մեջ համառ, միևնույն է, հազիվ թե շատ առաջ գրնար, երե հենց սկզբից, բեմական կյանքի արշալույսին շընկներ բատերական գործիչների այնպիսի միջավայր, որը երա վրա խոշոր և դրական ազդեցություն ունեցավ:

Նկատենք, որ ինչժան ընտանեկան շրջապատի դիմադրությունը բատրոնի դեմ ուժեղ էր, այնին էլ բեմական միջավայրն էր Հասմիկի նկատմամբ չերմ ու հոգատար:



Հասմիկը ծնվել է 1878-ին,<sup>1</sup> Հին Նախիչևանում: Դա գալառական փոքրիկ ժաղաց էր: Կովուրական կենտրոններից նեռու գտնվելով՝ այդ ժաղաքն ուներ իր ուռույն նիստն ու կացը, բնորոշ սովորությունները:

Նախիչևանը հայտնի էր իր պատմական անցյալով, յուրաքանչյուր բնիկ ժաղաքացի հպարտությամբ է հիշում անցյալ դարի 20-ական թվականները, երբ մի խումբ հայրենասեր երիտասարդներ, զենքեր առած լեռները բարձրացան, անտառները մտան՝ պարսկական վայրագ տիրապետության դեմ պայխար մղելու համար:

Բավականությամբ էին հիշում ժաշարի նախնիներին, իսկ իրենք ապրում էին խիստ առօրյա և անշուր կյանքով: Երե նրանց կյանքը շատ էլ բախտավոր չէր դասավորվում, որ կարողանային պոկվել այդ միօրինակ միջավայրից, տեղափոխվել Թիֆլիս, Բաքու, ընդհանրապես որևէ մեծ ժաղաց, ապա նետզինտէ հաշտվում էին իրենց «նակատագրի» նետ, ամեն կերպ աշխատելով ժիշք շատ բարօր կյանք ստեղծել, վայելել աշխարհը, որքան այդ բույլ էին տալիս նախիչևանյան սահմանները և առնասարակ՝ գալառական ժաղաքներում անողոք տիրա-

պետություն հաստատած՝ կյանքի տրաղիցիոն և անձուկ ըմբռնումներ:

Նախիչեանցիների մեծ մասն առեւրականներ էին կամ էլ՝ արնեստավորներ: Հասմիկի նայրը առեւրական գործերով էր զրադվում, ավելի ճիշտ՝ ժաղամում մի փոքրիկ խանուր ուներ: Նեղված չեն ապրել, գրկանմ չեն տեսել, բայց և միաժամանակ՝ շռայլության և առատության մեջ էլ չեն գտնվել:

Հասմիկը բավական փոքր էր, հազիվ յոր տարեկան, երբ գրկեց հորից, և մոր, եղբոր և բույրերի հետ մնաց հորեղբոր խնամքի տակ: Հոր հետ կապված չի եղել և գրեթե չէր հիշում նրան: Շատ սիրում էր հորեղբորը և անշափ կապված էր մոր հետ, որը, ճիշտ է, ազատ չէր ասիական հետամնացության ազգեցությունից, բայց հանապետական կյանքով դաստիարակված՝ մի պարզասիրա կին էր, չերմ ու բարի մայր<sup>2</sup>:

Հասմիկը աշխույժ երեխա է եղել. նրա մանկությունը լի էր շարաննիություններով, մայրը միշտ ասում էր նըրան, քե նա պետք է տղա ծնված լիներ: Եռանդն ավելի էր, բան այն խաղերը, որոնցով զբաղեցնում էին նրան: Դպրոցում էլ գրեթե շփոխվեց: Թեև սիրում էր դպրոց հանախել, դաս պատրաստել, բայց խաղն ու շարաննիությունը գերադասում էր, որի պատճառով էլ նրա վարքի բվանշանը ցածր էր:

Հասմիկն ավարտել է իրենց ժաղամի երկդասյան դպրոցը: Նա շատ մեծ ցանկություն ուներ երեանում իր

կրուրյունը շարունակելու, բայց այդ միտքը տանեցի-ներին արտասոց քվաց, հետեւապէս և մնաց անկատար:

\* \* \*

Հասմիկի թատերական առաջին ժայլերը կապված էն Սաֆրազյան ամուսինների հետ, որ դերասաններ լինելով՝ շրջում էին ժաղաքից-ժաղամ և տեղական սփռող-ների հետ ներկայացումներ տալիս:

Մի անգամ, Սաֆրազյան ամուսինները այցելում են Եախիչեան, նրանց ներկայացումներին մասնակից է դառնում նաև Հասմիկը: Դերասանունին հիշում է այդ օ-րերը, հիշում է հանույնով և բարձականուրյամբ, բայց և միաժամանակ հումորով պատմում բեմական անփորձ «զործչի» պարզամտուրյունը:

Ինչ-որ մի պիեսի համար, — պատմում է նա, — նրանք փնտռում են մի տղա երեխա, որն ամբողջ պիեսում միայն շորս բառից բաղկացած մի նախադասուրյուն է ասում: Պ. Կալոյանը տալիս է Հասմիկի բեկնածուրյունը:

Սաֆրազյան ամուսինը նրան կանչում է իր մոտ և բացարում դերը: Նու պիտի ներկայացներ երդի տղայի, որի մորք սպանում են ավազակները և նա լալով ա-սում է իր շորս բառը: Ներկայացումը պետք է տեղի ու-նենար մի ժանի օր հետո: Եվ այդ մի ժանի օրվա ընթաց-քում շարունակ, քե դպրոցում, քե տանը նաշի ժամա-նակ և քե զիշերը անկողնում այդ շորս բառն էր կրկնում,

Նինի՞ թե հանկարծ մոռանա ու խայտառակվի Սաֆրագ-  
յանների, ուսուցչի և իր դասընկերների մոտ:

Վերջապես եկավ ներկայացման օրը:

«Մեր դպրոցի փոքրիկ դահլիճը լցվել էր հասարակու-  
րյամբ: Հորեղբայրս էլ էր եկել:

Ակսվեց ներկայացումը:

Թեմի ետևում կանգնած շարունակ իմ չորս քառն էի  
կրկնում, իմ առաջին դերը: Այդ ռոպեին էր, որ մեկը քե-  
րե խիեց մեջքին ու՝ «Թագուհի»<sup>3</sup>, բեմ մտիր» ասաց: Ա-  
ռանց ետ նայելու մոտ բեմ և տրագիկ արտասանեցի իմ  
պատկերի չորս քառը: Թեմում Սաֆրազյան ամուսինն  
էր, որին ես դիմում էի իմ այդ խոսքերով: Դերս վերջաց-  
նելուց հետո նայեցի նրա աշխերին և հասկացա, որ նու  
գոն էր ինձնից:

Այժմ հայացք դեպի հասարակուրյունը դարձրի,  
հորեղբորս փնտրելու և նրա կարծիքն էլ իմանալու:

Դահլիճում, հենց առաջին կարգում հստած էր հորեղ-  
բայրս: Նկատելով իմ հայացքը՝ նա ծպտաց: Ես զիսով  
մի շարժում արի, որ կնշանակեր. «հորեղբայր, դերս լա՞վ  
խաղացի»: Նա հասկացավ ինձ ու զիսով դրական շար-  
ժում արեց: Ուրախացա ու ծպտացի: Դահլիճում ծիծաղ  
քարձրացավ, ինչպէս երես է շատերն էին հասկացել իմ  
ու հորեղբորս միջև տեղի ունեցած համբ խոսակցության  
բովանդակուրյունը: Ես կրկին նայեցի Սաֆրազյանին:  
Նա սոսկալի շղայնացած էր: Նոր հասկացա, որ իմ այդ  
վարմունքով արդեն կոմիկականի էի վերածել խոսքերիս  
բողած տրագիկ տպակորուրյունը»:

Այդ շխանգարեց, սակայն, որ նույն Սաֆրազյանը Հասմիկին առաջարկեր խաղալ «Շուշանիկ» պատմական պիեսում զիմավոր հերոսուհու դերը: Սակայն վերոնիշյալ անախորժության կապակցությամբ էր, որ Հասմիկը լուսն է քեմական արվեստի առաջին ցուցումը. «Բեմի վրա եղածդ ժամանակ միայն ո՞ւ դերով պետք է ապրես և ենթադրես, թե դահլիճում մարդ չկա»— ասել է նրան Սաֆրազյանը՝ կշտամբելիս: Այս խոսքը խորն է տպավորվել Հասմիկի մեջ. այն ժամանակ լիովին, մինչև վերջ չի գիտակցել, թե ինչ խորհուրդ է արվել իրեն, բայց նետազյում, երբ իր կյանքը կապեց բատրոնի նետ՝ նանախ է մտարեել Սաֆրազյանի խրատը, բազում առիթներով համոզվել, թե ինչպիսի նշմարտություն է արտահայտված այդ մի ժանի պարզ խոսքի մեջ:

\* \* \*

Հասմիկը գեղեցիկ էր, շատ երիտասարդներ են նետապնդել նրան: Դա էլ պատճառ է դառնում, որ ծնողները շտապեն և վաղ ամուսնացնեն նրան: Ծագումով սալմաստեցի, բայց նախիչեանում տուն-տեղ դրած, իսկ այժմ արդեն բիֆլիսարնակ վաճառական էր նրա ամուսինը՝ Հարություն Հակոբյանը:

Հասմիկը փոքր էր, այնքան անփորձ, որ կարգին չէր հասկանում, թե ինչ նակատագրական փոփոխություն է մտնում իր կյանքում, բայց անհամբեր էր ամուսնանալու, որովհետեւ դա իր առաջ բացելու էր Թիֆլիս մեկնելու

և այնտեղ առմիշտ բնակուրյուն հաստատելու ցանկալի հեռանկարը:

Հասմիկն ու ամուսինը անմիջապես շտեղափոխվեցին Թիֆլիս. միառժամանակ, ինչպես ընդունված էր, մնացին ամուսնու ծնողների տանը:

Նոր միջավայրը Հասմիկի սրառվը չէր. ամուսնու ծընողները տղետ մարդիկ էին, որ ապրում էին նախապետական կյանքի ամենահետամնաց սովորություններին կառշած, իսկ ամուսինը, թեև նրանց համեմատությամբ կրված ու «ազատամիտ», բայց սառը, չոր մի անձնավորություն էր. Հասմիկը, դեռ բոլորովին երիտասարդ, եռանդով ու աշխուցով լի, հարկադրված կյանք էր վարում, տխուր ու միակերպ: Սկեսրոջ մի սաստող խոսքը բավկական էր, որ Հասմիկը նրածարվեր դրսի կյանքից, նույնիսկ ամենամոտիկ ընկերութիւնների հետ ունեցած կապերից, մտածելով, թե գուցե հոգեկան չերմուրյուն կրգտնի ամուսնու մեջ, բայց նրա կանացի ամենափոքրիկ նազը, հոգեկան ամենաքերեք բռնկումն անզամ շանում էր ամուսնու, նիշտ է բաղաքավարի վարվելաձեի, բայց սառը և զապող հայացքի ներքո:

Կակոյանը, որ Հասմիկի սիրելի ուսուցիչներից էր, փոքր դեր չէր խաղացել աշակերտունու կյանքում: Վերին աստիճանի համակրելի, բայց շարքաշ կյանքով ապրող մի մարդ էր նա: Ընտանիքը բազմամարդ էր, իսկ ստացած աշխատավարձ՝ շնչին: Մեկ-մեկ դպրոցում վճարովի ներկայացումներ էր կազմակերպում, որին երեսն մասնակցում էր նաև Հասմիկը: Վերջինիս ամուսնանա-

լուց հետո, Կակոյանը որոշում է վճարովի ներկայացում տալ և խնդրում է նրան նույնպես մասնակցել: Իր կյանքի վերջին տարիներին էլ Հասմիկը չէր կարողանում մոռանալ այն իրարանցումը, որ առաջացրել էր տանը այն առաջարկը, թե «Մոլիսի նազարի խարսր բատրոն պիտի խաղա»:

Հասմիկը ապրել էր ուզում, կյանք մտնել, հասարակուրյան մեջ լինել, շփվել, ասել-խոսել, մինչդեռ նրանից պահանջում էին խոնարհ հնազանդուրյուն, ամորխածուրյուն, ծանր ճիստ ու կաց: Հասմիկն իր վիճակի հետ միայն արտաքուստ էր հաշտվում: Նա հոգով չերմացած չէր ամուսնու հետ, բայց հարգում, պատկառում և լոկ նրան շվրդովելու համար՝ լուս էր, ձայն չէր հանում, համակերպվում: Սակայն կյանքը պահանջում էր իրենք: Եվ ժանի որ այդ հարցում Հասմիկի միտքն ու հոգին հաշտ չէին, ավելի նիշտ՝ կյանքի նոր պայմաններին համակերպվելու վճիռը և նրա ձգտումները խոր հակասուրյան մեջ էին, բնականաբար, տեղի էր ունենում հոգեկան ուժերի լարում, զգացումների կուտակում, որոնք պետք է ելք որոննեին՝ մի օր, մի տեղ՝ արտահայտվելու համար:

Իր հոգեկան պահանջներին և հակումներին մի որոշ բավարարուրյուն տալու համար, նա հանախ փակվում էր իր սենյակում, շալը զցում ուսերին և իրեն ծանոր պիեսներից սիրած մենախոսուրյուններ արտասանում: Մոռացած ամեն ինչ-և՛ շրջապատր, և՛ այն, թե որտեղ է գտնվում՝ նա իրեն զգում էր բեմական տախտակամածի

վրա, իսկ մի փոքր անց՝ երեակայությամբ տեղափոխվում էր պիեսում պատկերվող միջավայրը, և նրա աշխերի առաջ կանգնում էին հակառակորդ ուժերը: Նա բարձրացնում էր ձայնը, ազատ, համարձակ ասում էր մտերը, պատմում՝ նկարագրում էր ապրումները. մեկ-մեկ էլ նրան բվում էր, թե իր առաջ կանգնած հակառակորդի դեմքը մշուշվում է և տեղը իր սկիսող դեմքն է զծագրվում՝ մոլի հավատացյալ, պահանջկոտ ու դաժան: Այդ պահերին, նիշտ է, շատ աղոտ անցնում էր այն միտքը, թե ինչքան նմանություն կա իր վիճակի և այն հերոսունությունը ապրումների միջև, որին նա տանը ներկայացնում է: Եվ դրանից նրա խաղը դառնում էր շատ ավելի անկեղծ, անմիջական ու արտահայտիչ, ատելուրյունը հակառակորդի նկատմամբ՝ անհամեմատ բուռն, սահմաններ ու շափեր շընդունող:

Իսկ սկեսուրը, որ արդեն նկատել էր հարսի առանձնացնումները և հանախ դռան արանքից հետեւ նրա խիստ տարօրինակ պահվածքին՝ չէր կարողանում հասկանալ, թե ի՞նչ է կատարվում, և մի փոքր էլ վախեցած շարժում էր զլուխը և ինչն իրեն մրմնջում. «գժվիր է մեր խարս»:

Հասմիկն էլ իր ներքին չէր հասկանում ամուսնուն, ոչ մի կերպ չէր կարողանում ըմբռնել, թե ինչո՞ւ նա չի միշամտում, չի բացառում ծնողներին, որ ոչ մի վատ բան չի պատահի, եթե իրենց հարսը մասնակցի բաղաժի ներկայացնումներին: Հասմիկն իրեն համոզում էր, որ գուցե ամուսինն այդպես է պահում իրեն ծնողների մոտ, չկամենալով հինավորց, ավանդական պատկերացումներին:

հակադրվելով՝ վրդովել նրանց ծերունական հանգիստը՝  
իսկ հետո՝ տեղափոխվելով Թիֆլիս՝ նա արգելք չի լինի  
կնոշ փայփայած ձգումների իրազործմանը։ Հասմիկը  
շարաշար սիալվում էր. ամուսինը, թեև մի փոքր կըրբ-  
ված, Թիֆլիսի նման մեծ քաղաքում ապրած, կուպուրա-  
կան շրջանների հետ կարծես շփված, բայց իր ծնողների  
հարազար զավակն էր, հնադավան մի անձնավորություն։  
Եվ երբ մի անգամ, մինչև Թիֆլիս գնալը, Հասմիկը մեն-  
մենակ է մնում ամուսնու հետ՝ խնդրում է շտապեցնել  
Թիֆլիս տեղափոխվելը, ասելով, որ իր միակ նպատակը  
կյանքում՝ քատերական ասպարեզում աշխատելն է։ Ա-  
ռանց դեմքի արտահայտությունը փոխելու, նա քաց-  
սական դիրք է բռնել, այնքան խիստ ու կտրական, որ կը-  
բոչը պահ մի բվացել է, թե ապազայում այդ հարցին վե-  
րադառնալու հետ այլևս ոչ մի հույս կապել չի կարող։

Թիֆլիսում Հասմիկը նորից է բարձրացնում իր ապա-  
գայի հարցը, և ամուսինը առաջիկա պիս մերժում է. ասե-  
լով, որ ինքը երբեք չի կարող հավանություն տալ կնոշ  
ծրագրերին։ «Նրա այդ վերաբերմունքից հետո,— պատ-  
ճում է զերասանումին,— կյանքն ինձ համար կարծես  
կորցրեց իր հմայքը, իմաստը։ Այդ օրերին,— ասում է  
նա,— ծանորացա կուսանոցի մի քանի կույսերի հետ, և  
այդ ծանորությունից հետո իմ միտքս միայն մի հարցով  
էր զբաղված՝ քատրո՞ն, թե՞ կուսանոց։ Այս, եթե քատե-  
րական ասպարեզում չեմ աշխատելու, լավ չե՞ր լինի, որ  
կուսանոց մտնեի»։


Ամուսնու հետ երեմն քատրոն էր գնում։ Մի անգամ,

օրինակ, ներկայացնում էին «Ապան-քալասի» պիեսը, որտեղ խաղում էր և Հովհաննես Արելյանը: Վերջինս կատարում էր Աղասու դերը: Հասմիկն այդպիսի մեծ դերասանի խաղ երբեք չէր տեսել: Արելյանը նրա վրա անշնչելի տպավորություն է քողնում: Դրանից հետո նա Արելյանին, Ալիխանյանին և արկին Զարելին տեսնում՝ Ծատրովսկու «Անտառի» մեջ: Մի փոքր անց՝ նա տեսնում է նաև Վարդուհուն՝ «Խանումի» մեջ, որ դերասանուհու գլուխգործոցներից էր: Հասմիկի ամբողջ էուրյունը ցընցված էր տեսածով: Թեմին նվիրվելու, դերասանուի դառնալու ցանկությունը մի նոր ուժով է բռրովվում նրա մեջ: Եվ նա մի ներքին վճիռ է կայացնում՝ ինչ գնով էլ լիձի՝ անպայման զնալ քարոն: «Իմ ուղեղը,— ասում է նա, — միայն դրանով էր զբաղված, իմ աշխի առաջ շարունակ Արելյանն ու մեր մյուս արտիստներն էին կանգնած»:

Սցցնում են օրեր, ամիսներ, տարիներ: Հասմիկն արդեն շուրջ երեխայի մայր էր, քայլ քատրոնը շարունակում էր մնալ նրա երազը: Նա «մաքով սավառնում էր դեպի քատրոն, որտեղ Արելյանն ու Սիրանույշն էին»: Իսկ հարեան սենյակից նրա ականջին լսվում էր համրիչի միայար ձայնը: Գա ումուսինն էր, որ իր օգոստներն ու վնասներն էր հաշվում:



Նպանիկ («ամուս»):





Մարսելինա («Յիզարոյի ամուսնությունը»)

\* \* \*

Ամուսինը, թե իմաստ բարեի տեր էր, բայց սիրում էր կենչը և նրա համար դժվար էր Հասմիկին տեսնել մըշտապիս ախուր, անտրամադիր: Տեղի տալով կենչ բայխանձանքներին, վերջապիս համաձայնուրյուն է տալիս, որ նա մասնակցի ժողովարանի ներկայացումներին, ուր, բացի պրոֆեսիոնալ դերասաններից, հաճդես էին զալիս նաև բատերասեռներ: Զնայած ամուսնու դրած շատ իմաստ պայմաններին, թե զա միայն ժամանակավոր երեսուր պետք է կրի, թե միայն պառավների դերեր է խաղալու՝ Հասմիկի ուրախուրյանը շափ չկար:

Դա 1904-ի աշնանն էր:

Հասմիկն ասում է, թե այն օրը, երբ ինքը առաջին անգամ պետք է զնար ժողովարան, որպես բատերախմբի անդամ՝ «ամենից երկար ու ամենից բաղցը բապատճեների օրն է եղել» իր կյանքում: «Ճանապարհին,— պատմում է նա,— ամեն ինչ գեղեցիկ էր բիում ինձ և աշնանային մոայլ երկինքը, և նեղ փողոցները, և փողոցներով անցուղարձ անող մարդիկ»: Այդ օրը նա ծանրանում է Սարենիկ Զմշկյանի, Գեորգ Տեր-Գավրյանի, Գեղեն Միրաղյանի և, վերջապիս, Գարբիել Սունդուկյանի հետ, որի «Քանդած օշախի» դերարաշխումը պետք է տեղի ունենաւ:

Հասմիկին բաժին է ընկնում Քալիի դերը:

Անդրանիկի ներկայացումը շարդարացրեց Հասմիկի հույսերը:

Հասմիկը, որ երազում էր թեմ բարձրանալ, դժոն էր



\* \* \*

Սմուսինը, թե խիստ քարքի աեր էր, բայց սիրում էր կնոջը և նրա համար դժվար էր Հասմիկին տեսնել մըշտապես տխուր, անտրամադիր։ Տեղի տալով կնոց բախանձաներին, վերջապես համաձայնուրյուն է տալիս, որ նա մասնակցի մողովարանի ներկայացումներին, ուր, բացի պրոֆեսիոնալ դիրասաններից, հանդես էին զալիս նաև բատերասեռներ։ Զեայած ամուսնու դրած շատ խիստ պայմաններին, թե դա միայն ժամանակավոր երեսույթ պետք է կրի, թե միայն պառավների դերեւ է խաղալու՝ Հասմիկի ուրախութանք շափ չկար։

Դա 1904-ի աշնանն էր:

Հասմիկն ասում է, թե այն օրը, երբ ինքը առաջին անգամ պետք է զնար Ճողովարան, որպես բատերախմբի անդամ՝ «ամենից երկար ու ամենից բաղցը ըստ պատումների օրն է եղել» իր կյանքում: «Ճանապարհին,— պատմում է նա,— ամեն ինչ գեղեցիկ էր բիում ինձ և աշնանային մոայլ երկինքը, և նեղ փողոցները, և փողոցներով անցուղաք անող մարդիկ»: Այդ օրը նա ծանրանում է Սարենիկ Զմշկյանի, Գևորգ Տեր-Գավրյանի, Գեղենի Միրաղյանի և, վերջապես, Գարբիկ Սունդուկյանի նետ, որի «Քանդած օչախի» դերաբաշխումը պետք է տեսի ունենար:

Հասմիկինը բաժին է բնկնում Քալիի դերը:

Անդրանիկ ներկայացումը շարդարացրեց Հասմիկինույնը:

Հասմիկը, որ երազում էր ըեմ բարձրանալ, դժոնի էր

իր դերակատարումից, վշտացած էր, մի փոքր զառնացած, բայց ոչ ընկնված, մանավանդ որ Սունդուկյանը, շրաբցնելով իր անբավարավածությունը, թե խսկական Վալի չէր նա, միաժամանակ ասել է, որ շնորհի ունի, և խորհուրդ է տվել շարունակել խաղալ։ Այդ արդեն նռանամար ամեն ինչ էր։

Հաջորդ ներկայացումը Ալեքսանդր Արելյանի «Մարմող նրագներն» էին։ Կատարում էր մոռ դեր, և այս անգամ լավ, համենայնդեպս այնքան հաջող, որ ներկայացման առիրով գրված ոեցենզիայում,<sup>4</sup> թե՛ն կարեն, բայց շերմ խոսի էր ասլած նրա մասին, մի հանգամանք, որ ուրախություն էր պատճառել նույնիսկ ամուսնուն։

Իսկ մի օր էլ նա շեղվում է ամուսնու դրած պայմանից, և մինչև ներկայացման օրը նրանից գաղտնի, պատրաստվում է «Պեպոյի» մեջ Կեկելի դերը խաղալ։ Նա զիտեր, որ պիտի է կշտամբվի, խիստ նկատողություն ստանա, գուցե և բոլորովին գրկի թեմ բարձրահալուց, բայց հրամարվել չէր կամենում։ Նախ՝ հանդես էր զայլու այնպիսի ուժերի հետ, որոնք իրենց դերակատարումներով բոլորի կողմից անզուգական էին համարվում, իսկ մի բանիսը՝ պարզապես անմըցելի։ Պեպոյի դերը կատարելու էր Միհրաղյանը, Գիբոյինը՝ Տեր-Դավթյանը, Շուշանինը՝ Վարդուհին, Էփիմիայինը՝ Զմշկյանը, Զիմգիմովինը՝ Տեր-Գրիգորյանը։ Եվ հետո, կար ոզերության և մի այլ աղբյուր։ Սունդուկյանը անձամբ պարապում էր նրա հետ, ընտելացնում թիֆլիսահայ բարբառին, սովորեցնում Կեկելի երգի եղանակը։ Եվ եթե ներ-

կայացումից նետո, անակնկալի եկած ամուսինը սպաննում է, որ նույնը կրկնվելու դեպքում փակ կզանի տան դռներն իր առաջ՝ ապա Սունդուկյանը, ոգեռված երիտասարդ դերասանունու հաջողությունից՝ ոչ միայն խրախուսում է նրան, այլև ուրախությամբ արձանագրում այն փաստը, որ իր պիեսները խաղացող մի նոր սերունդ է առաջ գալիս:

Եվ, այնուամենայնիվ, Հասմիկը, եթե չէր կամենում բոլորովին գրկել քառորդից, այեսť է հաշվի նստեր ամուսնու հետ: «Սեր և խարդավանի» մեջ կատարում է Լոփայի մոր, «Կրեշինսկու հարսանիքում»՝ Ադուեայի դերերը:

Հետզինետե երիտասարդ դերասանունու կապերը քառորդի հետ ամրանում են, ծանրության շրջանակները լյանանում: Մանորանում է Օլգա Մայսուրյանի, Օլգա Գուլազյանի և, որ զիսավորն է, Հովհաննես Արելյանի հետ: Վերջինս՝ նոր քառերաշրջանից հրավիրում է նրան աշխատել Արախստական քատրոնում:

Դա 1906-ին էր:

Նույն տարվա գարնանը վախճանվում է ամուսինը, որը վաղուց հիվանդ էր բռնախտով: Չնայած ամուսնու սառնությանը, կնոշ ձգտումների նկատմամբ հարուցած արգելվներին ու խստություններին՝ Հասմիկը ծանր ապրեց նրա մահիը. ընտելացել էր, կապվել հետք, վերջապես՝ իր շորս երեխաների հայրն էր:

\* \* \*

«Աշնանը վերադառնալով Թիֆլիս,— պատմում է Հասմիկը,— անհամբեր սպասում էի Սրբելյանի հրավերին: Ես չէի կարող և իրավունք էլ շունեի մտածելու այն մասին, որ նա իր խոսքը կիրճի: Ո՞վ ստիպեց ինձ իր մոտ հրավիրել, նշանակում է և կկատարի, անպայման կկատարի իր խոսառութեա:

Վերջապես թերթեռում քատերական սեզոնն սկսելու հայտարարություններ լույս տեսան: Ամեն մի քառորդ հրապարակում էր իր ուսպերտուարը և խմբի անդամների ցուցակը:

Այդ թերթեռում ես առաջին հերթին Արտիստական քառորդի հայտարարությունն էի փնտռում, ինչ խոսք, հատկապես իմ անունը: Բայց... ավա՞դ:

Արտիստական քառորդի խմբի ցուցակի մեջ ես կարդացի՝ Սրբելյան, Գր. Ավետյան, Միրանույշ, Արաբոյան, Արամս, Գուլազյան, Վարդուհի, Զարիֆյան, Մայսուրյան, Զարեկ, Տեր-Գավրյան, Արշ. Հարությունյան, Աստղիկ<sup>5</sup>... Այդ անունները բոլորն ել ինձ ծանոր էին բացի վերջինից, այդ անունով գերասանուինու ես Թիֆլիսի ոչ մի քառորդում տեսած չկայի:

Իմ անունը շգտնելով խմբի կազմի մեջ, ես հուսանատվեցի ու մտեռում սկսեցի նախառել Սրբելյանին. «ամոր լեզ, պարոն Սրբելյան, մի՞րե մարդկանց նոզուու ու բախտի-հետ կխաղան,— ասում էի ինքս ինձ,— որին քատերական հասարակությունը բիշ թե շատ նանաշում

է, շնրավիրեցիր ձեր քառոնը, շնայած ինչդ էիր խոստացել իսկ նրավիրեցիր մի ուրիշին, որի ահունն անգամ դերասանական աշխարհին հայտնի չէ... Աստղիկ, Ի՞ն Աստղիկին էլ կահսնենք...»:

Եվ ես, ինչպես ասում են, նեռակայութեն ատել բակրսեցի այն Աստղիկին, որն (ինձ այդպիս էր քվում), ցուցակում բռնել էր իմ անվանս տեղը:

Կոտրված սրտով սկսեցի դարձյալ հաճախել ժողովարան, մասնակցել այնտեղի սիրողների խմբի ներկայացումներին:

Մի օր էլ, փորձի ժամանակ, փորձարան մտավ մեկը և, մոտենալով ինձ, մի գրուրյուն հանձնեց:

Դրաբերը Արտիստական քառոնի ցրիչն էր՝ Գեորգին:

Գրուրյունն Աբելյանից էր. նա ինձ Արտիստական քառոն էր նրավիրում: Իմ ուրախուրյանը շափ ու սահման չկար. «լավ է ուշ, բան երբեք», — նիշեցի ես ժողովրդական խոսքը և հույն օրը երեկոյան շարժվեցի դեպի Արտիստական քառոն»<sup>6</sup>:

Դրամատիկական ընկերության դերասանական խոսք ընդունվելը, Արտիստական քառոնի թեմում հանդես գալու հնարավորուրյունը նույն հորիզոններ էին լայնում երիտասարդ դերասանութու առաջ: Նա պետք է գործեր հայ ամենալավագույն դերասանների շրջանում: Աշխատեր նրանց ձեռքի տակ, սովորեր նրանցից, վերշապես, պետք է քեմ քարձրանար այդ դերասանների հետ, խաղակցեր նրանց, որոնց մեջ էր նաև անհավա-

սարելի Սիրանույշը: Այս հեռանկարը մի աննկարագրելի ոգեռությամբ էր համակել Հասմիկին, որը հույս ուներ սիրելի աշխատանքի մեջ իր վշտացած հոգու համար ափոփանք գտնել: Մինչդեռ հարեանները և հատկապես հանգուցյալ ամուսնու ազգականները կատաղի թշնաման բով ընդունեցին այն: Նրանք, ըստ եւեռույրին, համոզված էին, թե Հասմիկի հափշտակուրյունը բարեռնով՝ ‘անցողիկ’ մի բան է, որ միառժամանակից, որոց բավարություն ստանալուց հետո, պետք է անցներ, ամբողջապես տեղի տալով աստիճանաբար հոգսերի մեջ միշտնվող տանտիրություն առաջ: Համենայն դեպս, կարծում էին, որ ամուսնու մասիր նրան ուշի կրերեր, մինչդեռ նա ոչ միայն նրանց ուզածի պես շշարձվեց, այլև շատ ավելի վաղ, բան այդ բույլ էր տալիս ավանդական սովորույթը, մարդկանց մեջ եւեաց և թեմ բարձրացավ:

«Սենյակումս նստած լսում էի, — պատմում է Հասմիկը, — թե դրսում ինչպես էին բամբասում ինձ հարեվաններս:

— Մարդուն բաղեց, հանգստացավ, հիմա էլ երեխաններին անտեր բողեց ու գնաց մեյմուն դառնալու, — ասում էին նրանք:

Սպասեցեմ, մտածում էի ես, կապացուցեմ ձեզ բոլորիդ էլ, որ և դերասանութի կլինեմ, և լավ մայր:

Արտիստական բատրոն ընդունվելուց մի բանի օր անց մորեղբայրս եկավ ինձ մոտ, նախատեց, կովեց և վերշն ավելացրեց.

— Կամ ես, կամ բատրոնը:

Ես, իհարկե, քատրոնն ընտրեցի:

Ամուսնու եղբայրը, Սիմոն Հակոբյանը, նկարս, որ նվիրել էի նրանց, վերադարձեց ինձ, հայտնելով, որ քող էլ շնամարձակվեմ իրենց ազգանունով գրվելու, բանի որ շկատարեցի իր եղբոր վերջին խնդիրը:

Ամուսնու եղբայրը նկարս վերադանելով շրավարավեց. նա գնաց Արտիստական Ընկերության վարչուրյան նախագահի մոտ և պահանջեց, որ ինձ քատրոնից նեռացնեն:

Բայց իմ բախտից նախագահը նրան հայտնեց, որ ինքը ոչ իրավունք ունի նետաժրեվելու և ոչ էլ նետաժրերքովում է այդպիսի ընտանեկան հարցերով:

Այստեղ ես պարտվելով, ամուսնու եղբայրը նոր միջոցներ գտնելու մասին էր մտածում:

Ու մի օր ինձ լուր է հասնում, որ նա որոշել է սպանել ինձ: Նա այնպիս էր զազազել իմ դեմ, որ ամեն ինչ կարող էր անել: Ուստի ես ստիպված եղա դիմելու դատական պրիստավիճ, և վերջինս Սիմոն Հակոբյանից գրուրյուն վերցրեց, որ երե ինձ որեւէ վտանգ պատահի, ինքը պատասխանառվության կենքրարկվի:

Այստեղ էլ պարտվելուց հետո, Սիմոն Հակոբյանը, փողոցում, հենց դատական պրիստավի գրասենյակի առաջ, կանգնեցրեց ինձ ու զոռալով ասաց.

— Սպասիր, քատրոնում մեզ էնպես շլացնել տամ, որ ոչ միայն քատրոնը քողնես, այլև Թիֆլիսը:

Մորեղբայրներիցս ու Սիմոն Հակոբյանից հետո ինձ մոտ եկավ մորակուցս՝ դարձյալ նույն խնդրով:

— Կար արա, —ասաց նա, Թագումի ջան, կար ա-  
նելն ավելի լավ է, քան քատրոնը: Թող, հեռացիր էն-  
տեղից, նամուս ունեցիր, երեխաներիդ անտեր մի քող-  
իր: Ափսոս են նրանք:

— Ոչ, մորաբույր ջան,— խոսեցի ես,— առանց  
քատրոնի ապրել չեմ կարող:

Մորաբույրս էլ զնաց ինձնից խոռվ ու վշտացած:

Մնացի համարյա թե մենակ, ինձնից երես դարձրին  
բոլոր բարեկամներս ու հարեաններս<sup>7</sup>:

Ազգականներից միակ մարդը, որ չլից Հասմիկին,  
այլ ընդհակառակը, նրա կրած տառապանքների ժա-  
մանակ բաշալերում էր, զոտեպնդում նրան՝ ամուսնու  
եղբորորդին՝ Ալեքսանդր Հակոբյանն<sup>8</sup> էր, որ անցյալում  
էլ, դեռևս ամուսնու կենդանության տարիներին փոխ  
դեր չեր խաղացել՝ նրան քատրոնի նեա կապելու համար:  
Այդ պատճառով էլ Հասմիկը նրան միշտ նիշում էր սի-  
րով, երախտագիտության զգացումով, որովհետեւ զուցե  
միայն իրեն՝ Հասմիկին էին հայտնի, թե ինչ նուանատ  
վայրկյանների է նա վրա հասել և մի բաշալերիշ խոս-  
քով, զործուն միշտամությամբ ետ մղել երիտասարդ դե-  
րասանումուն հոգեկան կյանքի ծանր պահերից, շատ  
անգամ ոչ միայն թեմից, այլև կյանքից հրաժարվելու  
հակատագրական վեհոր կայացնելիս:

\* \* \*

Հասմիկը որոշում է ամուսնու հիշատակը նարգած՝  
լինելու համար պահպանել նրան տված խոստումը, խա-  
ղալ միայն պառակ կանանց դերեր: Երկու պիես միա-  
ժամանակ պետք է պատրաստվեր— «Թուգան» և  
«Տանյոր տարեկաններ»: Երկուսի մեջ էլ նա պետք է  
խաղար. «Թուգան» պիեսում իշխանութու, իսկ երկրու-  
դում՝ աւանվեցամյա մի աղջկա դեր: Խնդրում է, որ  
վերջինիս փոխարեն իրեն արվի դայակի՝ չորս-հինգ  
բարից բաղկացած փոթիկի դերը: Սակայն այդ երկար  
չի տեսում. Արելյանը և Ալիխանյանը նրան խորհուրդ են  
տալիս հանդես զալ ամենաբազմազան բնույրի դերե-  
րով, խաղալ և պառավների, և երիտասարդների դերեր,  
և կոմիկական, և դրամատիկական կերպարներ: «Դերա-  
սանը պետք է բոլոր դերերն էլ խաղա, մինչև որ իրեն  
գտնի», — ասել է Արելյանը Հասմիկին: Վերջինս, մտա-  
ծելով, որ բարենի նետ իր կյանքը մշտապես կապե-  
լով պարտապոր է մտանողվել իր ապագայով, և հա-  
մոզված, որ Արելյանի տված խորհուրդը նիշտ է և իր  
առաջըստիմուրյան շահը պահանջում է փոխել նախկին  
որոշումը՝ սկսում է կատարել նաև երիտասարդ կա-  
նանց դերեր: Եթե Սունդուկյանի «Թաղնրսի Բոխչայում»  
այնուամենայնիվ խաղում է Թալալի սկեսող՝ Կատա-  
րինեի դերը, ապա «Եվ այլնում»՝ Նինո, «Սեր և ազա-  
տուրյան» մեջ՝ Նատո, մանավանդ որ պիեսի հեղինակը,  
ինչպես պատմում է դերասանութին, նատոյի դերը գրե-

լիս նկատի էր առել Սպիտակ ծաղկին, այսինքն՝ Հասմիկին, ինչպես սովորաբար կոշում էր նրան:

\* \* \*

Հասմիկը քատրոնի նետ վերջնականապես կապվեց 1905 թվականի նեղափոխության տարիներին: Դա մի շրջան էր, երբ նայ զեղարվեստական ինտելիգենցիայի դեմոկրատական նատկածքը պրոֆեսիոնալ դերասանական քատրոնի կողմին ստեղծում էր քանվորական-արենստավորական ուժերից կազմված քատերախմբեր, որոնք նպատակ ունեին մատչելի ներկայացումների միջոցով ժողովրդական լայն զանգվածները կապել քատրոնի նետ:

Հասմիկի առաջին բայլերը կապված են նայ քատերական կյանքում առաջացած այս շարժման նետ, որ նոր էր անդրկովկասյան իրականության մեջ և ծնունդ էր առել 19-րդ դարի վերջերից՝ ազատագրական շարժման ասպարեզ մտած նոր ուժի՝ պրոլետարիատի մղած դասակարգային պայմանագրի ազդեցությամբ:

Շատ է կարենու և այն հանգամանքը, որ առաջին դերասանները, որոնց նետ Հասմիկը շփվել է ասպարեզ մտնելուց նետո, որոնց ազդեցությունը նրա վրա բնականաբար պետք է անխոստափելի լիներ, Գեորգ Տեր-Դավթյանն էր, Վարդուհին, Գեղեն Միրաղյանը, այսինքն ուժեր, որոնք կազմում էին նայ քատրոնի դեմոկրատական թեր:

Այս դերասանները, ինչպես և միշտ հետո Հովհաննես Սքելյանի հետ ունեցած ծանորուրյունն ու գործունեուրյունը, շատ կարևոր դեր են խաղացել Հասմիկի կյանքում, վեռական նշանակուրյուն ունեցել նրա բմբոնումների, նաշակի, թեմական արվեստի, ընդհանրապես բարոռնի մասին ունեցած նայացքների ձեւավորման ու զարգացման գործում: Եվ Հասմիկը սկզբից, ինչպես և նրանցից մի ժամկի տարի սուազ Օլգա Գոլազյանը, միացավ հայ դերասանների հենց այդ խմբին:

Հասմիկը շնափշտակվեց կեղծ ոսմանտիկական խաղանով, որի նամար բնորոշ էր պողայնուրյունը, ընդհանրապես արտակին պատկերայնուրյունը, կեղծ պարետիկական, երգեցիկ, լալկան ինտոնացիան, մի խաղանե, որին գերի էին նաև մի շարժ նույնիսկ տաղանդավոր դերասաններ և որով սովորաբար հետպուրվում էին բարոռն ոտք դրած նորեկ դերասանները մեծ մասմբ:

Հասմիկի հոգերանուրյանը, դեմոկրատական աշխարհազացողուրյանը թեմական արվեստի այս ոճը խորը էր: Նրան շատ ավելի մոտ ու հարազատ են եղել այն դերասանները, որոնք թե իրենց գործունեուրյամբ, թե ստեղծագորուրյամբ միշտ էլ բարձր են պահել ժողովրդական բարոռնի ուսալիստական տրադիցիան:

Թատերական գրականուրյան մեջ արտահայտված այն միտքը, թե Հասմիկը թեմ բարձրանալով, թեև երիտասարդ ու անփորձ, որևէ ազդեցուրյան չի ենթակվել հիմնովին սխալ է<sup>9</sup>: Նա կողմնորոշվեց, բայց, ինչպես

ասվեց, կողմնորշվեց դեպի խորապես ռեալիստական, ժողովրդային արվեստի ներկայացուցիչները, հատկապես Դերգ Տեր-Դավթյանը և Վարդումին: Հասմիկին կաշառում էր նրանց խաղի բնականուրյունը, խոսակցական ինտոնացիան, իրականուրյան զգացողուրյունը, պարզ խաղի տակ քանի վաճառքած անկեղծ ապրումը, նույնուրը, բնավորուրյուն կերտելու վարպետուրյունը, սուր դիտողականուրյունը, ժողովրդական տիպեր նաև աշելը, կենցաղի, կոլորիտի զգացումը և այլն:

\* \* \*

Սունդուկյանի դրամատուրգիան ինչպես անցյալներում, այնպես էլ այդ ժամանակ, և ինարկե նաև նետո, ընդհանուած մինչև մեր օրերը, մի ժամի դերասանական սերունդ է կրել ռեալիզմի ոգով: Հասմիկի տաղանդի կազմավորման ու ամրապնդման գործում Սունդուկյանի պիեսները ևս վճռական նշանակուրյուն են ունեցել<sup>10</sup>:

Սունդուկյանը միշտ էլ էական դեր է խաղացել յուրաքանչյուր նոր և ժիշ թե շատ նույս ներշնչող նորեկ դերասանի կյանքում: Հասմիկին էլ, ինչպես տեսանն, ոգեստել է նա, ժաշալերել, խորհուրդներ է տվել, օգնել ու բացատրել: Դերասանումին երախտագիտուրյամբ է նիշում, թե ինչպես նա, նարազատի նման, ուժ ու վրատահուրյուն է ներշնչել իրեն, առաջին անվստան ժայլերի շրջանում:

Սունդուկյանի այդ վերաբերմունքը Հասմիկի, ինչ-

պես և մի բանի տարի առաջ Օլգա Գուլազյանի նկատմամբ, չպետք է բացատրել միայն նրանով, թե բատերական ասպարեզ ճոր ուժ դրած այդ երկու երիտասարդ դերասանութինների մեջ նա տեսել է շատ ավելի կարողություն, բան կարելի էր նկատել առաջին հայացքից: Այստեղ, պարզապես, դրամատուրգը Հասմիկի և Գուլազյանի ստեղծագործական անհատականությունների մեջ տեսել է այնպիսի նախադրյալներ, որոնք իրավունք են տալիս հուսալու, որ ի դեմս նրանց, նայ բառոնք ձևով է բերել 60-ական բվականներից եկող ունալիստական-ազգային բեմական արվեստի տրադիցիաները շարունակող մի ճոր սերունդ:

Այսպիսով, մի կողմից Տեր-Դավթյանն ու Վարդուհին, մյուս կողմից Սունդուկյանն ու Աբելյանը եղան բատերական կյանքի ասպարեզը ճոր մտած երիտասարդ դերասանություն առաջին ուսուցիչները:

\* \* \*

Որքան էլ նաշողակ էր Հասմիկը Սունդուկյանի պիեսներում և որքան էլ նայ մեծ դրամատուրգը զո՞ն լիներ նրանից, միենույն է, նա չէր կարող իր ստեղծագործական բախտը կապել միայն Սունդուկյանի դրամատուրգիայի նետ: Գերասանություն սերնդակիցները, Աբելյանի գլխավորությամբ, իրենց անունը կապեցին նայելնի դրամատուրգիայի մի այլ խոշոր դեմքի՝ Շիրվանգաղեկի նետ:

ինչպես 60—70-ական թվականների դեռասանական սերունդը՝ Դեռգ և Սարինիկ Զմշկյանները, Միհրդատ Ջմրիկյանը, Քերեան Արամյանը և ուրիշները Սունդովյանի պիեսների բեմական տրադիցիայի հիմքը դրին, այնպես էլ 900-ական թվականներին՝ Շիրվանզադեի մեկը մյուսի ետևից ասպարեզ եկած պիեսների բեմական տրադիցիան հաստատվեց Արելյանի, Ավետյանի, Հասմիկի և ուրիշների շանհերով:

Շիրվանզադեն եղավ այն դրամատուրգը, որի պիեսներում մի առանձին փայլով դրսեռովեց Հասմիկի ըստեղծագործական ուժը:

Թատերական ժննադատուրյունը սկզբից էլ համակրությամբ է արտահայտվել Հասմիկի մասին: Նույնիսկ առաջին խաղը՝ Քալիի դերակատրումը, դրական գնահատուրյան է արժանացել: Մինչև Շիրվանզադեի պիեսներում հանդես գալը թե մամուլի, թե բատերական հասարակայնուրյան և նույնիսկ բատերական գործի դեկավարների համար Հասմիկը բնդունակ երիտասարդ մի ուժ էր, որ իր ազնիվ բարեխղճնուրյան շնորհիվ շի տապալել ստանձնած թեկութ և երկրորդական դերերը:

Ժամանակակիցներից մեկը՝ Անոն Քալանքարը, Հասմիկի մասին գրած իր մի ուշագրավ հոդվածում, հիշելով դերասանութու բեմական կյանքի առաջին տարիները, ասաւմ է. «Ո՞վ կարող էր այն ժամանակ կունենալ, թե ինչ ուժ է կուտակված խուզ ձայնով, նիմար այդ կնոջ մեջ»<sup>11</sup>: Այդ կարծիքին չէր միայն Սունդովյանը, որի

փորձված և խորարափանց հայացքը սկզբից էլ շատ ավելի մեծ կարելիուրդուններ էր տեսնում բաքնված այդ գեղեցիկ ու համեստ, նույնիսկ փոքր ինչ բաշված, նընշված կնոջ մեջ<sup>12</sup>:

Թատերական բննադատուրյան մեջ երթեմն նրա մասին դրական, նույնիսկ զովեստի խոսք է ասվել. այսպիս օրինակ՝ «Բաղնըսի բոխչա» ներկայացման կապակցուրյամբ Հասմիկի մասին գրվել է. «Տիպի բական էր և խելացի նույնպես տիկ. Հասմիկի խաղը: Հասմիկը առանց շափազանցուրյան մեջ ընկնելու հարազատ կերպով ներկայացրեց սպավոր մոր՝ թալալի սկեսուրի՝ Կատարինեի դերը, արտահայտելով նրա վիշտը և ներկայացնելով սուզը»<sup>13</sup>: Մի այլ անգամ էլ, դրական է գրնահատվել նրա խաղը կմմայի («Արշալույս»), Մարզարիսի («Պատմի համար»), Թագուհու («Համլետ») և այլ դերերում:

Ընդհանուր կարծիքն ու տպավորուրյունն այն էր, որ Հասմիկը բեմի շարժային գործիչներից է, անպայման օգտակար ուժ, մեկը նրանցից, որ միշտ եղել են և կլինեն առանձին մեծուրյունների շուրջը, որոնք, սակայն, երբեք խոշոր դեմքեր չեն դառնում: Բայց մասնակցուրյունը Շիրվանզաղեի պիեսների բեմադրուրյանը և հատկապես երկու դերակատարում՝ Շպանիկ («Նամուս») և Զառնիշան («Զար ողի») միանգամից փոխեցին Հասմիկի նկատմամբ եղած կարծիքը:

Թատերական բննադատուրյունը Շպանիկից և մանավանդ Զառնիշանից հետո բոլորովին այլ կերպ սկսեց

արտահայտվել Հասմիկի մասին: «Հասմիկը միջնորդ կնոց դերում,— կարդում ենք «Նամուսի» անդրանիկ ներկայացման մասին գրված հոդվածում,— շատ հաջող էր, սրամիտ, շարժուն և բնորոշ»<sup>14</sup>: Երա այդ խաղի մասին գրվել է նաև հետևյալը. «Դեղեցիկ էր տիկ. Հասմիկը (Շպանիկ): Սյս դերասանութին առնասարակ շատ շնորհի էր կատարում կենսուրախ դերեր, և ամեն անգամ էր առողջ ընդունակուրյուն է ցույց տալիս»<sup>15</sup>: Մի այլ ներկայացման առքիվ, երբ նա միաժամանակ կատարում էր երկու դեր, ասվել է. «Տիկ. Հասմիկը նույնապես աշող էր Մարիամի դերում, բայց այդ գիշեր մի սիրուն մեստով կրկին փայլեց իր Շպանիկով, և հարսանիքի տեսարանն անցավ սահուն ,աշխույժ ու կենդանի՝ բացառապես շնորհի առ Հասմիկի»<sup>16</sup>: «Սյս սեզոնում նրա խաղացած Շպանիկը («Նամուս») միանգամայն հիացրեց մեզ»<sup>17</sup>, — գրում է մի ուրիշը:

Զառնիշանի դերակատարումն ամրապնդեց Շպանիկի խաղով ձեռք բերված հաջողուրյունը:

Որքան էլ Հասմիկը կարողանում էր փոքր դերից զգալի արդյունքի հասնել ,այնուամենայնիվ Շպանիկը դերասանութիւն ծավալվելու և իր հարուստ, մինչ այդ շարտահայտված տվյալները դրսեութելու լայն հնարավորյուններ չեր ընձեռում: Անա այդ իմաստով էլ առանձնակի դեր խաղաց երա սակագործական կյանքում Զառնիշանի կերպարի բեմական մարմնակորումք: Թատերական ժննադատուրյունը միարեան զովես-

առվ արտահայտվեց Հասմիկի նոր դերակատարման մուսախն:

Եթե սկզբում միայն ասվում էր, թե Հասմիկը Զառնիշանի դերում կարողացել է արտահայտել «կենսական գծեր և նիշտ հոգեբանական ըմբռնումներ»<sup>18</sup>, ապա հաջորդ ներկայացումների առրիվ գրված ուցենազիաներում ասվում է, թե աննման է, որ «հազիվ թե մեկ ուրիշին հաջողվի գծել Զառնիշանի դեմքը այն կենդանուրյամբ, ուղիսին տվեց նա այդ գիշեր»: Մի այլ ժննադատ էլ գրում է. «Ես նրենիցի տեսնելով Միրզոյանի և մանավանդ Հասմիկի խաղերը...»<sup>19</sup>: «Չար ոգու» մի ներկայացման կապակցուրյամբ ժննադատուրյունը ողջունել է բարերնի դեկավարուրյան առողջ ձգուումը՝ համեմատաբար փոքր դերերն էլ հանձննել փորձված, «շափազանց կարող ուժերի և դրանց մեջ ամենից առաջ Հասմիկը (Զառնիշան)»: Հասմիկն այնքան հաջողակ էր Զառնիշանի դերը կատարելիս, որ ստվերի մեջ չէր մնում և այն դեպքերում, երբ Գիծ-Գանելի՝ շահնեկան դերով հանդես էին գալիս Հովհաննես Արելյանի կամ Հովհաննես Զարիֆյանի նման դերասաններ: «Շատ հաջող էին և տիպիկ,— գրում է մի ուցենազենտ, — տիկ. Հասմիկը Զառնիշանի, պլ. Արելյանը Գիծ-Գանելի դերերում, մանավանդ առաջինը, որը միակն է նայ թեմի ուժերից՝ գյուղական տիպեր ստեղծելու մեջ»: Դերասաններից մեկը, որ հետևել է Հասմիկի ստեղծագործական անին, իր հուշերում գրում է. «Ես Հասմիկով հիացած նետո, եր նրան տեսա մի շարք կանացի կենցաղային դերերում:

Թերեւս ոչ մի դերասանունու խաղից չեմ հաւգիլ ու առքեցել այնքան, որքան նրանից: Շպանիկ («Նամուտ»), Զառնիշան («Չար ոգի»), Սիրվարդ («Դատաստան»). այս երեք գերեւն իմ սերը հասցրին պաշտամունքի»<sup>20</sup>!

Հասմիկի խաղից առանձնապիս մեծ տպավորություն է րողել անեծքի տեսարանը: Մի բննադատ, օրինակ, գրել է. «մանավանդ շատ գեղեցիկ տարավ իր դերը տ. Հասմիկը, որ գրեթե աննման էր անեծքը արտասանելու բովին»<sup>21</sup>: Այդ հաստատում են և այլ բննադատներ: «3-րդ գործ. մեջ,— կարդում ենք մի հոդվածում.— անեծքը գրված է շափազանց վարսելու կոլորիտով, Զոլայի մանվածությունով, տիկ. Հասմիկը արտասանեց կլասիկ բարձր շեշտով, շնչառատ, անկեղծ, ցասումով ու շափազանց նուրբ շերտերով և առաջ բերեց մեծ ոգեռություն»: Որ անեծքի տեսարանը Հասմիկի խաղի խկապես ամենաբարձր կետն է եղել՝ հաստատվում է նաև այն վկայությամբ, որ րողել են այդ դերում Հասմիկին շատ անգամ տեսած բատերագետները, բայ ուրում այն բախտավոր առավելությամբ, որ նրանք անսել են նրա Զառնիշանը և անցյալ, և սովորական բատրունում: Գրանցից, օրինակ, Ս. Մելիքսերյանն ասում է, թե Հասմիկը «անեծքի տեսարանն իր ուժգնությամբ հասցնում էր ցնցող շափերի և հանդիսականին ստիպում շունչը պահած, ինչ-որ մի երկյուղ սրտին, նետել նրա խաղին, խոսերին»<sup>22</sup>:

Դուն էր և Շիրվանզադեն .նա այն համոզմանն էր, թե Զառնիշանի դերը Հասմիկը այնպես է խաղացել, որ

կերպարի առժեքն ավելի է մեծացել, քան ինքը այդ կարող էր ենթադրել<sup>23</sup>:

Հասմիկի այս դերակատարումները հանդիսատեսին կաշառում են նոգերանական նիշտ ըմբռնումով և կենսական նշանաւորացիուրյան նազեցվածուրյամբ: Նա հանդես է բերել իրեն մանկուց լավ ծանոր գավառական նախապետական իրականուրյան զգացողուրյուն, գտնելով յուրահատուկ և բարձ գույներ՝ համապատասխան կոլորիտ արտահայտելու համար:

Հասմիկը միանգամից դասվեց այն դերասահների շարքը, որոնք նանաչված էին որպես Շիրվանզադեի դրամատուրգիայի բեմական տրադիցիայի նեղինակներ:

Հասմիկը, ինչպես և Գրիգոր Ավետյանը, Արշակ Հարուրյունյանը, Օլգա Գուլազյանը և մյուսները, Սունդուկյանի դրամատուրգիայի բեմական յուրացման գործում ժառանգեցին իրենց նախորդների մշակած տրադիցիան: Ի դեմս նրանց, կազմակորվեց սունդուկյանական բատրոնի երրորդ սերունդը: Բայց որում նրանցից մի բանիսը, առանձնապես Հասմիկը և Գուլազյանը, նետագայում սովորական բատրոնում կարողացան այդ տրադիցիան բարձրացնել մի նոր և անհամեմատ բարձր աստիճանի: Եվ, այսպիսով, նրանց անունը մշակապես կապվեց սունդուկյանական բատրոնի նետ: Սյունինետե նիշյալ դերասահները զործի այդ հատվածում որպես ուրիշներին շարունակող, խորացնող լինելով, Շիրվանզադեի դրամատուրգիայի բեմական յուրացման ժամանակ արդեն սկզբնավորող եղան, տրադիցիայի հիմքը դրին, եղան

այն առաջին կատարյալը, որից օրինակ առան ուրիշները<sup>24:</sup>

Հետագայում, Գիծ-Դանելի, Բարխոսպարի, այդ բվուն  
նաև Էլիզբարովի<sup>25:</sup>, ինչպես և Սաղարելի ամեն մի նոր  
դերակատար անկարող եղավ խոսափել Սքելյանի և Ա-  
վետյանի ազդեցուրյունից, այնպես էլ Զառնիշանի և  
Շապանիկի հետագա բոլոր կատարումների նլակեառ  
Հասմիկի խաղն էր:

Հենց միայն այն, որ հազիկ մի ժանի տարվա դերա-  
սանունի լինելով, Հասմիկը կարողացալ թեկուց և երկու  
դեր այնպես խաղալ, որ օրինակ լինի ուրիշների համար,  
վկայում էր, որ հայ բատրոն է մտել մի լինենատիպ  
դեմք, անուրանալի տաղանդով օժտված մի դերասանու-  
նի,, որը դերից-դեր անում, ամրապնդվում է, և որին  
անկասկած մեծ ապագա է սպասում:

\* \* \*

Հասմիկը, որպես բեմական ուժ, արդեն խոկ 10-ա-  
կան բիգականներից սկսում է զրադեցնել բատերագիտա-  
կան միտք: Քննադատուրյունը ստիպված էր ընդունել,  
որ ինքը չի կարողացել հենց սկզբից նիշտ որոշել դերա-  
սանունու ստեղծագործական անհատականուրյունը, նրա  
հնարավորուրյունները և այլն: Արդյո՞ք դա չի հաստա-  
տում Գարեգին Լևոնյանի այն խոստովանուրյունը, թե  
«մենք»<sup>26:</sup>, զուցե և շատերը, սկզբներում միշտ տեսնելով  
տիկնոջը համեստ, անաղմուկ դերերում, ուշադրուրյունից

փախցրել ենք»<sup>27</sup>: Շպանիկից և Զառնիշանից նետո նա-  
նանաշվում է, ընդունվում այնշափ, որ դասվում է նույ-  
նիսկ այն դերասանների շարքը, որոնք «վաղուց են հայտ-  
նի հասարակուրյանը»: Սակայն հարցն այդ չե: Հոշակիե-  
լուց նետո էլ նրա շուրջը մի առժամանակ շիար միաս-  
նական կարծիք: [Օրինակ, Յա. Գորդինի «Մեր և մահ»  
պիեսի ներկայացման կապակցությամբ Հասմիկի մա-  
սին գրվել է, թե «տիկինն ունի, իրավ, բեմական ընդու-  
նակուրյուն, սակայն նրա մեջ չկա սաեղծագործական  
րել»<sup>28</sup>: Մի այլ բննդատ էլ, անդրադառնալով Հասմիկին,  
և Վիլյենբրուսի «Արտույտ» պիեսի առիրով ասում է,  
թե «մենք նետեել ենք տ. Հասմիկի խաղերին՝ ամենա-  
բազմազան դերերում: Սակայն բազմարիվ դերերից ոչ  
մեկը չի եղել այն նյուրը, որից տիկինը կարողանար մի  
ուլյեփ, ամբողջական, հանդիսականի նիշողության մեջ  
մնացող բեմական երեսով ստեղծել»: Քննադատը այդ-  
պիսի երեսով է համարում նենց այդ ներկայացման մեջ  
արտույտի, այսինքն երիտասարդ բանվորունու՝ կենայի  
դերը: «Կենան այդպիսի մի երեսով հանդիսացալ», —  
գրում է նա: Հոդվածագիրը վրիպումներ է տեսնում դե-  
րասանունու խաղի մեջ, դիտողություն անում, որ նրա  
«կենան շատ էր պարզամիտ, բայց համեմատաբար սա-  
կավ կենսութախ»: Չեայած դրան, նա այն համոզումն է  
հայտնում, որ դերակատարումն ընդհանրապես հաջող-  
ված է, որ «դա տ. Հասմիկի սեփական գործն էր և տի-  
կինը կարող է ամենութեք և ամենայն վստահությամբ  
ցուցադրել այդ գործը»:

Եվ որքան էլ Հասմիկի շուրջ եղած բննադատական դատողությունները տարուրերվում էին, այնուամենայնիվ գտնվում են այնպիսի բննդատներ, որ դեռ այն տարիներին կարողանում են նիշտ գնահատել Հասմիկի բեմական կարողությունը, գտնելով, որ նա ընդհանրապես թերագնահատված է, որ նրան չի տրվում գործունեության այնպիսի ասպարեզ, որին նա խսկապես արժանի է:

Ժամանակին նման դատողության առիր է տվել Վ. Սարգուի «Կախարդումի» վերնագրով պիեսը, որ Հասմիկը խելազար գեղջկումու դեր կատարել է, ինչպես բըննադատությունն է արձանագրել՝ «անսպասելի կերպով, ուղղակի վարպետորեն»<sup>29</sup>: «Ինչո՞վ բացատրել այն, — գրում է Անն Քալանքարը, — որ տարիների ընթացքում խմբում կա անկասկածելիորեն հետաքրքրական ընդունակություններով օժտված դերասանուին, որին, սակայն, տարիներ շարունակ հնարավորություն չի տրվել մազաշափ անգամ արտահայտվելու»<sup>30</sup>: Նույն բվականին մի այլ բննադատ «Զար ոգու» հերքական ներկայացման կապակցությամբ բացահայտում է Հասմիկի արվեստի առանձնահատկությունները, բարձր գնահատելով նըրանց հիմքը՝ անխառն ուսալիզմը, և «տիկինը մի եւենի ուժ է, և իր դերերի մեջ պատիվ կարող է բերել բեմին: Նա ազատ է արհեստականությունից, փիլիսոփայական համակերպումներից, արհեստական շարժումներից ու միմիկայից: Նա առօրյա, սովորական մանկանցու է

բեմի վրա, և նենց այդ պարզության մեջ էլ իր տիրապետությունը նայտարարեց քեմին»:

(Տարիներ անց մամուլը նորից է բարձրացնում Հասմիկին, նրա ունեցած ննարավորությունների նամեմատ օգագործելու նարը: «Անա մի դերասանուինի, — կարդում ենք մի նողվածում, — որի ուժերը, դժբախտարար, շատ ավելի նամեսատ շափով են գնահատվել: Նա ավելին կարող է անել, նան ինչ վստահում են նրան. նա ավելին կարող էր դառնալ լավ պայմաններում, նան իսկապես դարձել է: Հավանուեն սրան «առաջ շեն բաշել». մի բան, որ այնքան նակատագրական է քեմական կյանքում... ամենաշնչին դերից էլ նա մի բան է ստեղծում, որոշ ոգի է ներշնչում դերին»<sup>31</sup>:

Այսպիսով, ուրեմն, ի պատիվ մեր անցյալ քառերական բննադատության, կարող ենք ասել, որ Հասմիկի մեջ նա անսել է ոչ միայն դրսեռվածք, այլև այն, ինչ կար, քայլ դեռևս արտահայտություն չեր ստացել, միայն պոտենցիա էր և ննարավորություն: Անկախ նըրանից, թե Հասմիկին արված քնորշումները ավյալ դեպքում որ շափով են նիշտ՝ բննադատները ազնիվ վրդովմունքով դերասանունու ստեղծագործական իրավունքների և շահերի պաշտպան են կանգնել:

\* \* \*

Հայտնի է, թե ինչպես քեմական տախտակամածը երազով շատ երիտասարդներ, չկարողանալով միանգա-

մից տեղավորվել պրոֆեսիոնալ քատրոնում, հանդես են եկել ժողովրդական ինքնազործ խմբերում: Զեռք քերած առաջին խոկ հաշողություններից նետո, հրավիրվելով Արտիստական քատրոն, խապան հրամարվել են ժողովրդական ինքնազործ խմբերից, չկամենալով անգամ հիշել դրանք, որպես իրենց անդրանից բայլերի ասպարեզ:

Հասմիկը, և ոչ միայն նա, բոլոր այն դերասանները, որոնք քատրոն էին եկել ժողովրդի միջից, երախտազիտուրյան սրբազն զգացումով էին հիշում ժողովրդական ինքնազործ խմբերը և աշխատում պահել իրենց կապը նրանց նետ:

Հասմիկը մի ժամփ տարվա դերասանութիւնը, որ Թիֆլիսում, 1909-ին կազմակերպվեց - ժողովրդական տունը: Ժողովրդական տունը, ուր կողմ-կողմի, ձեռն-ձեռնի տված գործում էին հայերն ու վրացիները, ոստ-ներն ու ուկրաինացիները, իր գործունեությամբ, մահավանդ առաջին շրջանում, հակադրվեց գրականության և արվեստի ասպարեզում աշխուժացած բուժժուական անկումային տրամադրություններին:

Դրա համար էլ առաջավոր հասարակական միտքը պայմանում էր, որ ժողովրդական տանը պատահական մարդիկ տեղ չգտնեն, որ նրա շուրջը, ընդհակառակը, համախմբվեն այնպիսի ուժեր, որոնք, Սուրեն Սպանդարյանի արտահայտությամբ՝ «իրենց անմիջական նրա պատակն են դրել ժողովրդական լայն մասսաների լուսավորությունը և նոգեառ աստիճանի բարձրացումը»<sup>32</sup>:

Դա մի օջախ էր, ուր եղբայրաբար համազործակցում  
էին ժողովուրդները՝ որպես պատասխան ցարիզմի  
կողմից նեանուվող ազգայնական կրթերին:

Ժողովրդական տանը գործում էին զլխավորապես  
քատերասեր ուժեր՝ աշխատավորական խավերից: Նյու-  
րական ոչ մի շահագրգուժածուրյուն չունենալով, բայց  
անսահման սիրելով բեմը, երանք եռանդուն ոգեռու-  
րյումը նվիրվել էին քատերական գործին: «Սիրողների  
մեծ ժամը, — նիշում է Հասմիկը, — պրոֆեսիոնալ քա-  
տերական աշխատողներ շեն, որովհետեւ այն ժամա-  
նակ, անզամ անուն հանած դերասանը հազիվ էր կարո-  
ղանում մի կերպ զլուխը պահել քատրոնից ստացած  
շնչին տշխատավարձով: Այդ սիրողներից ոմանք էլ արհեստավոր-  
ներ ու քանդուրներ, մարդիկ, որոնք քատրոնն այնքան  
էին սիրում, որ օրվա նոգնեցուցիչ աշխատանքից հետո  
գալիս էին քատրոն՝ իրենց սիրած գործին ծառայելու  
համար»:

Ժողովրդական տան ոեպերտուարն էլ յուրահատուկ  
էր. ներկայացնում էին զլխավորապես ոեալիստ, ժողո-  
վրդին մոտ ու հասկանալի դրամատուրգներին, ինչպես  
Սունդուկյան, Շիրվանզադե, Օստրովսկի, Գոգոլ, Գորկի,  
Ցագարելի և ուրիշներ:

Ժողովրդական տան ներկայացումներին քատերա-  
սերների հետ հանդես եկող դերասաններն էին Վարդու-  
հին, Գեղինը Միրալյանը, Զարելը, Օվի Սեումյանը, Օլ-  
գա Գուլազյանը և ուրիշներ, դերասաններ, որոնց գոր-

ծունեուրյան մեջ միշտ էլ ձգտում է դիտվել դեպի ժողովրդական առդիտորիան:

Անու այս դերասանների շարժումն էր նաև Հասմիկը. նա մասնակցում էր այդ մեծ գործին, նրանք վելով իրեն հասնող վարձատրությունից. և այդ այն ժամանակ. երբ նյուրական կարիքը նրանից անբաժան է եղել: Ժողովրդական ներկայացումներին մասնակցելը Հասմիկը համարում էր իր սրբազն գործը: Նա, ինչպես ժամանակակիցներն են վկայում, եռանդով և ոգեռությամբ էր գործում:

Այսպիս էր նա ոչ միայն մինչև նոչակվելը, այլև այն տարիներին, երբ արդեն բավական մեծ համբավի տեր էր:

Աշ մի բան չէր կարող նրան կտրել ժողովրդական տնից: Արախտական բատրոնի ղեկավարները Հասմիկին շատ են համոզել քողնել ժողովրդական տունը, ուժերը շշլատել, լինել ավելի խոնիս և նեռատես, անունը շկապել բատերասեռների նետ, բնդիանրապիս մի բատրոնի նետ, որը «ժողովրդի նաշակն է փշացնում» և այն և այն: Սակայն ոչինչ չէր կարող Հասմիկի համոզումը փոխել: Նա անդրդպելի մնաց նույնիսկ այն ժամանակ երբ փորձ արին այդ նոդի վրա հրապարակով նրան վարկարեկելու: Նախ փորձեցին ժողովրդական տունը վարկարեկել Հասմիկի աշխում: Զազդեց: Հետո փորձ արին Հասմիկին վարկարեկել ժողովրդական տան գործիչների աշխում: Դա էլ չազդեց: Այդ ոտնձգությունը նրա նեղինակների համար միանգամայն անսպասելի կերպով

նիշտ հակառակ հետեւանքները տվեց: Թատերական հասաւակուրյունը, հատկապես նրա դեմոկրատական խաղը, մամուլը, նրա գործակից բնկերները ոչ միայն պաշտպանեցին Հասմիկին, այլև ներկայացած առիրն օգտագործեցին մեծարելու նրան. «Նրա անունը, — գրում էին նրանի, — սերտ կերպով կապված է ժողովրդական ներկայացումների հետ, որտեղ տարիներ շարունակ ձրի, կամ չափ շնչին վարձառությամբ սիրով մասնակցել է և շարունակում է մասնակցել բուռն եռանդով»:

Ամեն անգամ, երբ Հասմիկի առաջ հարց է բարձրացել՝ Արտիստական բարոռն, թե ժողովրդական տուն, ապա նա, շնայած առաջինի հոչակին, միշտ էլ նախապատվուրյունը տվել է վերջինիս:

Բնորոշ է հետեւյալ փաստը:

Արտիստական բարոռնում բատերաշրջանը սկսվելու եր «Զար ոգով», իսկ ժողովրդական տաճր՝ «Քանդած օջախով», ներկայացումներ, որ պեստ է տեղի ունենային միենույն օրը և Հասմիկը երկուումն էլ զբաղված է: Մեկի մեջ խաղալու էր Զառնիշան, մյուսում՝ Սալոմե: Ռերեմն, ներկայացումներից մեկն ու մեկը կանգնած էր ձախողման վահանգի առաջ: Զնայած Արտիստական բարոռնի դեկավարության կարող պահանջին՝ մասնակցել «Զար ոգուն», ինչպես և դրամատուրգի միշամտուրյանը, — իսկ Հասմիկը անշափ պատկառում էր Շիրվանզադեի հեղինակուրյունից, — միենույն է, սկզբունքը գերադասելով ամեն ինչից, հրաժարվեց Զառնիշան խաղալուց և հանդես եկավ միայն ժողովրդական տաճր:

Այս վկայում է Հասմիկի սկզբունքայնուրյան մասին դեռ այն տարիներին: Թատրոնի և դերասանութու հարաբերություններն այն աստիճան լարվեցին, որ նա սափակած եղավ նեռանալ, կամ ավելի նիշո՛ Հասմիկին, թե գիտեին, որ անփոխարինելի է, նեռացրին Արտիստականից:

— Հասմիկը դեմոկրատական է, նրան ժողովրդական բարոնից չի կարելի կռտել, — այսպես իր արտահայտվում նրա և քշնամինները, և բարեկամները: Առաջինները աղայամիտ արհամարհանեով, երկրորդները՝ ոգեռուրյամբ և ճույնիսկ հափշտակուրյամբ:

Մամուլում մի անգամ չէ, որ արձանագրվել է, թե ինչպես նա «բարեխպահութեն առաջ է տանում իր հանձն առած ծանր խաղը»<sup>33</sup> և դրա դիմաց «բարեւասեր հասարակուրյան դեպի դերասանութին տածած հարգանքը»<sup>34</sup>:

Միշտ շրջապատված բանվորներով և արհեստավորներով, ժողովրդի ծոցից դուրս եկած և նրան ծառայող ինտելեկտնցիայի ներկայացուցիչներով, Հասմիկը դարձավ դեմոկրատական խավերի արտահայտիչը բարունում:

Հասմիկը կապված էր առանձնապես երիտասարդության ներ, ուսանողների և աշակերտների սիրելին և: «Սյդ բարոնի հանախորդների մեջ, — նիշում է նա, — ինձ ամենից շատ ոգեռում և ուրախացնում էին ներսիսյան դպրոցի աշակերտները»: Թատերազետ Ս. Մելիքսերյանը, որ ներսիսյան դպրոցի այդ շրջանի աշակերտներից է, հաստատում է դերասանութու պատմածը: Հասմիկը

«մեզ մի տեսակ հարազատացել էր,— ասում է նա:— Երան մերն իին համարում և սիրում: Թատերաւահում նսած բանվորները, արհեստավորները, հասարակ գործակաւարներն ու ծառայողները, դեմոկրատիկ մտավորականությունը, ուսանողությունն ու աշակերտությունը իրենց լավագույն զգացումների բուն արտահայտությամբ զնանատում էին Հասմիկի տաղանդը, նրա անշահասեր ու անբիժ գործունեությունը, դեպի հասարակ ժողովուրդը տածած նրա մեծ սերն ու անհուն հարգանքը: Դիտեինք, որ նա ժողովրդական տան հետ կապված է ոչ թե ինչ-որ մերկանտիլ շահերով կամ դերասանական փառասիրությամբ, այլ ներքին մասուր մզումով ու ձգումներով, զիտակցելով, որ ինքն իր սիրող ընկերների հետ միասին անհրաժեշտ գործ է կատարում ժողովրդական լայն շերտերի գեղարվեստական դաստիարակության համար»<sup>35</sup>:

Սյապիսի վկայություններ դարձյալ կարելի է բերել, մանավաճդ որ նա բոլորի հիշողության մեջ էլ մնացել է որպես ժողովրդական տան հետ ամենից ավելի կապված դերասանութի:

Հասմիկը կապ հաստատեց հեղափոխական շարժման ներկայացուցիչների հետ: Զի կարելի ասել, թե հստակ պատկերացնում էր հեղափոխական շարժման նպատակներն ու գաղափարները. «Երանց գաղափարներն ինձ համար, — գրում է Հասմիկը իր նուշերում, — թեև մշուշով իին ծածկված, սակայն անբացատրելի մի ուժ ինձ բաշում էր դեպի այդ երիտասարդները, և ես զգում եի, որ

նրանք ինչոր վեն և բարձր գաղափարների են ծառայում»:

Քաղչննի միջավայրը շատ է փորձ արել համոզել դեռասանուին՝ նրաժարվել, խզել կապերը այդ «փանգավոր երիտասարդուրյունից», սակայն նա, ինչպես միշտ, այս դեպքում էլ միանգամայն ինմեռության էր իր կողմնորոշման մեջ: Իր որոշումների մեջ հաստատ ու վրանը ռական լինելով, նա իր անձը վտանգի տակ էր դնում, և նույնիսկ ներկայացումներ էր կազմակերպում հօգուտ հեղափոխական երիտասարդուրյան, այդ ձեռվ աշակից դառնում նրանց մեծ գործին:

Մշտական կապը բանվորների և արհեստավորների նետ, շփումը հեղափոխական շարժման առանձին ներկայացուցիչների նետ, ավելի հաստատեցին նրա աշխարհայացքի դեմոկրատական հիմքերը, շատ ավելի խորացրին նրա ստեղծագործության ժողովրդային բնույրը և այդպիսով միանգամայն օրինաշափ ու կայուն դարձրին նրա վերաբերմունքը դեպի հեղափոխուրյան հաղթանակը:

Մի ժամանակակից պատմում է, որ ինչպես, երբ կարմիր բանակայինները Դիլիջան<sup>36</sup> էին մտնում, «Համբիկը ժողովրդի գլուխն անցած դիմավորում է նրանց, ծաղկեփնչերով ծածկելով նրանց նահապարհը»<sup>37</sup>:

Այս բոլորից նետո պատահակա՞ն է արդյոք, որ մեր գերասանների մեջ Հասմիկը առաջիններից էր, որ ձեռնամուխ եղավ ներկայացումներ կազմակերպելու Հայութանքի գյուղերում Սովետական կարգերի հաստատման

առաջին խև օրերից: Չիրովիլիում քնդանորներն էին ուրատում, խև Հասմիկը Թիլիշանում և նրա շրջակա գյուղերում ներկայացումներ էր կազմակերպում: Կամ սրատահակա՞ն է արդյուն, որ Հասմիկը Սովետական Հայաստանում ազգային պետական քառորդության ստեղծման մասին եղած ոռոշման առաջին արձագանքողներից եւ լավ, ինչպես և անդրանիկը՝ նրա խանդավառ գործիշներից, որոնց աճվան նետ է կապված սովետահայ քառորդի հիմնադրումը:

Ինարկե, սրանք պատահական դեպքեր չեն, այլ միանգամայն բնական և հասկանալի օրինաշափուրյուն, մեկը մյուսով պայմանավորված:

\* \* \*

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում Քախուռոշ դեր խաղաց նայ զեղարվեստական ինտելիգենցիայի, այս բվում և Հասմիկի համար:

Հասմիկը միանգամից գտնվեց կյանքի և գործի բռնության այլ, միանգամայն նոր պայմաններում: Թերապանութու կյանքը ինչպես քառորնում, այնպիս էլ նրա պատերից դուրս, մեծ բռվանդակուրյամբ հագեցավ:

Սովետական կարգերի հաստատումից հետո Հասմիկը հաստատ ուժ դրեց հասարակական գործունեության ասպարեզ, գործելու այնպիսի խանդավառությամբ, որ երախտապարտ ժողովուրդը նաև հասցրեց մինչև պետական գործչի աստիճանը: Հասմիկն առաջին նայ դրամատիկ դերասանութին էր, քննիանրապես քատերական

ասպարեզում անդրանիկը, որին ժողովուրդն ընտառեց Գե-  
րագույն սովետի դեպուտատ<sup>38</sup>: Եթ մի հոդվածում Հաս-  
միկն ասում է, թե ցարական և դաշնակցական մռայլ ու  
դաժան կարգերում հայ գերասանը ,որ գրկած էր իր հա-  
ղաքացիական ամենատարրական իրավունքների պաշտ-  
պանուրյունից, երազել անզամ չէր կարող այսպիսի  
բարձր պատվի մասին<sup>39</sup>: Իսկ մի այլ հոդվածում նա  
պատմում է, թե ինչպիսի սիրով է ծառայում ժողովրդին,  
նոգ տաճում նրա համար, թե ինչպես իրեն դիմում են  
մերք բնակարանի հարցով, մերք բոշակի, սանատորիա-  
կան բուժմտն համար, երեմն դպրոցական գործերով կամ  
ուրեմն բազամասում ջրմուղ անցկացնելու համար, և թե  
ինչպիսի բավականուրյամբ է ինմը կատարում այդ բո-  
լորը<sup>40</sup>:

Մեր անցյալ բատերական բննադատուրյունը, ինչ-  
պես արդեն մի առիրով տավել է, այն միտքն է հայտներ  
թե Հասմիկը «ավելին կարող էր դառնալ լավ պայման-  
ներում, քան իսկապես դարձել է»<sup>41</sup>: Սա ցույց է տալիս,  
որ մեր բատերական բննադատուրյունն անցյալում կա-  
րողացել է ոչ միայն գնահատել Հասմիկին, արժեքավո-  
րել նրա բեմական ձիւքն ու օժտվածուրյունը, այլև նրա  
մեջ տեսնել բարեփած, տակավին շարտահայտված կա-  
րողուրյուններ, որոնք դրսեռքին, երկան կարող էին  
զալ կյանքի այլ, ավելի լավ պայմաններում:

Վյանքի նոր պայմանները վեռական նշանակուրյուն  
ունեցան Հասմիկի բեմական գործունեուրյան համար:  
Այն մասին չէ, որ այժմ գնահատվեց ըստ ար-

ժանվույն: Խոսքը ոչ էլ այն մասին է, որ Հասմիկը, և նրա նետ միասին մեր մյուս դերասանները, սկսեցին գործել ազգային պետական բարեռնում, ոչ էլ այն, որ սովետական բարեռնում, ինչպես նաև պիտի էր սպասել, Հասմիկը որպես դերասանունի ավելի գնահատվեց<sup>42</sup>, շատ ավելի վստահության արժանացավ: Մեր խոսքը վերաբերում է նրան, որ ընդարձակվեց Հասմիկի կենսահանաշողությունը:

Սյապես, ուրեմն, սոցիալիստական հիմունիների վրա կառուցվող կյանքը դրեց իր կնիքը նրա մտածողության, նետեապես և ստեղծագործության վրա: Այժմ նա վերահսկացնում էր իր խաղացած հին դերերը: Այդ նիշտ է, քայլ խնդիրն այն է, որ նրա ստեղծագործությունը, ստեղծագործական կյանքն ընդհանրապես զարգացման շատ ավելի բարձր մակարդակի հասավ: Մի կողմից կյանքի զուեղ ներգործությունը, մյուս կողմից այն նոր սպահանջներն ու հիմունիները, որոնց վրա կառուցվում էր սովետահայ բարեռնը, ըստ Էորյան միրիարար դեր կատարեցին Հասմիկի կյանքում՝ հանելով նրան այն փակուղոց, որի առաջ, որպես արվեստագետ նա կանգնած էր:

Հասմիկի մասին եղած բննադատական գրականության մեջ այն միտքն է հայտնի թի, թե նրա ստեղծագործական տարերքը կենցաղային ժանրն է: «Նա ձգում ուներ տարբեր ժանրերի դեւեր խաղալու, սակայն նրա ստեղծագործական տարերքն էր կենցաղային ժանրը»<sup>43</sup>, — ասում է Լուն Քալանքարը: Ինքը, Հասմիկը, այդ

կարծիքին չեր<sup>44</sup>: Հակառակն ապացուցելու ջանքը, դերասահումու՝ տարբեր ժանրի դերեր խաղալու ձգումը մեծ մասամբ դատապարտվել է և բացատրվել այլ կերպ՝ գրամատիկական-հերոսական դերերում հանդիս գալու սովորական փառասիրությամբ:

Կենցաղային դերերում Հասմիկն իսկապես անզուգական էր: Այդ մասին շատ անգամ է գրվել ու ասվել: «Այդ բնագավառում,— գրում է նույն Քալանքարը,— թերեւս նա արդեն մրցակից չուներ հայ դերասահումինների մեջ»<sup>45</sup>: «Այսօր Հասմիկը,— գրել է Կարա-Գարվիշը,— լավագույն կենցաղական արտիստունին է մեր քեմի վրա: Այդ ասպարեզում նա անգնահատելի և անփոխարինելի է միանգաւմայն»<sup>46</sup>

Փա նիշտ է, ինարկե: Մակայն մեկ անգամ և նիշտ կերպով ստացված տպավորությունը մեր բնենակառությունը պահպանեց ուժի մեջ և այն ժամանակների համար, երբ այդ բնուրագրությունը Հասմիկի համար արդեն հնացել էր:

Կենցաղայնությունը Հասմիկի նախասովետական տարինների ստեղծագործության ամենաբնորոշ գիծն է եղիլ: Եվ դա ոչ թե նրա համար, որ կենցաղագրական տիպերի կերաման մեջ մրցակից չուներ: Այդ շրջանում էլ Հասմիկը կենցաղային տիպերի շրջանակից դուրս գալու պահանջ էր զգում: Եվ, սակայն, նրա կատարած ամեն մի փորձ, ինչպես և ձեռք բերած ամեն մի համեմատական հաշողությունը շարունակում էր իր վրա կրել կենցաղայնության դրոշմը: Հարցն այն չէ, որ նա կոչված էր կեն-

ցաղայինի համար և համեմատաբար քույլ էր դրամատիկական, ողբերգական դերերում: Խնդիրը դեր կամ ժանրը չէր, այլ ելակետը, մոտեցումը, ըմբռնումը: Եթե սու դիտողականուրյունը, մանկական տարիներից կուտակած հարուստ տպավորուրյունները, ժողովրդական կյանքի, ճիստ ու կացի նաևաշողուրյունը այսպէս թէ այնպէս բավական էին և տաղանդավոր կնոշը ննարավորուրյուն էին տալիս ստեղծելու մեկը մյուսի ետեից, մեկը մյուսից տարբեր վառ ու տպավորիչ, կենցաղային իմաստով միանգամայն համոզիչ կերպարներ, ապա խորը դրամատիկական, առավելապէս ողբերգական դերերի համար անհրաժեշտ էր ընդհանրացում, երեակայուրյան մեծ քոիչ:

Հասմիկի թեմական արվեստը միշտ էլ աշխի է ընկել իր ուսալիստական նշմարտացիուրյամբ: Տարբեր ժամանակներ տարբեր աստիճանների վրա է գտնվել այդ նրա մարտացիուրյունը, բայց ընդհանուր առմամբ այդ նրա մարտացիուրյան հիմքը դերասանութու ընկալումն էր, նրա տեսածը, գիտցածը, կյանքից ստացած հարուստ տրպավորուրյունը, որ գալիս գումարվում և խաշաձեռն էին թեմական կերպարների մեջ: Եթե նա հանձն էր առնում ներոսական, դրամատիկական դերեր, գրկում էր իր արվեստի հենց այդ աղբյուրից՝ իր ամենազորավոր հիմքից: Հասմիկը չէր նաևաշում այն կյանքը, որի ծրնունդն էին նրա խաղացած ներոսական դերերը, և անհրաժեշտ էրուղիցիայի-գրականուրյան և կուլտուրայի լայն իմացուրյան պակասը խանգարում էր նրան՝ գեր

Երեակայուրյան ուժով ըմբռնելու իր տեսադաշտից դուքս գտնվող կամ ժամանակով ու տարածուրյամբ իրենից հեռու ապրող հերոսումիների ներքին աշխարհը՝ մտեմեն ու ապրումները: Եվ այդ պատճառով դերասանումին, որի մասին սովորաբար ասել են, թե «իր ուրույն կնիքն է զնում ստանձնած ամեն մի դերի վրա», հերոսական-դրամիտակական կերպարներ կատարելիս ստիպված հենվում էր ուրիշ դերասանումիների՝ Սիրանույշի, Մայսուրյանի խաղերի վրա: Ինարկե, նա չէր կարող Սիրանույշի կամ Մայսուրյանի նետ ունեցած մրցուրյան մեջ շահել, որովհետև գրկված էր ինհնուրույնուրյունից, սեփական մոռեցումից, մինչդեռ կենցաղային դերեւում նա ինհնուրույն էր, ոչ կրկնող: Ուրեմն՝ ոչ թե բնական ձիրեփի պակասն էր, կամ տաղանդի բնույրն ու ուղղուրյունը, ինչպես կարծվել է, այլ ինհնուրույն մոռեցման, կուտառայի, բնդիմանուր երուղիցիայի պակասն էր, և մյուս կողմից էլ երեսույրների կենցաղային միակողմանի բնկալումը, որոնք քույլ չեն տալիս դրամատիկական-հերոսական բնազավառում նույն անգույքական հաջողուրյան հասնել, ինչ-որ կենցաղային դերեւում: Եվ երեք դերասանումին, ինչպես վկայում է մեր անցյալ բնադրատուրյունը, երբեք նատուրիալիզմի մեջ չի բնիկել, միշտ պահպանել է շափի զգացումը, նավատարիմ է մնացել ուսալիզմին, ապա դա պետք է բացատրի ժողովրդի հետ ունեցած նրա անընդհատ կապով, նրա դեմոկրատական կենսազգացողուրյամբ:

Սիա հենց այդ աեսակետից էլ գործունեուրյունը սո-

վետական քառոնում Հասմիկի համար վեռական եղավ:

Թատերական ժննադատուրյունը ժամանակին միանգամայն նիշտ կերպով նկատել է, թե մինչև սովետական կարգերի հաստատումը ակներե էր, որ Հասմիկը թեակոյում է իր արվեստի հասուն շրջանը և դառնում խոշոր դերասանութիւն: Բայց ակներե էր նաև այն, որ նրա ստեղծագործուրյունը նախախ տարածվում էր կենցաղային փաստերի վերարտադրման մեջ և միայն ի բնէ նրան հատուկ մի տեսակ հոտառուրյունը և բնածին գեղչկական խելքը փրկում էին նրան նատուրիալիզմի մեջ միտճակելու վտանգից: Նրա ստեղծագործած կերպարները տիպական էին միայն այն խմասով, որ նա ընդհանուրը կարողանում էր նյուրեղ և վերին աստիճանի տպագորիչ կերպով մարմնավորել մասնավորի մեջ, սակայն այդ կերպարների մեջ զեռ զգացվում նակառակը, այսինքն՝ մասնավորի ընդհանրացումը, ուստի և բատ մեծ մասի, նրանք ընկալվում էին որպես կենցաղային գունեղ փաստեր և նրանց մեջ պակասում էր ստեղծագործական վերջին, եգրափակիչ ակտը<sup>47</sup>: «Անա այս էր, որ տաղանդավոր Հասմիկին դեռ մնում էր նվաճել: Ել իր ստեղծագործական պրակտիկայում սովետական քառոնում նա փայլուն կերպով նվաճեց այդ»<sup>48</sup>, — ասում է Քալանքարը, այսինքն այն ուժիսյորը, որ 20-ական թվականների սկզբին խոշոր դեր է խաղացել սովետահայ քառուն ժողովրդած հին դերասանների և առանձնապես Հասմիկի գաղափարական-գեղարվեստական վերափոխման մեջ:

Ճիշտ է, ոչ միանգամից, բայց աստիճանաբար, Հասմիկը իր գործունեության սովետական շրջանում կարողացավ ազատագրվել արվեստի այն կողմերից, որոնք անցյալից գալով՝ խանգարում, կաշկանդում էին և բոյլ չէին տալիս երան գեղարվեստական մեծ ընդհանուրացումներ կատարել:

Ազատագրվելով՝ դրանցից՝ Հասմիկը մեր մի շարք դերասանների նման շնափշտակվեց ոեժիսյորների ֆորմալիստական բնույթի նորամուծություններով, որոնք վրանգի տակ էին դնում բարոնի ոեալիստական առաջնացումը:

Ժամանակին բննադատությունը ուշադրություն է դարձրել այդ հանգամանքի վրա: Կարելի է օրինակներ բերել: «Մեկիզորի» առաջին բեմադրությունը սովետահայ բարոնում, ինչպես ժամանակին նշել է բննադատությունը, կոմեդիայի սոցիալական էության բացահայտումը փոխարինել էր բուժֆոննդայնությամբ: Գոզոլյան ներկայացման ոեցենզենտր գրում է: «Բուրշալյանը գերադասեց ուժեղացնել երգիծաբանական էլեմենտը և հասցեց «Մեկիզորը» մինչև բուժֆոննդայնության գրութեսկի ձեռվէ»<sup>49</sup>: Նույն այդ բննադատությունը նշել է նաև, որ Հասմիկը այն փոթքարիվ դերակատարների շարքումն էր, որ շենքարկվելով ոեժիսյորական մտականացմանը, հարազատ էր մնացել գոգոլյան ոեալիզմին կամ ինչպես բննադատն է ասում՝ «ավելի շեղվելով ոեալիզմի կողմը»<sup>50</sup>: Հասմիկի Աննա Անդրեևնան զուրկ չէր գույների այնպիսի խտացումից, որ ենքադրում էր գո-

գոլյան ոեալիզմը: Եվ դրա հետ միասին այս կատարման մեջ զգացվում էր դարաշրջանի շունչը, այնքան կոլորիտ, որ նրա կարմրաբշիկ ժաղանապետումին հիշեցնում էր Կուտողիկի կտավները, որոնց մասին դերասանութին քերես շգիտեր էլ: Աննաշակուրյան, հավակնոտուրյան, նղնիմ հետաբերությունների, ընդհանրապես զավառայնուրյան այնպիսի զգացողուրյամբ էր աշխի ընկեռում այդ սատիրական դերակատարումը, որ Հասմիկին համարձակուրեն դարձնում է, Օլգա Մայուրյանից հետո, Աննա Անդրեևնայի լավագույն դերակատարը հայ քառունում:

Կարելի է և այլ օրինակներ քերել: Բավական է հիշել «Խարաբալայի» և «Պեպոյի» թեմադրությունները սովետահայ քատրոնում հանճական թվականների վերջերին: Հասմիկի թե Խամփերին, թե Շուշանը ոչ մի կապ չունեն Սունդուկյանին վերանայելու տենդենցների հետ: Հասմիկի խաղի և թեմադրության ընդհանուր բնույրի մեջ հակասություն էր առաջանում, խախտվում էր ներկայացման ոճական միասնուրյունը:

«Պեպոյի» թեմագրողը (Ա. Գուլակյան) պատմում է, թե ինչպես մի փորձի ժամանակ, այլևս շնանդութելով կլասիկ դրամատուրգին արդիականացնելու տենդենցով տարգած ուժիսյուրի ֆորմալիստական հնարամտությունները, հրաժարվել է նրա կամքը կատարելուց, առանձնացել ու լաց է եղել, բացատարելով, որ ինքը ոչ մի կերպ ներքուստ չի համոզվում, թե Սունդուկյանին անկերպ ներքուստ չի փոփոխության ենթարկել: Ուժիսյուն ստիլիստական

ված էր ակամա նահանջ կատարել և քոյլ տալ, որ Հասմիկը մնա առաղիցիոն բմբռնման շրջանակներում: Այս նիշտ է: Սակայն սխալ կլինի կարծել, որ դա պահպանողականության արտահայտություն էր: Ճիշտ հակառակը, դերասանություն առողջ ինտուիցիան չէր կարողանում նաշափել այն ամենի նետ, որ կապ չուներ ուսալիստական բատրոնի նետ: Եվ ուսալիզմի այդպիսի նետեղական ու հաստատակամ պաշտպանությունը, նրա խաղը դեռ բանական բվականներին դարձնում էր սկզբուն-ցային՝ քեմական արվեստի զարգացման նեռանկարի տեսակետից: Հասմիկը պաշտպանում էր անցյալ ուսալիստական-դեմոկրատական առաղիցիաները, որոնց հիման վրա ծնունդ առավ և կազմավորվեց սոցիալիստական ուսալիզմը սովետահայ բատրոնում:

Այս փաստերը կրկին ու կրկին հասառառում են դերասանություն սկզբունքայնությունը, այն անշեղ նավատարմությունը, որ նա միշտ հանդես է բերել դեսի ուսալիստական արվեստը: Այն ան ուժեղ և խորն էր արմատացած այդ զգացումը դերասանություն մեջ, որ իր բեմական գործունեության Յօ-ամյակի նորելյանական երեկոյին ապահ շնորհակալական խոսքի մեջ, դառնալով բատրոնի երիտասարդ ուժերին, երկու խորհուրդ է տվել, ճախ՝ «լինել միշտ աշխատասեր» և ապա՝ «լինել միշտ սկզբունքային, երբեք շդավանանել սկզբունցին»<sup>51</sup>: Հասմիկն իրավունք ուներ այդպիս արտահայտվելու որովհետեւ նրա կյանքը սկզբունքայնության բարձր օրինակ էր:

Բացասելով ֆորմալիզմի առանձին արտահայտությունները մեր բարոնում՝ Հասմիկը գտնվում էր բառերական այն առաջավոր գործիչների շարքում, որոնք ապրելով սովետական դերասանի կազմավորման պրոցեսը, պաշտպան էին կանգնում բարոնն իսկապես առաջ մղող նոր և առողջ երեսուրբներին:

\* \* \*

Հասմիկի և, իհարկե, ոչ միայն նրա, ստեղծագործական կյանքում վճռական դեր խաղաց սովետական դրամատուրգիայի ծնունդը, այն դրամատուրգիայի, որը նոր էր իր թեմատիկայով, առաջ բաշած զաղափարներով, բաղաժական սրուրյամբ և նպատակասլացուրյամբ, պատկերած մարդկանցով ու փոխհարաբերուրյուններով:

Սովետահայ բարոնում առաջին նշանակալի բայլն այդ սպղուրյամբ կ. Տրենյովի «Լյուրով Յարովայա» պիեսն էր, որ ներկայացվեց 1927-ի մայիսի 7-ին: Այս պիեսի թեմադրույթը նախապատճառաված էր գլխավորակես այն պայմանով, որ մինչ այդ սովետական առաջավոր բառերական հասարակայնուրյունը մղում էր սովետական թեմատիկայի համար: Թարոնը դեռ նոր էր բոլորում իր գոյուրյան առաջին տարին, որ նրա մասին ասվեց «դեռևս չի գտել իր նողը, իր դեմքը և շարունակում է որոնումները և վարանումները»<sup>52</sup>: Այս ահազանգին հաջորդեց ավելի կտրուկ պահանջ՝ բայիլ կյան-

նակի ոգին և արտացոլի այն», որից և կախված է քատրոնի «կենսունակուրյունը և նրա ապագան», եթե նա կամենում է լինել «նոր կառուցվող կյանքի լավագույն օժանդակը, նոր գիտակցուրյունը կազմակերպող գեղեցկագույն գործիքը»<sup>53</sup>: Սակայն այդ պայքարը շատ ամենի սուր բնույր ընդունեց, երբ նկատվեց դարաշրջանի այրող հարցերից քատրոնը կտրելու, մեկուսացնելու քացանայտ ձգում, ընդհանրապես ապոլիտիկ դիրքավորում, դեպի էսքետացումը կատարվող նահանջի փորձեր: Այդ պայքարն ուղղված էր այն բանի դեմ, որ անցյալ դրամատուրգիայի կլասիկ նմուշների կողմին տեղ էին գրավում նաև բուրժուական գրականուրյան անկման շրջանի նեղինակները: Զժխտելով սովետական քառոն կլասիկ դրամատուրգիայի խոշոր գերեն ու տեղը, առաջավոր սովետական քառերական նասարակայնուրյունը Մետերինկով և Ռույլդով նախշտակվելու մեջ, դիտում էր քառոնի քավագլոր անկման վտանգը: Կուսակցական մամուկն այդ առքիվ արտանայտվելով գրում է, թե «սա ոչ միայն նահանջ, այլ խայտառակ՝ պարտուրյուն է»<sup>54</sup>: Սակայն կային և այնպիսիներ, որոնք նման նարձակումները ծայրահեղ նամարելով, արդարացնում էին վերոնիշյալ դրամատուրգների պիեսների թեմադրուրյունը, ասելով, թե դրանք, «Թեեւ իդեոլոգիայով մի միշտարքեր, սակայն գեղարվեստական արժանիքներ պարունակող կլասիկ մեր ուսպերտուարի»<sup>55</sup> մեջ կարող են մտնել: Սակայն դրան նակառակ, անցյալ ժառանգու-

Բյան նկատմամբ բննադատական դիրք բռնողները, այդ թվում և բանաստեղծ Գուրգեն Մահարին, տարբերություն էին դնում «Թեկողորի», «Ռուփել Ակոսայի», «Պատվի համարի» և Ուալլդի ու Մեսերինկի դրամաների միջև. Երե վերջինները որակում էին ավելորդ, անարժեց<sup>56</sup>, ապա առաջինները համարում էին նետահրեշիր և թեմադրության արժանի, որովհետև «մերկացնում են նին հասարակարգի խոցերը»<sup>57</sup>: Պահանջ էր դրվում արմատախիլ անել բաղմենիական նաշակի ազդեցություններ և, ինչպես կուսակցության 12-րդ համագումարն էր պահանջում քառորններից՝ «հանուն կոմունիզմի մղող պայքարի իշխանների սիստեմատիկ մասսայական պրոպագանդայի համար»<sup>58</sup> քառորնը դարձնել սովիտական մարդկանց գաղափարական դաստիարակության աշխաներից մեկը:

Թատրոնի ղեկավարությունը չէր կարող համապատասխան նետեաւրյուններ շանել: Այդ մասին է վկայում թեկուզ այն ինտերվյուն, որ տվել է մամովին քառորնի գլխավոր ռեժիսյոր Լեոն Քալանքարը: «Հին, կլասիկ ռեպերտուարը, — ասում է նա, — ինչ շահ էլ մեծ գեղարվեստական բնույթ կրի, ունի միմիայն պատմական, դաստիարակչական արժեք և այդ ռեպերտուարը չի կարող բավարարել ժամանակակից պահանջներին և խնդիրներին, որովհետև ժամանակակից քառորն հանախող հասարակությունը պատասխան է փնտռում իրեն նուզող մտքերին և գաղափարներին»<sup>59</sup>: Չունենալով իր տրամադրության տակ ինքնուրույն պիեսներ, քառորնը, բնա-

կանաբար, ոռուսական սովետական դրամատուրգիայի կողմն է իր հայացքը դարձնում, ընտրելով մի շարք պիեսներ, որոնց մեջ, սակայն, համեմատարար ուշադրության արժանին Ա. Լունաշարսկու պիեսներն էին. ինչպես օրինակ՝ «Կարմիր դիմակը», «Թույնը», այդ բիում և մի փոքր ավելի վաղ թեմադրված «Ազատազրոված Դոն-Կիխոտը»: Այս ամենը վկայում էր քառորդում առաջացած նոր թեկման մասին: Մամուլում գտնում են նոր սիեսների քողած տպավորության նկարագրություն: Օրինակ՝ մի ճերկայացման մասին գրված ուցենզիայում կարդում ենք. հասարակությունը «նեռացակ դահլիճից՝ գործելու, ստեղծելու և պայմարելու»<sup>60</sup>: Իսկ միասնամանակ նետո, այդ արդեն «Լյուրով Յարովայի» թեմադրության նախօրյակին էր, մամուլն այն կարեուր ընդհանրացումն էր անում, քե մեր քառորդ և «ճշում է իր իդեոլոգիական գիծը»<sup>61</sup>:

Բացի «Թույնից», որի նյուրը բաղկած էր սովետական իրականությունից, Լունաշարսկու դրամատիկական երկերը, ինչպես և այս շրջանում թեմադրված մյուս պիեսները մեր կյանքի պատկերը չեն կազմում: Լունաշարսկին իր առաջ բաշած և շոշափած կարեուր նարցերը ժամանակակից կյանքի օրինակով լուծելու փոխարեն, իր պիեսներում դիմում էր զիսավորապես գրական-Փիլիսոփայական սիմվոլներին, պատմական զուգահեռներին և դրա նետեան նով բաղաբական սրությունը կորչում էր և պիեսը ստանում էր ավելի վերացական, հայեցական բնույր: Զնայած դրան, պետք է ասել, որ այդ պիես-

ներն այնուամենայնիվ մի բայլ առաջ էին անցյալի համեմատությամբ և հնարավորություն էին տալիս հեռու մնալու «մինչ այժմ քեմադրվող ապոլիտիկ, անբովանդակ» և «մեշշանական-հոգեբանական պիեսներից»<sup>62</sup>:

Թատրոնի շուրջը ծավալված այդ սուր պայքարի առաջին հաղբանակը «Լյուրով Յարովայայի» քեմադրությունն էր: «Լյուրով Յարովայա» պիեսով սովետական թատրոնը ուժ դրեց գործունեության մի նոր շրջան: Եվ այժմ, երբ պատմական հայացք ենք գցում՝ տեսնում ենք, որ «Լյուրով Յարովայան» էտապային քեմադրություն հանդիսացավ թատրոնի դեմքը և ուղղությունը ոռոշելու տեսակետից: Եվ իսկապես, «Լյուրով Յարովայան», որ սովետական մարդկանց պատկերման անդրանիկ ամենալուրջ փորձն էր, ապահովեց մեր թատրոնի շրջադարձը դեպի սովետական քեմատիկան: Այս շրջադարձը խորացավ և նոր զարկ ստացավ, երբ սովետահայ թատրոն մուտք գույնեց ուժիսյորական նոր սերունդը և մեկը մյուսի հանից քեմ բարձրացան ։ Իվանովի «Զրահագնաց 14—69», Գ. Ֆուրմանովի «Խոտվություն», Բ. Լալ-րենյովի «Ըեկում», Բ. Ռումաջովի «Հրե կամուրջ» և Ժամանակակից այլ պիեսներ:

Եվ զարմանալի չէ, որ ինչպես դրամատուրգիներ, այնպես էլ թատրոնն իրենց սեղծագործության համար մեծ մասամբ անհատնում նյուր գտան նախ և առաջ ուղղիցից հաղբանակի և բաղաժացիական կոիվների հեռուսական դրվագների պատկերման մեջ: Անդրանիկ ազգային պիեսը սովետական քեմատիկայով, որ գեղար-

վեստական արժեք էր ներկայացնում, դարձյալ պատկերում էր նույն հյուրը՝ ժաղովրդի հեռոսական պայմարը Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար։ Մենք նկատի ունենք վ. Վազգարշյանի «Օղակումը»։

Մամուլն անմիջապես արձագանքեց «Լյուբով Յարովայան» թեմադրելու ոռոշմանը և մինչեւ ներկայացնումը իր էջերում հրապարակեց մի փոքրիկ նոդված, նպատակ ունենալով լուսաբանել պիեսի բովանդակուրյունը, գեղարվեստական արժանիքները և երա հշանակուրյունը մեր քատրոնի համար։ Մեր մամուլը ոչ մի ժամանակակից պիեսի այդպիսի բարձր գնահատական չի տվել։ Հոդվածագիրը համոզված էր, որ այն «մի օրինակելի նմուշ է ժամանակակից դրամատուրգիայի»<sup>63</sup>, այդ պատճառով էլ նա «քացառիկ տեղ պիտի գրավի ուսպեսուուրի մեջ»<sup>64</sup>։

Տրենյովի պիեսի թեմադրուրյան փաստը մամուլը գնահատեց բարձր։ «Տրենյովի «Լյուբով Յարովայա» պիեսի թեմադրուրյունը պետքատրոնում, — գրում է առաջին ներկայացման ոեցենքենար, — մի նոր հաղթակալ պիտի համարել քատրոնի դեմքի և ուղղուրյան հարցում։ Առաջին անգամ իր 6-ամյա գոյուրյունից հետո մեր քատրոնի թեմից հնչեց բաղամացիական կոիվների, զաղանի աշխատանքի, հեղափոխական հեռոսական պայմարի պատմուրյունը»<sup>65</sup>։ Բայց միաժամանակ հնադատին չի գոհացրել թեմադրող ուժիսյորի աշխատանքը. նա ասում է, որ Տրենյովի պիեսը պիտի էր թեմադրել «հեղափոխական ուսպեսուրի» ոգով, մինչդեռ այս ներ-

կայացումը ոների խառնուրդ է: Դրա համոզիչ բացատրությունը ավել է քեմապրադ և Քալանքարը: Վերջինս ասում է, թե «Բույնի» քեմադրուրյունից սկսած կատարել է գիտակցված նահանջ ֆորմալիստական դիրքերից: «Յէ այդ, թե մանավանդ նրան հաջորդող «Լուրով Յարովայայի» քեմադրուրյունների մեջ ես արմատականապես փոխեցի պատկերների (օբրագների) կերտման սկզբունքը, գիտակցաբար հրաժարվեցի այդ բնագավառում ձեւական որոնումներից և աշխատանքի նիմնաբար դարձրի այն, ինչ կոչվում է կենսական նշմարտուրյուն: Բայց այստեղ էլ ես դեռ միշտին նանապարհի վրա էի: Այնինչ մարդկային մատերիալը ես արդեն կազմակերպում էի ուսալիսութեն, այդ երկու ներկայացումների արտաքին ձեւավորումը դեռևս կրում էր ֆորմալիստական կնիք»<sup>66</sup>:

Նկատենք, որ մի նենադատ այդ բոլորով հանդերձ, ասում էր, թե «Լուրով Յարովայան» իրոք որ քատրոնի պատմուրյան իդեոլոգիական փայլուն էջն է կազմում»<sup>67</sup>:

«Լուրով Յարովայայում» Հասմիկը հանդես եկավ գլխավոր հերոսունու դերում:

Մենք ոչ միայն տարօրինակ չենք գտնում, այլև միանգամայն նիշտ ու բնական ենք համարում, որ քատրոնի գեղարվեստական դեկալարուրյունը Լուրով Յարովայայի դերը վստահել է Հասմիկին, որը, համեմայն դեպս, հոշակված չէր դրամատիկական-հերոսական դերերով: Պատահական չենք համարում, որ սովորակայ

բարոնի պատմության մեջ սովետական կնոց առաջին դերակատարը եղել է Հասմիկը:

Լյուբով Յառվայայի դերակատարումը, ինչպես և պիեսի մի ժանի այլ կերպարների քեմական մարմնավորումը, նորություն էր: Առաջին անգամն էր, որ դերասաններին առիր էր ներկայանում պատկերել սովետական մարդկանց: Մի բան պարզ էր, որ այս նոր դերերը չի կարելի խաղալ այնպես, ինչպես խաղացել էին մինչ այդ, իսկ քեզ ինչպես պես էր խաղալ, պարզ չէր, պետք էր որոնել, գտնել: Այս իմաստով «Լյուբով Յառվայայի» քեմադրությունը դերասանների համար ստեղծագործական տեսակետից ևս շրջադարձային նշանակություն ստացավ: Նոր մարդկանց, ընդհանրապես սովետական քեմատիկայի գեղարվեստական ընդհանրացումը քնականարար իր հետ քերեց քեմական արվեստի նորորակ գծեր և հատկություններ:

Բացի Հասմիկից, սովետական մարդկանց և դեսպինեղափոխությունը հակիմողների դերերով, այս ներկայացման մեջ զբաղկած էին նաև Հրաչյա Ներսիսյանը (Կոչկին), Ավետ Ավետիսյանը (Շվանդիա), Գրիգոր Ավետյանը (Գորնոստաև), Համբարձում Խաչանյանը (Պիկալով) և ուրիշներ:

Թատրոնի սովետական կնոց պատկերման անդրանիկ փորձը շվանգելու համար, քնական է, պես է կանգ առներ մի այնպիսի դերասանունու վրա, որը ներսունիներ խաղալու փորձ ունենալով հանդերձ, իր ստեղծագործության քնույրով և քեմարվեստի հախա-



Եվեմիս  
(«Պետո»)

ՏԱՐՏՈՎԱՆԱԿ ԳՐԱԴԱՐԱՆ



Խամփերի («Խարաբալա»)

դրյալներով առավելագույն շափով մոտ էր սովետական քառորդի պահանջներին ընդհանրապես, և նոր-նոր միայն կազմակերպվող բևմանվեստի սոցիալիստական ոճին՝ մասնավորապես:

Սյդպիսի դերասանութիւնի էր ամենից առաջ Հասմիկը: Մի դերասանութիւն, որի սահմանադրության մեջ, ինչպես արդյուն տեսանմ, նենց սկզբից շատ ուժեղ է առահայտվել ժողովրդայնուրյունը, ընդհանրապես դեմոկրատիզմը: Եվ նրանք, որ Հասմիկին տեսել են ոչ միայն այժմ, այլև անցյալում, դերասանութուն գնահատելիս վկայում են նրա բևմարդիստի մեջ այդ առողջ կողմերի հիմնավոր ու արմատացած սոկայուրյունը: «Ժողովրդական առողջ տարրը, — զրում է Գերեզմիկ Գեմիրեցյանը Հասմիկի մասին, — նրա բնական օպտիմիզմը, նրա զարգացման լուսավոր հեռանկարները — այս ամենը շարունակ զգացվել է տաղանդավոր դերասանութուն գործունեուրյան մեջ»<sup>68</sup>: Բացի դրանից, Հասմիկը շատ բնդիսանուր կողմեր ուներ Տրենյովի պատկերած հեռուստունու հետ ոչ միայն աշխարհազգացողուրյան կողմից, այլև իր կյանքի պատմությամբ: Բայց ական է դերասանութուն կենսագրուրյունից հիշել թեկուզ այն վասարը, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված պայմանի շրջանում Հասմիկը շատ մոտ էր կանգնած պատմական իրադարձություններին, բազա լոցիսկան կոիվների ամենահեղ օրերին ժողովրդի մեջ է եղել ու նրա հետ:

Հարովայան ուսուցչութիւնի էր, Հասմիկը՝ ժողովրդական քառորդների հետ կապված դերասանութիւն, մի խոս-

բով, երկուսն էլ ժողովրդի ամենալայն խավերին ծառայող հասարակական գործիչներ էին: Թեև տարբեր առիրներով, բայց երկուսն էլ կապված էին նեղափոխական ընդհատակյա խմբակների հետ: Եթե Յարովայան, ինչպես մի ոռու դերասանուին է ասում, օգնել է բոլշևիկներին, բայց ել նրանց դպրոցում, ներքնատներում, ապա Հասմիկը, ինչպես արդեն տեսանք, նրանց օգտին ներկայացնումներ է կազմակերպում: Եթե բաղաժացիական կրոնիվների ժամանակ Յարովայան երեսուն, նույնիսկ ավելի վերսու ոտքով է անցնում, որպեսզի կարմիրներին հայտնի սպիտակների մոտենալու մասին, ինչպես և իր օգնությունն ու ծառայությունն առաջարկելու համար, ապա Հասմիկը, այդ արդեն հայտնի է, կապվում է Դիլիջանի նեղկումի հետ և ներկայացնումներ կազմակերպում զուամսերի և զյուղերի համար:

Յարովայայի գերը պատրաստելիս կարո՞ղ էր նա շինչել իր կյանքի դիլիջանյան օրերը:

«Ոչ դեկանմբերեյան ցուրտը. — պատմում են ժամանակակիցները, — ոչ նյուրական կարիքը չին թնկնում նրան և նրա շուրջը համախմբվածներին: Նա ոգևորությամբ ներկայացնումներ էր տալիս Դիլիջանում, ապա ոտքով շրջում զյուղերը և ներկայացնումներ կազմակերպում»<sup>69</sup>: Քեմաղբում են «Փեպո», «Փարիզի կոմունան»: Ոչ գրիմ ունեին, ոչ կեղծամ, ոչ զգեստ և ոչ ել բեմական հաւմարանք, բայց խաղում էին ոգեսորությամբ, իրենց կատարած գործի բարձր գիտակցությամբ, այն խոր հավատով, որ իրենց ներկայացնումները հաստատում են

նորանվաճ իշխանության դիրքերը։ Մի ժամանակակից պատմում է, թե ինչպես Պաղոս-Շիլիսա գյուղի գեղջկուհի Խանումը ներկայացումից հետո Հասմիկին և մյուս «դերասաններին» հրավիրում է իր տուն կարտոֆիլ (այն ժամանակ միակ սնունդը) ուտելու, ողջունելով նրան այսպես. «Հասմիկ, քո եկած համփեն կանաչ բսնի, վայ, էս ինչ լավ բան է եղել քատրոնը»<sup>70</sup>:

Այս ընդհանրությունները պարզ է, որ պետք է իրենց դրական դերը կատարեին դերասանութուն կյանքում, կյուրով Յարովայայի կերպարը մոտ ու հարազատ դարձնելով նրան։

Թատերական ժննադատությունը ժամանակին առանձնապես գոհ է մնացել երկու դերակատարից՝ Հասմիկից և Արուս Ռոկանյանից, որք կատարում էր նրա հակառակորդի՝ Փանովայի դերը։ Իսկ մյուսների մասին, ասված է, որ «ընդհանուր առմամբ հաջող էին, սակայն զգացվում էր ոչ բավարար յուրացում և տիպերի ամբողջական բացակայություն, որը նորից բացարկվում է այն հանգամանքով, որ մեր քատրոնի ստեղծագործող պերսոնալը լրիվ ծանրություն չունի 1918—1919 թթ. միջավայրին»<sup>71</sup>։ Հասմիկի կապակցությամբ, ընդհակառուկ, նշվել է, թե «լրիվ պատկերացվեց տիպը... տալով ազդու և լրիվ խաղ»<sup>72</sup>։

Բեմադրող ոեմիսյոր Անոն Քալանքարի ընդհանուր մտահղացումը՝ թե ինչպես հեղափոխական գաղափարները հաղթանակ տարած ժողովրդի ամենալայն խավերի մեջ, թե ինչպես հեղափոխական իրադրությունը շարժա-

յին մարդկանց հեռուսներ է դարձնում՝ իր մարմնացումը գտավ Հասմիկի պատկերած Լյուբով Յարովայայի մեջ:

Ժամանակակիցների հիշողության մեջ քարժ է մնացել Հասմիկի խաղը առաջին ու վերջին գործողության մեջ: Հոգնած, փոշոտ, երկար հանապարհ անցած, պարզ ու հասարակ մի վարժուինի էր դա: Աչազբավ էր երազույցը Պանովայի հետ. վերջինս ագրեսիվ էր, բունուորին Հասմիկի Յարովայան հակադրում էր պարզություն, շիտակություն, ազնվություն և խորին համոզվածություն:

Հասմիկի Յարովայան մեծ ազդեցության էր հասնում հատկապես վերջում, երբ համոզվում էր, թե ով է իր ամուսինը՝ Յարովոյը և հոգեկան ծանր պայմանից հետո հեղափոխական շահները վեր դասելով իր անձնական երշանկությունից, անողոք դատաստան էր տեսնում ամուսնու նկատմամբ: Գերասանուին համոզում էր, որ այլ մեկմ, բայց խորհ ապրող կինը կառող էր անխնալինել իր մեջ այն ժամ ուժ և արիություն գտնել, որ խեղդի հոգու խորություն բուն դրած սերը, երա հետ կապված բոլոր բնույթ հիշողությունները:

Ամենարերե շեղումը հեղինակից՝ դերասանութունի կարող էր կանգնեցնել մի կողմից պարետիկայի վտանգի առաջ՝ հեռուսությունը պատկերելիս, մյուս կողմից՝ մերժութափմանից, երբ Յարովայան կանգնած է հոգեկան ալեկոծությունի առաջ: Սակայն Հասմիկը ոչ միայն բարեհաջող կերպով կարողացել է խուսափել մեկից մյուսից, այլև իր գուսավ ու զարմանալի հավաք կատարմամբ թերևս առաջինն է եղել, որ գտել է պարզ ու ան-

պահույն արագայտչածերը, որոնք սովետական մարդկանց պատկերման հիմքը կազմեցին սովետահայ բանակում: Հասմիկը նիշտ էր հասկացել կյուրով Յարովայային. նա պատկերում էր նրա նոգեկան կյանքը ոչ թե նշացող գույնեռով, այլ գուապ, մլատ շորիխնեռով: Դա մի կին էր, որ գուցի և միայնուրյան մեջ ազատուրյուն էր տալիս իր արցոններին, բայց շրջապատին չէր ուզում զգացնել տաէ, թե ինչ է կատարվում իր ներսում: Եվ դա շատ ավելի խորն ու նուզիշ էր դարձնում նրա ապրած դրաման:

Հասմիկը կատարման սկզբունքով մոտ էր կանգնած վերա նիկոլաևնա Պաշեննայային՝ կյուրով Յարովայայի կերպարի անդրանիկի մարմնավորողին. «Յարովայան, — ասում է Պաշեննայան պատմելիս, թե ինչպես է զեր պատրաստել, — պարզ, համեստ, գուապ կին է, այնպես որ ոչ մի առանձնակի կեցվածք, շարժում ևս չէի որոնում, և այդպիսիք չէին ել կարող թելադրվել դերի հենց ներքին էուրյունից»<sup>73</sup>:

Նույնը և ներսուրյունը պատկերելիս: Նախ՝ նկատենք, որ Հասմիկի խաղում զիսավորը ոչ այնքան նոգեկան ներքին սլայքարի թեման էր, որքան նեղափոխական գաղափարների հաղրանակի պատկերումը: Հետո, կյուրով Յարովայայի թեմանկարը գծելիս, Հասմիկը ելել է թե ներսուականուրյան պատկերացման արդեն գոյություն ունեցող թեմական պատրաստ հնարքներից, այլ կերպարի և նրա ապրած դրամափկական դրույթան ունեալ զգացողուրյունից: Ահա այդ ունեալ զգացողուրյու-

նից էլ ծնունդ էր առնում նշմարիտ ներսուրյունը, ժողովրդի, նեղափոխուրյան նկատմամբ ունեցած պարտի գիտակցուրյունը: Հասմիկի ներսուրյան մեջ չկար առտամին ներսականուրյուն, շարլոնացած շարժուձե, պարետիկա, պատկերայնուրյուն (կարտինուստ)՝<sup>74</sup>: Դա ժողովրդական ներսուրյունն էր, որ չերմացած էր անկեղծ զգացումով, նեղափոխուրյան բովում նվաճված քարձուարդիկայնուրյան բմբոնումով:՝ Նույնիսկ ներկայացման վերջում, երբ Լյուրով Յարովայան վերշնականացես ազատվել էր իրեն տանջող ցավերից, նոգեկան հակասուրյուններից, և Կոշկինք շնորհակալուրյամբ սեղմում էր նրա ձեռքը. Հասմիկ-Յարովայան ներկայանում էր ոչ այնքան իր կատարածի գիտակցուրյամբ հապատ, որքան ներմին վեհուրյամբ գեղեցիկ, այսինքն՝ նեղափոխուրյան, ժողովրդի նկատմամբ ունեցած պարտի մեջ մասուր և նոգեպես հանգիստ:

Հետագայում մեր թեմը հանախ անդրադարձավ նման կերպարների մարմնավորման, ունեցավ նույնիսկ Լյուրով Յարովայի այլ դերակատարներ թափի և Թքիլիսի հայ քատրոններում<sup>75</sup>: Սակայն, որքան էլ ժամանենի Յարովայան ուշագրավ լիներ, նետաքրիեր և յուրահատուկ, միևնույն է՝ ոչ դերասանունու ստեղծագործուրյան, ոչ էլ քատրոնի պատմուրյան մեջ նա շգրավեց այն տեղը, որ ամենայն իրավամբ պատկանում է Հասմիկին: Վերջինս սովետական դրամատուրգիայում զծված առաջին սովետական դրական կենց առաջին դերակատարն է: Հասմիկը առաջինն էր, նետեապես և նոր մար-

դու թեմական մարմնավորման դժվարին խնդրի լուծման մեջ ելակետ, մեր կարծիքով՝ նիշտ և գալիք զարգացման հնարավորություններով լի:

Պատմական մոռեցումը տվյալ դեպքում չէ թե անխուսափելի է, այլև խորապես նիշտ:

Քսանական բվականներին, մանավանդ տասնամյակի սկզբին, երբ գրականության մեջ ոչ սակավ բարձրանում էր այն հարցը, թե նեղափոխությունը չի ննջի արդյուն ինտելիգենցիային, Տրենյովն առաջիններից էր, որ ի դեմք Յարովյայի պատկերեց մի ուսուցչունու, որ իր նակատագիրը կապում է նեղափոխության, ապրատամբ ժողովրդի գլուխ անցած կուսակցության նետ, և դա էլ օգնում է նրան ձեռավորվելու և անելու, որպես սոցիալիստական ժումանակաշրջանի անհատականություն<sup>76</sup>: Դա իր ժամանակին, ինչպես և նիմա, ուներ դաստիարական խոշոր նշանակություն: Յարովյայի նակատագիրը սովորեցնում էր, և այժմ էլ շարունակում է սովորեցնել, անսահման հավատարմություն նեղափոխությանը, կյանքի իմաստը նիշտ որոշելու ընդունակություն, որ նշանակում է երջանկությունը տեսնել ժողովրդական շահերի համար մղվող պայմանում, ուր՝ բուրժուական հասարակության մեջ աղավաղված շատ և շատ բարոյական հասկացողություններ այժմ վերագտնում էին իրենց նշմարիտ իմաստն ու հմայքը հակառակ նեղ, եսասիրական, բաղմենիական ըմբռնման<sup>77</sup>:

Սկզ նորը, որ բերում էր իր նետ Հասմիկի խաղը, ներսականի արադիցիոն ըմբռնման նետ հակառակ յար-

մեջ լինելով, անհավանական չէ, որ իր ժամանակ չի  
ըմբռնվել և այդ պատճառով էլ ըստ աշխանավույն չի  
գնահատվել:

Դա մի սկզբունքային խնդիր է, որի կողմից լուս-  
րյամբ չի կարելի անցնել: Գրականության պատմու-  
թյունից բազմարիվ օրինակներ են հայնափի, թե ինչպես  
որեւ գիրք նորարական լինելով՝ ժամանակակիցների  
կողմից չի ընդունվել և հետո ապագայում միայն զալիք  
սերունդներն անհրադարձել են ու նրա մեջ տեսել ու  
գնահատել են նենց այն, ինչ հեղինակի ժամանակակից-  
ները մերժել էին: Գրասանի արվեստն այդ տեսակետից  
դժբախտ է, որովհետեւ այն կա միայն ստեղծագործու-  
թյան պահին՝ ներկայացման ժամանակ, իսկ հետո պահ-  
պանվում է ժամանակակիցների գրած ժննադատության  
և հիշողությունների մեջ և համենայն դեպք նրանց ըն-  
կալմամբ, որ բոլոր դեպքերում չեն, որ ազատ է նախա-  
պաշարումներից, ավանդական պատկերացումներից:  
Պրոֆ. Ս. Ն. Գուրիլինը, օրինակ, իր մի հետաքրքիր ու-  
սումնասիրության մեջ ցույց է տվել, որ Օքելոյի կեր-  
պարի այն մեկնարանությունը, որի համար այնպիս մե-  
ծարվեց Ա. Ա. Օստումեր, նրանից առաջ, դեռևս անցյալ  
դարի 80-ական թվականներին արտահայտել է Ա. Պ.  
Լենսկին նույն Մոսկվայի Փոքր բատրոնի բեմից և ան-  
հաջողության հանդիպել: Հետազոտողը դա բացար-  
դում է նորարարությամբ, որ կար լենսկու խաղի մեջ՝  
հակառակ շեխապիրյան հերոսի ավանդական ըմբռնման,  
որից կառշած լինելով՝ այն ժամանակվա բատերական

հասարակայնուրյունը տակամին պատրաստ չէր ընդունելու:

Մեզ բվում է, որ այդպիսի օրինակ է նաև Հասմիկի Լյուրով Յարովայան: Եվ այդ աևսակետից անշափ նետառքիր է Գևորգի արած մի դիտողուրյունը: «Հասմիկի դեռակատարուրյան շատ կողմերը, — գրում է նա, — որ բննադատիկ են իրեւ քերե «քերուրյուններ»՝ ժամանակին պիտի կազմեն այն զեահատելի հատկանիշները, որոնք պիտի կազմեն մեր քառերական արվեստի հիմնական հատկանիշները, իրեւ նետագա զարգացման մեկնակեաներ սոցիալիստական ուսալիզմի արվեստի համար»<sup>78</sup>:

Չենք կարող չկշտամբել Հասմիկի մասին գրողներին և արտահայտվողներին, որ մինչև հիմա լոռուրյան են ավել Լյուրով Յարովայայի դերը, ոչ միայն չեն անդրադարձել, խոսել ու զեահատել, այլև հանախ զլացել են ամենապարզ հիշատակուրյունն անել նրա խաղացած լավագույն դերերի շարքում: Հարցը հաջողության շափր չէ, այլ այն, որ այս դեռակատարումը բացի իր պատմական իմաստից, սկզբունքային արժեք ունի: Նրա նշանակուրյունը դուրս է զայխ դերասանութու ստեղծանակուրյան շրջանակներից այն իմաստով, որ սովորական մարդու բնմական մարմնավորման տրադիցիան նախ և առաջ Հասմիկի անվան նետ է կապվում:

\* \* \*

Լյուրով Յարովայայի դերակատարումը սկզբունքային նշանակություն ունի մեզ նամար նաև այն իմաստով, որ այստեղ լիովին նադրահարված էր կենցաղայնությունը: Կենցաղայնության նադրահարման պրոցեսը, ինարկե, ավելի վաղ էր սկսվել, բայց այս դերում առանձնապես զգալի դարձավ նադրահարման արդյունքը: Կենցաղայնությունը իր տեղը զիշել էր կյանքի երեխույրների սոցիալական բմբոնմանը: Եվ դա դերասանություն հնարավորություն էր տալիս նիշտ և խոր բմբոնելու այն, ինչ ինքը մի ժամանակ տեսել ու ապրել էր կյանքում, վերագննահատել շատ արժեքներ և նոր բովանդակություն դնել իր վաղեմի տպավորությունների մեջ:

Ուպեսզի սխալ շնասկացվի՝ շտապենք ասել, որ դերասանութին կենցաղագրական տարրեց խսպան շնաժարվեց: Հադրահարված էր կենցաղայնությունը ուպես կյանքի պատկերացում, սակայն կենցաղագրական տարրը, ուպես կոլորիտի արտահայտություն, շարունակում էր պահպանվել: Եվ դա Հասմիկի բեմարվեստի առավելություններից մեկն էր: Դրա նամար էլ Հասմիկի պատկերած կերպարների կապը իրականության նետ, նոդի ու ջրի նետ, նրանց ծնող միջավայրի ու դարաշրջանի նետ շատ ամուր էր: Ներբեք Հասմիկի կերպարները վերացական կամ ընդհանուր չեն: Հասմիկի բեմարվեստի առավելություններից մեկն էլ նենց այն էր, որ նա կերպարը դարձնում էր շոշափելիության շափ կոնկրետ

բնավորություն, բացելով մեր առաջ նրա սոցիալական էությունը, նրա կյանքի փիլիսոփայությունը։ Այդ տեսակետից Հասմիկի բեմական ստեղծագործության մեջ բնորոշ օրինակներ են Օստրովսկու Կարանիխան և Մանավանդ՝ գորկիական կերպարների շարքը։

Հասմիկը, որպես ոուսական և հայկական քատրոնների ոեալիսատական տրադիցիաների ոգով դաստիարակված զերասանուինի, կերպարը չէր պատկերացնում կենցաղից, կոնկրետ՝ միջավայրից դուս: Եվ երե նրա խաղի առանցքը մարդու հոգին էր, նրա սոցիալական բնույրը, ապա շրջանակը կենցաղն էր: Այդ մոտեցումը նկատում ենք նաև Գորկու մոտ: Դժվար թե կարելի լինի ցույց տալ գորկիական որևէ կերպար, որ կենցաղագրական ֆոն չունենա: Գորկու նույնիսկ այն ներոսը, որ ծանր ովքերգուրյուն է ապրում, դարձյալ իր վրա կրում է ուրույն միջավայրի կնիքը: Հասմիկը, որ ինչ չի հանդիս եկել Գորկու պիեսներում, պահպանում էր նրա դրամատորգիական այդ առանձնահատկուրյունը, որպես բնդիանուր սկզբունք:

պես ընդհանուր սկզբունք։ Այդ սկզբունքի կիրառման փայլուն օրինակներ է տվել Հասմիկը, բայ Էուրյան հակադրվելով այն արվեստագետներին, որոնց մեծ ընդհանրացումների ձգտելով, հաճախ կերպարն այնպես էին կտրում իրենց միջավարից, որ խաղն ստացվում էր վերացական և արսորանական։

Հասմիկի ստեղծած կերպարները հնարովի չեին:  
Հնարված ստեղծագործական կյանքը շատ կարևոսէ

է լինում: Նույնիսկ մի այնպիսի ներարային կերպար, ինչովիսին Վիտտիխենն («Դրասույզ գանգ»), որին դեռասանութին հասնում էր իր երեակայության ուժով, նույնպես կենսական նշմարտությամբ էր հազեցած և այնան, որ համոզում էր միանգամից, և տպավորությունն էլ այնպես էր, թե Վիտտիխենի դերը միայն այդպես կարելի է խաղալ: Բայց նա նույնան ափախկ էր և Ուստիանի մեջ («Քաջ նազար»), որը նույնպես նրա նաշողված դերերից էր, մեր ննադատության մեջ վաղուց դիտվել է, թե ինչպես, «Երբ Ուստիան-Հասմիկը աստիճաններից վեր է բարձրանում դեպի պատշզամբ, նրա կրնակը թրռուն, իմաստալից, խոսուն և մի արտահայտիչ կերպար է»<sup>79</sup>: Մենք շենք տեսնում դեմքը, աշխերը, արտահայտությունը, բայց զգում ենք նոգերանությունը:

Այդ մեծ րոիշմբ, որ նա կարողանում էր կատարել Ուստիանից մինչև Վիտտիխենն, կոլորիանվ, ու հումորվ լի հայկական ափախկ գեղջկունուց մինչև հետարային այն պառավը, որ իր ձեռքի նիպոտով սաստում էր ամպրոպային կայծակներով լի երկինքը, վկայում էր, թե որպիսի ընդարձակ շնչի տեր դերասանութին էր Հասմիկը, թե որշափ նրան նարազատ ու մաշելի էր թե հայկական, թե գերմանական ֆոլկլորը: Հարցը լոկնդգրիումը չէ, այլև գեղարվեստական իմաստով համոզիչ լինելը, միշտ ընդհանրացման բարձրության վրա գտնվելը: Հասմիկի արվեստի կարեռ կողմերից մեկը

նամոզուրյունն էր, իսկ ստեղծած կերպարների գլուխ-  
վոր ակունքը՝ կյանքը:

Հ. Հառապամանի պիեսի բեմադրող ուժիսյոր Քա-  
լանքարը պատմում է, թե «Հասմիկն ինչպիսի անմի-  
շականուրյամբ, ստեղծագործական որպիսի պատրաս-  
տակամուրյամբ կպակ զործի... փորձերի ժամանակ  
Հասմիկը,— պատմում է նա, — ասես կախարդված լի-  
ներ, մի անսակ մոլեգնուրյամբ բռնված՝ նա ազարտով  
փնտռում էր ակցենտներ ու երանգներ, հարմարավոր  
ինտոնացիաներ, շարժումներ, հայացքներ».

Հիշում եմ, թե ինչ հեճանեով էր ինքը ընկալում իր  
այդ գյուտաւորը, կամ ինչպես մանկան նման ուրախանում  
էր, երբ ուժիսյորի ցուցմունքները նրան դուր էին գա-  
լիս: Այսպէս, օրինակ, ավարտական փորձերից մեկի  
ընթացքում, առաջին զործողուրյան մեջ, երբ ըստ պիե-  
սի սկսում է լեռնային երկարատև մի ամպ-  
ռապ, երկինքը դդրյում է և այս ու այն կող-  
մից սկսում են փայլատակել կայծակները, ես առա-  
ջարկեցի նրան վանել այդ կայծակները իրենից իր ձեռ-  
քի նիպոտով: Հետիարային տրամաբանուրյամբ արդեն  
բոլորովին ներծծված Հասմիկը անասելի շափով ուրա-  
խացավ այդ առաջարկից, փոքրիկ աղջկա նման սկսեց  
բռչկոտել, ապա լրջացավ ինչպես ընդունված է անել,  
«մտավ իր դերի մեջ» և փորձեց իրագործել իմ առաջար-  
քը: Սացգեց բացառիկորեն տպավորիչ մի տեսարան:  
Առաջարկուրյունը գայրակողիշ էր, բայց վստան չէի նրա

է լինում: Նույնիսկ մի այնպիսի հետիարային կերպար, ինչուիսին Վիտավիսենն («Զրատույզ գանգ»), որին դեռասանումին հասնում էր իր երեակայուրյան ուժով, նույնպիս կենսական նշմարտուրյամբ էր հազեցած և այնքան, որ համոզում էր միանգամից, և տպավորությունն էլ այնպիս էր, թե Վիտավիսենի դերը միայն այդպիս կարելի է խաղալ: Բայց նա նույնան տիպիկ էր և Ուստիանի մեջ («Քաջ նազար»), որը նույնպիս նրա հաջողված դերերից էր, մեր հնեադատուրյան մեջ վաղուց դիտվել է, թե ինչպիս, «Երբ Ուստիան-Հասմիկը աստիճաններից վեր է բարձրանում դեպի պատշգամբ, նրա կոնակը քրոռուն, իմաստալից, խոսուն և մի արտահայտիչ կերպար է»<sup>79</sup>: Մենք շենք տեսնում դեմքը, աշերը, արտահայտուրյունը, բայց զգում ենք նոզերանուրյունը:

Այդ մեծ բոիչքը, որ նա կարողանում էր կատարել Ուստիանից մինչև Վիտավիսեն, կողորդիտով, ու նումուռվ լի հայկական տիպիկ գեղջկունուց մինչև հետիարային այն պառավը, որ իր ձեռքի նիպոտով սաստում էր ամպրոպային կայծակներով լի երկինքը, վկայում էր, թե որպիսի ընդարձակ շնչի տեր դերասանունի էր Հասմիկը, թե որշափ նրան հարազատ ու մաշելի էր թե հայկական, թե գերմանական ֆոլկլորը: Հարցը լոկ ընդգրկումը շէ, այլև գեղարվեստական իմաստով համոզիչ լինելը, միշտ ընդհանրացման բարձրուրյան վրա գտնվելը: Հասմիկի արվեստի կարելոր կողմերից մեկը

համոզությունն էր, իսկ ստեղծած կերպարների գլխավոր ակունքը՝ կյանքը:

Հ. Հառապտմանի պիեսի բեմադրող ուժիսյոր Քալանքարք պատմում է, թե «Հասմիկն ինչպիսի անմիշականությամբ, ստեղծագործական որպիսի պատրաստակամությամբ կազմվ զործի... փորձերի ժամանակ Հասմիկը, — պատմում է նա, — ասես կախարդված լիներ, մի տեսակ մոլեգնությամբ բռնված՝ նա ազարտով փնտռում էր ակցենտներ ու երանգներ, հարմարավոր ինտոնացիաներ, շարժումներ, հայացքներ».

Ճիշում եմ, թե ինչ երեվանեով էր ինքը ընկալում իր այդ գյուտերը, կամ ինչպես մանկան նման ուրախանում էր, երբ ուժիսյորի ցուցմունքները նշան դուր էին զալիս: Այսպես, օրինակ, ավարտական փորձերից մեկի լինքացնում, առաջին զործողության մեջ, երբ ըստ պիերանքարքում, առաջին զործողության մեջ, երբ ըստ պիերանքարքում է Եռնային Երկարառե մի ամպուի սկսում է Եռնային Երկարառե մի այս ու այն կողուպ, Երկինքը դդրդում է և այս ու այն կողմից սկսում են փայլատակել կայծակները, ես առաջարկեցի նրան վաճել այդ կայծակները իրենից իր ձեռքի ճիպոտով: Հեքիարային տրամարանությամբ արդեն բոլորովին ներծծված Հասմիկը անասելի շափով ուրախացավ այդ առաջարկից, փոքրիկ աղջկա նման սկսեց քոշկոտել, ապա լրջացավ ինչպես ընդունված է ասել, իմ առաջարկութել, ապա լրջացավ ինչպես ընդունված է ասել, ամուսի իր զերի մեջ» և փորձեց իրազործել իմ առաջարկությունը առաջարկությունը զայրակղիչ էր, բայց վստահ չէի նրա Սուաջարեկությունը զայրակղիչ էր, բայց վստահ չէի նրա ապատակահարմարության, վախսնում էի, որ կոմիկա-

կան տպավորություն բողնի և ծիծաղ առաջացնի, միքան, որ բոլորովին կկասեցներ քեմական տվյալ մոմենտի տպավորությունը: Սակայն Հասմիկը իր կատարումով խսկույն փառատեց ամեն մի վախ ու կասկած: Նա կարողացավ ստեղծել հոյակապ, տիտանական մի մոնումենտ: Խոիս մազերով, երեսով դարձած դեպի երկինք՝ կանգնած էր նա քեմի մեջտեղում, «Չուրչը» կայծակ ու որոտ և ժանի այս վերշինները ուժեղանում էին, այնքան Հասմիկի կեցվածքը խրոխանում էր և բվում էր, քեզ նա աշխի առաջ մեծանում է, դառնում է հոկայանման, նրա ձեռքի նիպոտը արդեն ընկալվում էր որպես դյուրական գավազան, որով նա ցրում ու փառատում էր ամպրոպային կայծակները: Նույնիսկ ամպրոպի քեմական էֆեկտ սարժավորող էլեկտրամանտյոր ընկ. Մանկալյանը հիացմունքով բացականչեց. «Արժե այս տեսակ դերասանուին համար աշխատել. ես ինչու իմ կայծ ու որոտից սարսուն զգացի»<sup>80</sup>:

Հասմիկի խաղը Վիտիխնենի դերում պարզ էր ու անմիջական, ինչպես պահանջում էր հետիարի ոճը, բայց և միաժամանակ էուրյամբ հումկու և տարերային. ասես բնուրյան ուժն ամբարած լիներ իր մեջ: Չեն կարող շնամածայնել ներկայացման ոեժիսյորի հետ, որ Հասմիկին հաջողվել էր ստեղծել «մոնումենտալ մի կերպար, որի մեջ հետիարայինն ու իրականը, կենսականն ու ֆիլիսոփայականը կազմում էին բացառիկ ամբողջականություն»<sup>81</sup>: Այսպիսով, Վիտիխնը առաջին դերերից էր, որով Հասմիկը ոտք դրեց քեմատաշչին դերերից էր, որով Հասմիկը ոտք դրեց քեմա-

իան ստեղծագործության մի այնպիսի շրջան, երբ նա կարողացավ ոչ միայն ընդհանուրը մարմնավորել մասնավորի մեջ, այլև հակառակն անել, այսինքն՝ մասնավորն ընդհանրացնել:

\* \* \*

Սյդ սկզբունքի կիրառման փայլուն օրինակներից է նաև Հասմիկի Կարանիսան: Սյս դերը նա խաղացել է և անհցյալում<sup>82</sup>, և սովետական քատրոնում: Այստեղ նա մրցակից շուներ հայ քատրոնում, երե շասենի, որ այդպիսի կատարում եղակի է պատահում նաև ոուսական քատրոնում: Անցյալում խաղացել է ֆիշ, որ բան հայտնի է, միայն մեկ անգամ, իսկ սովետական քատրոնում քավական երկար ժամանակ: Վերջինս առաջինի կրկնությունը չէր, այլ մի նոր որակ, ըստ ամենայնի մշակված, մեկնարանուրյան տեսակետից բոլորովին մի այլ ստեղծագործություն, թեմական արվեստի եղակի նվաճում, որը քատրոնի պատմության մեջ կմնա իրեւ կատարելուրյան օրինակ այսուհետեւ խաղացող բոլոր հայ կարանիսաների համար:

«Հասմիկը, — զրում է «Ամպրոպ» ներկայացման բնեադատներից մեկը, — ուղղակի ժանդակում է Կարանիսայի դերը, միաձուլելով նրա ամենաբնորոշ գծերը, նրա դեսպոտիզմը, կոպտմությունը, բարացած տրադիցիաները, ֆորմալիզմը, և այնքան է բյութեղացնում նրա ամենանրին գծերը, որ հանդիսականին ներկանալու համար:

յանում է մի անքերի տիպ»<sup>83</sup>: Անա թե ինչ է գրում մի այլ բննադատ. «Կարանիխան, այդ բարբառու կինը, իր ամբողջ հասակով կանգնած է մեր առաջ, շարժվում, խոսում, հրամայում է այնպէս կենդանի կերպով, որ կարծես մի ռոպէ մոռանում ենք, որ այստեղ ժողովրդական դերասանունի Հասմիկն է կանգնած, այն բան իրական, այն բան անկեղծությամբ է մարմնավորված այդ տիպը, այնպէս խորը կերպով է ըմբռնել ժող. դերասանունին այդ դաժան կենց հոգեբանությունը»<sup>84</sup>:

Տարիներ են անցել, բայց մինչև հիմա էլ մեր հայցի առաջ է Հասմիկի Կարանիխան՝ սաստող ձայնով, աշենրի ահարկու արտահայտությամբ: Բավական է հիշել նրա առաջին մուտքը. հանգիստ, ծանր, գալազանը ձեռին, շորս կողմը դիտելով: Մի բառ, մի հայացք, մի շարժում և հանդիսականը ամիշապէս զգում էր կերպար: Ո՞վ չի հիշում Հասմիկի խիստ ու ազդեցիկ Կարանիխան՝ Տիխոնի և Կատերինայի հրաժեշտի պահին: Շատ հանգիստ, բայց հրամայական տոնով ասված խոսքը, որ սաստում էր բոլորին, առաջ բերում ծանր ու ննջող մի զգացում, ողորմելի Տիխոնի մեջ՝ վախ, ամուսնու նկատմամբ մի պահ չերմացած Կատերինայի մեջ՝ տագնապ և անհանգստություն: Կամ կարելի՞ է մոռանալ Կատերինայի խոստվանության տեսարանը. Հասմիկի Կարանիխան էր խստահայաց, ապառաժի պէս բարձացած: Նույնը և վերջում. խեղդամահ եղած Կատերինայի դիակի շուրջը շփոր է, հուզմունք, լաց ու կոծ. միայն Հասմիկի Կարանիխան էր, որ իրեն անվրդով էր պա-



Քաջ Նազար, թ. Մուրադյան, Ռատիան՝ Հասմիկ  
(«Քաջ Նազար»)





Նատալյա՝ մի. Վարդանյան, Պասսա՝ Հասմիկ  
(«Պասսա Ժելեզնով»)

հում ու դաժան անտարբերությամբ կարգի հրավիրում սրդուն. «Բավական է, սրա համար աղոքելն էլ մեղք է».

Հասմիկի Կարանիխան խոշոր ընդհանրացում էր, իր տեսակի մեջ եզակի, ներգործության իմաստով՝ ուժգին: Դա մի սոցիալական լայն կտավ էր: Սեփականապիրական աշխարհի ամենածանր ու ամենամռայլ կողմերն էին մարմհացած նրա ժանդակած կերպարի մեջ:

Հասմիկն այդ դերում կարողանում էր խտացնել, ամրացնել մի ամրող սոցիալական միջավայր: Եթե անցյալում, Հասմիկի խաղով Կարանիխան մնում էր, այն էլ ոչ լիովին, բնտանեկան բռնակալի պատկերման շրջանակներում<sup>85</sup>, ապա այժմ նա ոչ միայն ավանդական կենցաղի ներկայցուցիչ էր, այլև նետամնացության, խավարամտության բռնակալ պահապան: Հանդիսատեսին Հասմիկը տեղափոխում էր Օստրովսկու դարաշրջանը: Եթր տեսնում էիր Հասմիկի Կարանիխան, միանգամայն պարզ էր դառնում, թե ինչու Տիխոնն այդպես բռկամորք է, խեղճացած ու կամագործ և թե ինչու է կատերինան այդ խեղդուկ միջամալյարից պրկվելու, ազատ շունչ ժաշելու անդիմադեմի տենչով բռնված:

Հասմիկի թեմական արվեստի զարմացնող ուժն այն էր, որ Կարանիխայի անողոքությունն ամենախտացած և մռայլ գույներով ներկայացնելով, կարողանում էր միաժամանակ զգացնել տալ, որ նա էլ «ստրուկ է մի ուրիշ, ավելի մեծ տիրակալի, որ կոշվում է նահապետականություն»<sup>86</sup>:

Հասմիկի կատարումը շահում էր մեծապես և այն Հասմիկ—6

բանից, որ նրա խաղընկերներն էին մի կողմից Արութ  
Ռոկանյանը (Կատերինա) և մյուս կողմից Վաղարշ Վա-  
ղարշյանը (Տիխոն): Երեք դերակատար, երեքն էլ լավ:  
Նրանք խաղում էին միմյանց շզիչելով, ավելի շուտ՝ ի-  
րար գերազանցելով և ստեղծելով այնպիսի բեմական  
կերպարներ, որոնք, որպես անզուգական գոհարներ  
պետք է իրենց տեղը գրավեն սովետահայ բեմարվեստի  
ոսկե ֆոնդի մեջ:

Հասմիկի Կարանիխան երեսուց է նաև դերասանունու  
բեմական արվեստի առանձնահատկությունների տեսա-  
կետից:

Նախ՝ բննադատությունը միշտ էլ արձանագրել ե-  
լաւուկ ուշադրություն է դարձել այն բանին, թե Հաս-  
միկը, որ հոչշակ է վաստակել մայրական ամենանհնուշ  
զգացումներ արտահայտելով, ինչպես է կարողանու-  
թրամագծորեն միանգամայն հակառակ դերերում՝ գե-  
ղարվեստական բնդիմարացման այդպիսի ուժի հասնել:

Հետո՝ Հասմիկի նման հմայիշ դերասանունի ֆիշ կա-  
րելի է մատնանշել, բայց նա հարկ եղած դեպքում կա-  
րողանում էր հաղթահարել հմայքը: Կարանիխայի բ-  
ընդհանրապես նման դերերում նրա ահսպան հմայֆից  
հետք անգամ շէր մնում:

(Եվ, վերջապես՝ զարմանալի էր, թե ինչպես Շուշանի  
(«Պեպո») և Ռատիխանի («Քաջ նազար») դերակատարը՝  
այսինքն՝ ազգային կոլորիտի հյուրեղ արտահայտիչը  
կարող է հանդիս բերել ուսական ազգային կոլորիտ  
այդպիսի սուր զգացողություն, շմբալ բնավորության

արտաքին գծանկարի մեջ, բափանցել կերպարի մեջ և  
ըմբռնել նրա էուրյունը: Արդյոք այս զգացողությունը  
դարձրշանի առարկայական նանաշողությունից բացի,  
արդյունք չէր նաև սեփական տպավորությունների  
կուտակման և պոռկման: Ճիշտ չի լինի, եթե ասենք,  
որ նա իր երիտասարդության ժամանակ, բատրոնով  
նախշտակված տարիներին, նահապետական շրջապատի  
մեջ տեսել, զգացել ու ապրել է հայկական կարանիխա-  
ների հալածանքը: ]

\* \* \*

Հասմիկը գորկիական տրադիցիայի լավագույն ներ-  
կայացուցիչներից էր սովետահայ բատրոնում: Գորկու  
դրամատուրգիան մոտ էր ու հարազատ Հասմիկին, նրա  
բեմական զգացողությանը:

Հասմիկի ոչ Վասիլիսան («Հատակում»), ոչ մայրա-  
պետը («Եզոր Բովընվը և ուրիշներ») և ոչ էլ մանավաճդ  
Վասսա Ժելեզնովան ուրույն կոլորիտից գուրկ չէին,  
բայց դեպի այդ շեր բեեռված դերասանուու ուշադրու-  
թյունը, այլ՝ թե ո՞րն է նրանց կյանքի իմաստը: Մրան-  
ցից յուրաքանչյուրը մի ուրույն կերտվածք էր, զարմա-  
նալի տարբեր թե կերպարների բուն էուրյան ըմբռնը-  
մամբ, թե նրանց ծնող՝ սոցիալական միջավայրի զգաց-  
մամբ:

Հասմիկի Վասիլիսան տիրական բնավորությամբ  
կին էր, խորամանկ, գեղեցիկ ու կանացի, գուցե ոչ այն-

բան իւաղացկուն քնչշուրյամբ, որքան կրեռտ, որ միշտ  
էլ զգացնել էր տալիս իր մարմնական հրապույրը: Նրա  
կաճացի նազանքն ու սերեթանքն ինչ-որ հրամայ-  
կան շեշտ էին կրում իրենց մեջ: Սակայն ոչ նազանքը,  
ոչ էլ սերեթանքը չէին կարող Հասմիկի Վասիլիսային  
ևս պահել ամենազարհութելի ոնիրից, որին ընդունակ  
էր դառնում նույնիսկ ամենասիրելի մարդու նկատմամբ,  
եթե նա հանդգնում էր չենքարկվել նրա կրքի բռնկում-  
ներին:

Հասմիկի խաղը Վասիլիսայի դերում միշտ էլ բարձր  
է գնահատվել, դիտվել է որպես «քազմարիվ տարբեր  
խարակտերներ» կերտելու ստեղծագործական վարպե-  
տուրյան ապացույց»<sup>87</sup>:

Վասիլիսայից բոլորովին տարբեր էր մայրապետք՝  
ուույր Մելանիան: Դեմքի գոռոզ արտահայտուրյան,  
խոսքի վերամբարձ երանգի, ծանր շարժման ու պահ-  
վածքի տակ հոգկուրականուրյունը ծողովքի աշքից աշ-  
խատում էր անտես պահել եկեղեցու գործարքը կապի-  
տալի հետ: Բայց հենց որ տեսնում էր, որ հնարավոր  
չէ «խաշով ու ավետարանով մատանել իր երկրային  
հարստուրյունը պահելու համար»<sup>88</sup>, հանդիսավորուրյան  
դիմակը վայր է առնում. նա աշխատում է «անեծնով ու  
հայինյան բներով խափանել Բուլըշովի նշմարիտ և մեր-  
կացնող խոսքերի ուժը»<sup>89</sup>:

Հասմիկը երբեք չէր օգտվում պատրաստի հնարք-  
ներից: Նրա ոչ մի դերը մյուսին նման չէր, որքան էլ  
այդ դերեն ունենային ընդհանուր կողմեր, դրամատի-

կական կամ կոմիկական միատեսակ դրույյուններ։ Միենույն ապրումը տարբեր դերերում նրա մոտ տարբեր հուզական երանգ էր ստանում, նայած ընդհանրապես կերպարի բնույրին ու խառնվածքին։ Երբեք Մելանիան և Կարանիխան, Հասմիկի խաղով, չին կարող միատեսակ բարկանալ։ Մելանիայի հանգստորյունը միայն արտաքին հանդիսավորություն էր, և բարկուրյունը չէր կարող հողազերծ շանել այդ առեւելույթ պատկերի ետև բաժնված հիստերիկ մայրապետին։ Կարանիխան նիշտ հակառակն էր, որովհետև նրա արտաքին երեսույթը միանգամայն ներդաշնակ էր ներքին էությանը. նա Մելանիայի նման չէր խաղում կամ ներկայանում մարդկանց, ներսից էլ այն էր, ինչ որ երեսն էր

դրսից։

Հասմիկին անձանոր, բայց նրա խաղով սբանշացող հանդիսատեսի մտով երբեք չէր անցնի, թէ Մելանիայի, ինչպես և ինարկե Կարանիխայի դերակատարը կյանքում փոթքամարմին մի կին է, դեմքի մեղմ արտահայտությամբ, հոգով բարի ու անշառ։ Այդ աներեակայելու վերափոխումը ոչ միայն հիացնում, այլև զարմացնում էր, մանավանդ որ դերասանուին խաղը Մելանիայի դերում «Եզրո Բուլըշովը և ուրիշներ» ներկայացման շարժային դերակատարումներից չէր, այլ «կատարելագործված խաղ»<sup>90</sup>, որ մեծ շափով նպաստել ու պայմանավորել է այդ բեմադրության հազվագյուտ հաջողությունը։

\* \* \*

Գորկիական կերպարների շարքում առանձնակի տեղ է գրավում Վասսա Ժելեզնովան: Այս կատարումը սկրգութային խմաստ է ձեռք բերում ողբերգականության ըմբռնման տեսակետից:

Այս դերակատարումը ժամանակին իր արժանի գեանատականը շտացավ: Եվ այժմ, թեև բավական ժամանակ է անցել՝ մեր առաջ է կանգնում Հասմիկի Վասսա Ժելեզնովան, որպես կենդանի հիշողություն:

Գործունյա ու եռանդուն Վասսային շշապատելով տկարմիտներով ու հիվանդներով, այլասերվածներով և կամագուրկ մարդկանցով՝ Գորկին կամեցել է ընդգծել ոուսական բուժուազիայի դատապարտվածությունը, սոցիալական անհեռանկարայնությունը:

Հասմիկի խաղի դրականն այն էր, որ Վասսայի կերպարը պատկերելիս սոցիալական սխեմա չէր գծում, ինչպես ընդունված էր ամենամոտիկ անցյալում, երբ պիեսները վուզար սոցիոլոգիական տեսանկյունից էին մարմնավորվում: Հասմիկն անցյալում էլ հեռու էր այդ արատից, բայց այժմ, երբ «Եզոր Բովընովի» բեմադրությամբ գորկիական տրադիցիան սովետահայ բատրոնում զարգացման ավելի բարձր աստիճանի վրա էր գտնվում, դերասանութին ստեղծագործության անհամեմատ ազատ ասպարեզ էր ստացել, մանավանդ որ Գարկու պիեսը մարդկային բարդ և բազմակողմանի հարա-

բերություններով, կյանքի խորագույն նշմարտությամբ,  
անկրկնելի բնավորություններով լայն հնարավորու-  
թյուններ էր ընձեռում:

Դերասանութին նիշտ հանապարհի վրա էր կանգ-  
նած. Վասսայի կերպարը, նրա սոցիալական էությունը  
բեմական տեսակետից լուծելիս նա ելակետ էր ընդունել  
գործող անձի ոչ թե առանձին արտահայտությունները,  
այս կամ այն արարքը, այլ ամբողջությունը, նրա կատա-  
շչապատի հետ, ներքին դեկալարող տենդենցը, ուր  
միահյուսվում են նրա առերեւոյք հակասական գծերը:

Վասսայի սեփականատիրական հոգերանությունն  
արտահայտելիս դերասանութին ոչ թե գրկում էր մարդ-  
կային գծերից, այլ, ընդհակառակը, ցույց էր տալիս, թե  
ինչպիս սոցիալական գոյավիճակը աղավաղել է նրան,  
պայմանավորել անմարդկային հայացք կյանքի նկատ-  
մամբ: Հասմիկի ներկայացրած Վասսան կյանքում ունե-  
րայլ անելիս՝ միշտ ներքին արդարացում էր զանում,  
անկեղծ համոզվածություն, հավատացած, որ ինքն ի-  
րավացի է, որ միայն և միմիայն այդպիս պիտի վարվել:  
Ահա այդ ներքին համոզվածությունն էլ կերպարը դարձ-  
նում էր նշմարտացի, կենդանի և համոզիչ:

Բուժուական հասարակության բնորոշ գծերն էին  
մարմնավորված Հասմիկի պատկերած Վասսայի մեջ:  
Հարազատ մնալով հեղինակին՝ դերասանութին Վաս-  
սային ներկայացնում էր մի կողմից խելոք, լայն քափի  
տեր անձնավորություն, զորեղ և ազդեցիկ, մյուս կող-

մից՝ որպես մեկը սեփականատիրական աշխարհի այլանդակ դեմքերից:

Տեսարանից—տեսարան Հասմիկն ամբողջացնում էր Վասսայի բարդ և նակասական կերպարը: Յուրաքանչյուր հանդիպում, յուրաքանչյուր փոխհարաբերություն, խոսք և արտահայտություն մի նոր կողմից էր բացում կերպարը: Հենց սկզբից ձեր աշխերի առաջ կանգնում էր մեծ գործերի զլուխ կանգած եռանդուն մի ձեռնարկատեր, որի քեզ նաստառուն բայլված էր, քեզ նեռախոսուն արած կարգադրություները, քեզ մարդկանց նետ ունեցած վարվելակերպը կենդանացնում էին կերպարը, նաղորդում նրան նամոզշուրջյան ուժ: Ընդհանրապես խոր ճշմարտացիությամբ էր նագեցած Հասմիկի խաղը:

Տարբեր էր Հասմիկի խաղով Վասսայի վերաբերմունքը դեպի աղջիկները. մեծի նկատմամբ նեղնական, փորդի նկատմամբ՝ նոգատար ու շերմ: Մեծի նետ խոսելիս կոշտ շեշտեր էին զգացվում ձայնի մեջ, փորդի նետ, ընդհակառակը, բնշշանում էր: Բայց այս հակադիր վերաբերմունքը Հասմիկի մեջ միավորվում էր աղջիկների բախտի նկատմամբ ունեցած մի ընդհանուր անհանգստությամբ: Հասմիկի Վասսան շեր կորցնուու խաղաղությունը, երբ իրեն զեկուցում էին ամուսնու գործի նետ կապված դատական բարդացումները: Փողի, ընդհանրապես հարստության շնորհած ուժը Հասմիկի Վասսային ննարավորություն էր տալիս պահել իր անկախությունը, շատուանալ նույնիսկ այն դեպքում, երբ ինքը սախպված է խնդրել, կաշառել: Կամ ինչպիսի՝ ար-

համարհանք կար նրա դեմքին, խոսքի մեջ, երբ շփվում  
էր ենթակաների նետ՝ սկսած բարտուղարումուց, որը  
իր իսկ հանձնարարությամբ լրտեսում էր, վերջացրած  
կառավարիչով։ Վերջինիս նետ Հասմիկի կասան չոր  
ու գործնական էր, կարուկ, իսկ բարտուղարումու նկատ-  
մամբ՝ հոգատար՝ բայց առանց համակրության։

Ինչպիսի անխիղն հանգստությամբ էր նա համոզում  
ամուսնուն՝ բույն ընդունել, կամ ինչպես հաճզիստ էր  
պահում իրեն ամուսնու մահից նետո, կարծես ոչինչ  
չէր պատահել։ Բայց և միաժամանակ ինչպիսի հուգ-  
մունքով էր աղջիկներին պատմում իր կյանքը։ Պատմու-  
թյունը սկսում էր հանգիստ, այնպէս, ասես առանձին  
կարեռություն շտալով կյանք առած և իր դեմ ելած  
հիշողություններին, բայց նետո, երբ սկսում էր պատ-  
մել, թե ինչպես երիտասարդ ժամանակ աւուսինը ըս-  
տիպել է իրեն լիզել կոշիկին քափած սեր, դեմքի ար-  
տահայտությունը միանգամից փոխվում էր, ձայնի մեջ  
դառնագին շեշտ էր մտնում։ Այդ ուժեղ կնոջ աշխերին  
դարձումներ էին երեսում։ Նա ննջող զգացում էր ապ-  
րում։ Ժանր վիրավորանքը, ստորացված, ցեխին խառ-  
նած արժանապատվությունը բռնկում էր, ինչպես ան-  
քեղված կրակը բոցավառվեր բամուց... Այնպիսի դառ-  
նությամբ էր նա վերիշում այն ժանր դեպքը, այնպես  
էր արտահայտվում, կարծես ուզում էր արդարացնել  
իիշ առաջ կատարած իր բայլը՝ ամուսնու սպանությու-  
նը, կարծես միաժամանակ նախապատրաստում էր աղ-  
ջիկներին, ատելությամբ զինում հոր դեմ, որպեսզի

ծանր ու խոր շապրեն վիշտը, հասկանան իրեն, շմեղադրեն:

Վասսայի պատկերման հիմնական մոտիվը Հասմիկի խաղում սոցիալական դատապարտվածությունն էր, ավելի նիշտ՝ Վասսայի անհաջորդյունը, դատապարտվածությանը դիմադրելու նրա անհույս նիզը, տեր ու տիրակալ լինելու կիրքը:

Այս մոտիվը որոշ դերասանութիւններ արտահայտում էին այն փոփոխությամբ, որ ապրում էր Վասսայի բեմանկարը՝ ներկայացման ընթացքում. սկզբում տիրական, ուժեղ, կամային, խսկ վերջում՝ քոյլ, ընկնված, անվստահ: Հասմիկն այդ ճանապարհով շգնաց: Այդ երկու իրարամերձ կողմերը Հասմիկի մեջ ապրում էին միաժամանակ: Հասմիկի մոտեցումը մենք գտնում ենք ավելի նիշտ:

Այդ ամենից ավելի արտահայտվում էր Վասսայի և Ռաշելի հանդիպման պահին:

Հասմիկը, ինչպես հայտնի է, արտահանապես խոշոր էր, ձայնն էլ առանձնապես հնչեղ չէր. սակայն Վասսայի դերակատարման ժամանակ նա կարծես խոշորանում էր, ձայնն էլ ասես խրոխտություն էր ձեռք բերում: Նա շատ ավելի խիստ ու ազդեցիկ էր, բան ուրիշները, որ նույն դերի համար արտադին տվյալներով բվում էին ավելի համապատասխան:

Ռաշելի հետ ունեցած տեսարանումն էլ Վասսան շարունակում է մնալ իր արտաքին խստության մեջ: Այս դեպքում դա շատ ավելի կարեոր էր, որովհետեւ դի-

մացը կանգնած էր ոչ միայն անձնական, այլև դասակարգային հակառակորդը: Երբ նա մերժում էր Ռաշելին, ասելով, թե իր զավակները ձեռներն են, բոռները մատները՝ մենք հավատում էինք, որ նա չի զիջի, չի կարող զիջել բոռանը, բանի որ երան իր ձեռքում պահելով՝ նա ապագայից կառչելու վերջին փորձն է անում: Նա ասում էր չեմ տա՝ զգացնել տալով իր վճռի անբեկանելիուրյունը: Ռաշել—Արուս Ռոկանյանի անվրդով հայացքը, ընդհանուր հանգստուրյունը, հանգիստ ձայնը բոլորովին այլ երանգ էին հաղորդում տեսարանին. զգացվում էր, որ Վասար-Հասմիկն աշխատում է տիրել իրեն, բույլ շտալ ներքին անհանգստուրյանն ու տագնապին արտահայտվելու:

Մի կողմից արհամարհանք և ատելուրյուն կար Վասայի ղեմքին Ռաշելի նկատմամբ, մյուս կողմից՝ հակառակորդի ուժի, երա խելքի ու կամքի, համառուրյան ակամա խոստովանուրյուն: Մի խոսքով՝ այն բանկազին հարստուրյունները, որոնցից խպառ զուրկ էին իր ժառանգները, Վասար տեսնում էր թշնամու մեջ:

Այն նիզը, որ գործ էր դնում Հասմիկի Վասար՝ իր ներքին ապրումը բացցնելու համար, շատ ավելի ցայտուն էր երեան զալիս, երբ Ռաշելը հայտնում էր որդու ֆեղյա ժեկեզովի անհուսալի վիճակը: Հասմիկը ծանր մուտք է կոկորդը, հանում էր բաշկինակը, բայց ձեռքը դեռ աշխատած էր շտարած կարողանում էր այնպես ինքն

իրեն տիրապետել, որ հակառակորդը մի պահ անգամ շզգա իր բուլուրյունը:

Հասմիկն այստեղ արտահայտում էր մի կողմից մայրական կսկիծը, մյուս կողմից՝ իր սոցիալական գործունեության մեջ իսկապես վերջինը լինելու դրաման:

Հասմիկը շտեսնված ուժով էր ցույց տալիս, թե ինչ-պես ոչ ոմից վախ շունեցող, իր շրջապատում ամենազոր Վասսան, ներքուստ բոլանում, դառնում էր բոլորվիճ այլ՝ մեաշելի ներկայությամբ<sup>91</sup>, այն մարդու, որը կանգնած էր նրա սոցիալական ուժի՝ սեփականատիրական կարգերի բացասման դիրքերի վրա: Եվ հենց այն, որ Վասսան մեաշելին հանձնում է ոստիկանությանը՝ կրկին անգամ վկայում է նրա և բուլուրյունը, և վախը:

Շատերը Վասսային Բուլըշովի երկվորյակն են համարում: Այդ նիշտ չէ. նրանց մեջ եղած ընդհանուրն այն է, որ երկուսն էլ բուրժուական հասարակության նեխման շրջանի տիպիկ ներկայացուցիչներն են, սակայն այն տարբերությամբ, որ Բուլըշովը դատապարտում, բացասում է իր անցյալն ու իր դասակարգը, Վասսան, ընդհակառակը, արդարացնում, հաստատում է: Հասմիկի կատարման մեջ դրականն այն էր, որ նա ցույց էր տալիս այդ ինհնաւարդարացման նիմիք, ապագայի՝ հեղափոխության նկատմամբ Վասսայի հոգում բուն դրած վախն ու անհանգստությունը:

Վասսայի ուժեղ բնավորությունն արտահայտվում է նաև վերջին պահին՝ մահվան տեսարանում: Նա նստած աեղը շնչահեղձ է լինում, քանդում է օձիքը, որ ազատ

շունչ բաշի, ուժ է գործ դնում իր վրա, կամենում է իշխել, քույլ շտալ, որ ֆիզիկական քուլուրյունն ընկնի իրեն: Սակայն չի կարողանում, հենվում է սեղանին, որ շընկնի: Չէ, ուժն այլևս առաջվաճր չէ, չի կարողանում հաստատ կանգնել ոտքերի վրա: Նորից նստեց գահավորակի վրա, աշխերը փակեց. երեխ ուզում է ամփոփվել, կենարոնանալ: Ապա արագ և վնասական մոտենում է լուամուտին, բացում փեղկերը, շոտ է գալիս ապակե աշխերով: Կենդանի զնաց և մեռած վերադարձավ:

Վասսայի մահը սիմվոլիկ իմաստ էր ստանում ներկայացման մեջ: Վասսան և այն դասակարգը, որին պատկանում է նա, որքան էլ իրենցից վանեն սոցիալական գոյավիճակի հետ կապված ամեն մի կասկած, որքան էլ դաժան ուժ գործ դնեն տերերի իշխանուրյունը կանգուն պահելու, միենույն է, կործանումն անխուսափելի է:

Սկզբում ասացինք, որ Վասսայի դերակատարումն իր արժանի գնահատականը շտացավ: Ճիշտ է, թե արժանի գնահատականը առքիվ ասված է, թե այդ դերակատարումը «գալիս է մի նոր բան ավելացնելու ժողովրդական դերասանունու ստեղծագործուրյան վրա»<sup>92</sup>, դաշտ միաժամանակ՝ թեմադրուրյան, այդ բվում և Հասմիկի խաղի մասին այնպիսի կարծիք է հայտնված, որ նախ չի համապատասխանում իրականուրյանը և, ապա՝ հակասական է բայց էուրյան: Մի կողմից ասված է, որ թե ոեմիսյորական աշխատանքի դրականն այն է, որ նա, այսինքն թեմադրողը, «վարպետորեն դրսեորել է

Ա. Գորկու տիպերի նոգեկան խորոյրյունը»<sup>93</sup>, մյուս կողմից ասված է, թե «շափազանցրել է նոգերանական պրատումները»: Երկուսից մեկը կարող է նիշտ լինել, բայց ոչ երբեք և մեկը, և մյուսը:

Սյնուհետև ասված է, որ իբր ոեժիսյորը բեմադրության մեջ «ընդգծում է Վասսայի հիվանդությունը»: Քննադատը, դժբախտաբար, չի բացատրում, թե այդ ասելով ինչ է հասկանում, սակայն երե նա նկատի ունի այն, որ դերակատարը ոչ միայն երրորդ գործողության մեջ, ինչպես պիեսումն է, այլև նախորդ արարներումն էլ մի-երկու անգամ բռնում է սիրտը, զգալ է տալիս իր հիվանդ լինելը, որով և նախապատրաստում է Վասսայի գալիք մահը՝ դա դեռևս չի նշանակում ընդգծել հիվանդությունը:

Վասսայի դերակատարման առիվ ասված է նաև, որ իբր, «տիպին ավելորդ կենցաղային կոլորիտ է հաղորդված»: Ասված է և չի բացատրված: Ի՞նչ նկատի ունի-այն, որ Հասմիկ-Վասսան թեյր խմում էր ափսեից, ոուսավարի, ազգային միջավայրի պատրանք առաջացնելու նպատակով: Կենցաղն այս խաղում սոսկ միայն կոլորիտ էր արտահայտում, և դա դրական երեսուր էր, որովհետև դա օգնում էր դերասանութուն՝ կերպարը կոնկրետացնելու: Մի՛թե անհիմն չի հնչում այդ կըշտամբանքը, երբ նենց ինքը, նույն այդ քննադատը Հասմիկի ստեղծած կերպարի կապակցությամբ տառում է, թե դերասանութիւն «արտահայտում է Վասսայի գուսափ, բայց գորեղ նոգու մեծ խոռվությունը», որ իր խաղով

նա կերտում էր «մի ամբողջական տիպ, հոգեկան լայն քափով, որ նա ժանդակում էր մի այնպիսի կերպար, որի մեջ շեշտված էին ուժեղ կամք, խոշոր քնավորության շերմուրյուն, միտք», այսինքն՝ հատկություններ, որոնց առկայությունը երբեք չի կարող համատեղվել կենցաղայնուրյան հետ, մասնավադ որ վերջինս նիշտ հակառակ՝ մանրացնում է կերպարը:]

Սակայն այդ բննադատուրյան մեջ կա մի շատ ավելի ծանր մեղադրանք: Ասված է, որ իբր ոեմիսյորը «քեմադրության շեշտը ավելի փոխադրում է դեպի ընտանեկան դրաման»: Ոչ մի կերպ չենք կարող համաձայնել այս մտքի հետ: Ով տեսել է քեմադրությունը և հիշում է, կիաստատի նիշտ հակառակը: Ի պատիվ ոեմիսյորի պետք է ասել, որ շնայած քեմադրության մեջ եղած թերություններին, որպես կոնֆիլիկո՞ ներկայացման համար նա հիմք էր դարձել Վասսայի և Ռաշելի բախումը, այսինքն՝ սոցիալական ուժերի հակամարտությունը:

Հարազատ մնալով դրամատուրգին՝ ոեմիսյորը Վասսայի կերպարի մեջ էական էր համարում ծառանգի նկատմամբ ունեցած մտահոգությունը: Ոչ նատալիան, ոչ էլ լյոդմիլան շեն կարող շարունակել նրա զործը: ոչ էլ լյոդմիլի: Նույնը և որդին, որ արտասահմանը են, անվստահինի: Նույնը և որդին, որ արտասահմանումն է, նիվանդ, ծանր ու անհույս: Միակ նենարամանումն է, նիվանդ, ծանր շուրջն է: Պայքարը քոռանքը է: Բախումը նրա շուրջն է: Պայքարը քոռանքը է: Բոլոր այն համար պայքար է պայքայի համար: Բոլոր այն փտանգները, որ առաջին արարվածում կանգնած են

Վասսայի առաջ, թե ներկայի, թե ապագայի տեսակետից, նա հաղթահարում է դրամի ուժով: Եվ ոեժիսյորը առաջին գործողությամբ շեշտել է Վասսայի ամենազոր ուժը՝ դրամի օգնությամբ գնել մարդկանց, կաշառել ազդել դիմադրող բոլոր օղակների վրա: Երբ դրամն էլ չի օգնում՝ նա դառնում է ոերի ընդունակ: Ամուսնուն պետք է դատեն, ուրեմն հարկավոր է կաշառել դատախազին: Հնարավոր չէ, ուրեմն ոչ մի այլ ելք չկա, քան՝ վերացնել ամուսնուն մինչև դատավարությունը, որի դեպքում կասկածի տակ կդրվեր ժեկզնովների անունը, գործը, ապագան: Եվ Վասսան բունավորում է ամուսնուն:

Հիմնական կոճֆլիկտի բացահայտման տեսակետից առանձապես կարեոր էր երկրորդ գործողության սկիզբը. սեղանի մոտ, թեյ խմելու համար նստած է Հասմիկ-Վասսան՝ իր աղջիկների հետ: Մոր և նատալիայի մեջ վեն կա. ոեժիսյորը չի շեշտել այդ վեճը. Նատալիա-Խուզան Վարդանյանը խայրում է մորը, իսկ վերջինս նրան պատասխանում է՝ կատակի տալով: Լյուդմիլա-Պարոնիկյանը նստած է մոր ոտքերի մոտ,, արռողջին, գլուխը հինած նրա ծնկներին: Մելքիկով-Աքեղյանը դեմքի շփոր արտահայտությամբ կանգնած է նատալիայի կողքին, ուզում է քափանցել մոր և աղջկա վենի մեջ, բայց չի կարողանում: Ըստ միզանսցենի՝ համախմբվածության զգացում, ըստ թեմական մրնոլորտի՝ խաղաղ վիճակ, ընտանեկան անդորր: Հասմիկ-Վասսան հանգիստ է, նա համարում է ապագան ապահով և հուսալի,

խոսում է հանգիստ և բավականությամբ քեյր խմում է ուսպերով:

Այդպես էր մինչև հարսի՝ Ռաշելի գալը: Վերջինս հայտնվում է անսպասելի: Մինչ այդ Վասսային բվում էր, թե ամեն արգելվ հաղբահարված է, և հանկարծ նրա դիմաց կանգնում է իր ամենամեծ հակառակորդը. նա եկել է տանելու որդուն, այսինքն՝ սպառնում է Վասսային գրկել միակ հույսից՝ ապագայի նկատմամբ:

Ամբողջ ներկայացման մեջ բախման կենտրոնն այս երկուսն են՝ Վասսա-Հասմիկը և Ռաշել-Արուս Ռոկանյանը: Ըստ ուժիսյորական միզանսցենի՝ երբեք նրանք իրար կողդի չեն, միշտ իրար դիմաց, միշտ պոզիցիաների մեջ՝ իրրե հակառակորդ կողմեր:

Այս և այլ փաստեր հիմնավորապես ժխտում են «Վասսա Ժելեզնովա» ներկայացման շուրջը մեր ֆնադատության մեջ արտահայտված սխալ տեսակետը: Այս բանը միայն կարող ենք ասել ի պաշտպանություն ուժիսյորի և դերասանների, որ նրանք Վասսայի և Ռաշելի բախումը ներկայացման կոնֆլիկտի հիմքը համարեցին շատ ալելի վաղ, բան այդ տեսակետը հաղթանակեց գորկիագիտության մեջ<sup>94</sup>:

\* \* \*

Սյա միտքն է հայտնվել, թե Հասմիկը մայրական ապրումների ամենախոր բարգմանն ու արտահայտիչն է սովետահայ քեմում: Դա նիշտ է:

**L** Մայրական կերպարների մի ամբողջ շարք է ստեղծել Հասմիկը: Այդ տեսակետից նրան կարելի է համեմատել Ավետիք Իսահակյանի հետ: Մեծանուն բանաստեղծի նման, Հասմիկը բափանցել է մոր հոգու խորքը և երեան հանել նուրբ, կասեին՝ նվիրական ապրումներ, գերազանցելով ամենահարուստ երեակայուրյունն անգամ:

Նա անցյալումն էլ է և, ինարկե, ոչ մեկ անգամ, աշխի ընկել մոր դերակատարումներով: Մի օրինակ միայն. «Ժառանգուրյուն» պիեսում խաղացել է նատալիա: Այդ դերակատարման կապակցուրյամբ պահպանվել է երկու իրար լրացնող տպավորուրյուն, որ հարկ ենք համարում մեջ բերել. «Միշտ օրինակելի ա. Հասմիկը (նատալիա) հասկացողուրյամբ շեշտեց խելոք, բարի և զգայուն մոր դերը, որ տանջվում էր իր ընտանիքի անդամների ցավերով ու մասնակից էր նրանց ուրախուրյուններին»<sup>95</sup>: Մի այլ ժննադատ գրել է. «Նատալիա-Հասմիկը մեր բոլորի մայրն է, մեր բոլորի օշախի տիպար ներկայացուցիչը. նա հասկացել է, ինչպես հարկն է, և դրաման տարավ իր ուսերի վրա պատվով»: Բայց, օրինակ, Ա. Բիսոնի «Անհայտ կին» մելոդրամայի կապակցուրյամբ, ուր Հասմիկը խաղացել է ժակլինի դերը, դիտողուրյուն է արվել, թե նրան «պակասում էր մայրական բաժնված զգացմունքի ավելի զայլածուրյուն, խորուրյուն»<sup>96</sup> և միայն «տեղ-տեղ նա մոտենում է դերին և տվեց անհայտ կնոջ հոգեբանական մի ժանի արտահայտուրյուններ»<sup>97</sup>: Խակ հետագայում, սովորակայքում նա դարձավ մոր քեմայի ամենախոր արտա-

հայտիշը: Միապ կիմի դա բացատրել երանով, որ վերնիշյալ քեման չի ունեցել մի այլ, քիչ քեզ շատ տաղանդավոր արտահայտիչ այս շրջանում: Կարելի է և այս կապակցությամբ պետք է անպայման հիշել ժամանելի հոյակապ Կրուշինինան, Արուս Ռուկանյանի Մարիա Նիկոլաևնան, վերջապես՝ նինա Մանուչարյանի մի բանի դերակատարումները, հատկապես Պելագիյա Արխիպովնան: Եվ, այնուամենայնիվ, ոչ ո՛չ չի հաջողել այնպես բազմակողմանի կերտել մոռ կերպարը, ինչպես այդ արել է Հասմիկը, մի որոշ իմաստով իր ստեղծագործական մենաշնորհն հաստատելով այդ կարգի դերերի նկատմամբ: Հարցը կերպարի համակողմանի ընդգրրկումը չէ միայն, Հասմիկը այն հազվագյուտ դերասանութիւններից էր, որի արվեստն աշքի էր ընկում կերպարի ավելի խոր բափանցումով: Նրա խաղի խորությունը քերես ոչ մի տեղ այնպես չի արտահայտվել, ինչպես մոռ դեւերում: Եվ դրանից հետո մի՞քև կարելի է քիչ քեզ շատ լուրջ խոսել այն մասին, թե Հասմիկը կենցաղային դերասանութիւնի է: Կենցաղայնությունը և խորությունը անհարիր հասկացողություններ են: Հոգեբանական դրույթան ամենախոր ընդգրկում-ահա թե ինչ էր բնորոշ Հասմիկի ստեղծած մոռ կերպարների համար:

Մի հանգամանք ևս կարենոր է մատնանշել:

Մայրական ապրումների այն խոր անմիջական մարմացումը, որ գտնում ենք Հասմիկի արվեստում, պայմանավորված է ոչ միայն դերասանութու երեակայության հումկու քոիշով: Իրականության առարկայական նանա-

չողուրյան հետ միասին, դեր էր խաղում և այն, որ նրա քեմական ստեղծագործուրյան հիմնում ընկած էին նաև իր սեփական հույզերը: Եվ յուրաքանչյուր անգամ, երբ նրան վիճակվել է մոր սեր, մայրական կսկիծ ու տանձանք արտահայտել, իր ապրած տառապանքները կենդանուրյուն առած կանգնել են դերասանութու աշխի առաջ և վերադարձել նրան դեպի հարազատ երեխաների կորսույթան հետ կապված ծանր օրերը: Խաղացած դերերի մեջ դնելով իր զգացումը, նրա ներկայացրած մոր ապրումները դարձել են ավելի խոր, ավելի անմիջական, տուավել կենսական ու նշմարտացի:

Մենք արդեն ասել ենք, որ Հասմիկը, անկախ նրանից դրական կերպարով էր հանդես գալիս, թե բացասական, միևնույն է, միշտ ներքին արդարացում էր գլունում իր ներկայացրած հերոսումիների համար:

(Ս)յապիսով, ուրեմն, Հասմիկի քեմարվեստի գաղտնի ներից մեկը հավատացնելու ուժն է:)

Կոնստանտին Սերգեևիչ Ստանիսլավսկին քեմական կերպարի նշմարտացիուրյան գլխավոր հիմքը համարում էր դերասանի հավատը դեպի նրա ապրած հոգեկացուրյունը. «Ճշմարտացիուրյունը,— ասում էր նա, — անբաժանելի է հավատալուց, իսկ հավատալն էլ՝ նշմարտացիուրյունից: Մեկն անկախ մյուսից՝ չի կարող գոյուրյուն ունենալ, իսկ առանց այդ երկուսի չկա ոչ ապրում, ոչ էլ ստեղծագործուրյուն»<sup>98</sup>:

Ստանիսլավսկու պարապմունքի ժամանակ մեկն այն տարակուսանքն է հայտնել, թե բատրնում ի՞նչ նշմար-

տացիության մասին կարող է խոսք լինել, եթ այնտեղ ամեն ինչ մտահղացում է և սուտ, սկսած Շեխապիրի պիեսից և վերջացրած ստվարաբղյա դաշույնով, որով սպանում է իրեն Օքելլոն:

Թատրոնում, պարզաբանում է Ստանիսլավսկին, «Էականն այն չէ, թե դաշույնը ստվարաբղյա է կամ մետաղից, այլ այն, թե իր՝ դերասանի ներքին զգացողությունը, որով նա արդարացնում է Օքելլոյի անձնասպանությունը, նիշտ է, անկեղծ և խսկական: Կարեռն այն է, թե ինչպէ՞ս կվարվեր ինը, դերասան-մարդը, եթե Օքելլոյի կյանքի պայմաններն ու հաճգամանները խսկապես լինեն, իսկ դաշույնն էլ, որով սպանում է իրեն, նույնպես լիներ խսկական»<sup>99</sup>:

Ստանիսլավսկին այն միտքն է հայտնում, թե Երեխաներից անհրաժեշտ է օրինակ վերցնել: Խոսքն այն նախիլ անկեղծության մասին է, որով նրանք ներգրավվում են խաղամքնության մեջ: Երեխան տիկնիկ է խաղում, և հավատում է, որ կրծքին սեղմածը ոչ թե լարով փարարած փայտ է, այլ խսկապես բալիկ՝ բարութի մեջ: Եվ այդ խմաստով, ասում է Ստանիսլավսկին, Երեխայի «իբրև թեն» շատ ավելի ուժեղ է, քան մեր մոգական «Երեք միայնը», մանավանդ որ Երեխան մի շատ լավ հատկություն ունի, որ պետք է դերասանները փոխ առնեն՝ չնկատել այն, ինչ խաղի ժամանակ կարող է խախտել իրական կյանքի պատրանքը<sup>100</sup>:

«Թող դերասանը,— ասում է Ստանիսլավսկին,— թեմում հետաքրքրվի նրանով, ինչին որ կարող է հա-

վատալ, իսկ այն, որ դրան խանգարում է, բռղ աննշմարելի մնա: Այդ կօգնի մոռանալ պորտալի սև անցքը և հրապարակային ելույթի պայմանականությունը»: Եվ վերջապես, Ստանիսլավսկին եգրակացնում է. «Եթ հասնեք դուք նշմարտացիության արվեստի մեջ խաղի ընթացքում երեխաների ունեցած հավատին, ահա այն ժամանակ դուք կարող եք իսկապես մեծ արտիստ դառնալ»<sup>101</sup>:

Դեռասանի այդ շատ բանկազին հատկությանը՝ մանկական նախկի անկեղծությամբ վարակվելու ուժին Հասմիկը տիրում էր անզուգականորեն:

Ահա թե ինչ ենք կարդում նրա մասին գրված մի հոդվածում.

...«Նա տիկնիկ կամ ձի խաղացող մանկան պես միամիտ անկեղծությամբ հավատում է այն բոլոր սիտուացիաներին, որոնց մեջ գտնվում է այդ ափար, նրա ապրումներն ու խորհումները դարձնում է իր սեփական ապրումն ու խորհ և, վերջապես, անկերապահութեն հավատում է քեմի վրա իր ասածի ու արածի կարեռությանը, մասն և կենաց շափի անկեղծությանը»<sup>102</sup>.

Ահա այս ճիշտ միտքն է, որ ձեւափոխելով՝ անցել է Հասմիկի մասին այնուինեակ գրված բոլոր այն հոդվածներին, ուր դերասանություն արվեստը բնորոշելու թեկուզ ամենաշնչին փորձ է արվել: «Ներքուստ հավատում է նա իր պերսոնածի հոգեվիճակին, դրությանը, խոսքերին, վարքագծին», —ասում է մի բատերագետ նրա մասին: «Դերը կտապալվեր, —գրում է մի ուրիշը, —եթե դերա-

սանունին ամբողջ էությամբ շնավատար այն մարդու վարժին, ապրումներին, գործունեությանը, որին պետք է հերկայացներ»<sup>103</sup>։

Կարեռն այս դեպքում այն չէ, որ մի հոդվածագիրը կրկնել է մյուսին, շատ ավելի կարեռ է այն, թե ինչն է կրկնվել, իսկ կրկնվել է այն, ինչ բոլորի ապավորության և հիշողության մեջ նույնն է – նշմարառությունը։

\* \* \*

Սխալ կլինի կարծել, թե Հասմիկն իր ստեղծագործությամբ արտահայտել է մոր ընդհանուր, վերացական բայրությունը։ Հասմիկը բեմից պատկերել է հատկապես աշխատավոր մոր կերպարը։ Ավելի նիշտ կլինի ասել, որ նրա պատկերած մայրերի մեջ արտացոլվել է շարժաշկանքի դառնությունը։

Հասմիկի պատկերած մայրերից ամենանշանավորը երեսն են՝ Կնիւտյե, Շուշան և Ամեա։ Երեսն էլ ժաղացողի ծոցից դուրս եկած մայրեր են, և նրանց մտքերի ու զգացումների, ինչպես և բնավորության վրա նկատելի է ժողովրդական կյանքի դրոշմը։ Թող նրանք ազգությամբ տարբեր լինեն – մեկը հայ, մյուսը հոլանդունի, բող նրանք տարբեր ժամանակներ ապրած լինեն, – մեկը սեփականատիրական հասարակության մեջ, մյուսը քաղաքացիական կոխվների ժամանակ՝ միենուն է, նրանք բոլորն էլ ժողովրդական կյանքի ծնունդ են, աշխատանքի

մարդիկ, և նրանց ապրած ողբերգությունը մի ընդհանուր աղբյուր ունի՝ մարդու շահագործումը մարդու կողմից:

Հասմիկի պատկերած մայրերի շարժում ուրույն տեղ է գրավում Շուշանը:

Շուշանի կերպարը ունեցել է փայլուն կատարողներ։ Դրանցից լավագույնը միշտ էլ նանաչվել է Վարդումին։ «Վարդումու Շուշանը, — գրել է Դարեգին Լևոնյանը, — գերազանց է բոլոր Շուշաններից և այդպես էլ կմնա անմըրցելի»<sup>104</sup>։ Անցյալում Հասմիկը, բացի կիեմիայից, խաղացել է նաև Շուշանի դերը։ Այդ կատարումը առանձնապես շի քննադատվել, բայց և միաժամանակ չերմ գնահատության էլ շի արժանացել<sup>105</sup>։ Եվ դա հասկանալի է։ Նախ Վարդումին Շուշանի կենցաղագրական կերպարի մի այնպիսի խտացած պատկեր էր գծել, որ Հասմիկը, ինչպես և Շուշանի այլ դերակատարներ, այն տարիներին, չէր կարող խուսափել նրա ազդեցությունից, մանական որ Վարդումու քեմական արվեստի մեջ շատ ընդհանուր կողմեր կային Հասմիկի խաղի հետ։ Եվ հետո, Վարդումու խաղով ոգեռոված, քննադատության աշխից աննկատ էր մնում այն քերե ուրույն երանգը, որ Հասմիկն հաղորդում էր կերպարին։ Անշուշտ, Վարդումու խաղն ընդհանրապես խոշոր նշանակություն է ունեցել Հասմիկի համար։ սակայն հետագայում, սովետական քատրոնում, Հասմիկը մի ժամի անգամ հանդես եկալ Շուշանի դերակատարմաբ, և դա այլևս նրա նախկին Շուշանը չէր։ Տարիների ընթացքում, քեմադրությունից քեմադրություն խորացալ կերպարի ուրույն և նոր ըմբռնումը, դերա-

պատկերը դարձավ անհամեմատ հաստատուն և շատ  
ավելի կառուցիկ:

«Շուշանի դերակատար դեր. Հասմիկը, —գրում է  
«Պեպոյի» 1929-ի թեմադրուրյան ոեցենզենտը, —տվեց  
իր դերի մահմամալ ըմբռնումն ու տաղանդավոր կատա-  
րումը: Աննախընքաց էր դերասանունու խաղն առանձ-  
նապես ուժեղ դրամատիկ մոմենտներում (թարարի և  
Զիմգիմովի տեսարանները)»<sup>106</sup>: Իսկ մի այլ ֆնադատ,  
արդեն 1936-ի թեմադրուրյան կապակցուրյամբ հետեւյալ  
գնահատականն է տվել. «Շուշանի դերում Հասմիկն  
ստեղծեց տառապող մոր, քշվառ պառակ կնոշ անմոռա-  
նալի կերպարը: Համակված լինելով աննման անկեղծու-  
րյամբ, Հասմիկի խաղը հուզում է հանդիսատեսին, ստի-  
պելով մոռանալ, որ քատրոնումն է»<sup>107</sup>:

Հասմիկի Շուշանը մի աննման կատարելուրյուն էր:  
Մենք մազաշափ անգամ չենք կամենում արծեքագրկել  
Վարդունու Շուշանը, սակայն Հասմիկը, իհարկե, շատ  
ավելի լայն շեշի դերասանունի էր, իսկ ընդհանրապես՝  
վաղուց էր զերազանցել իր ուսուցչունուն՝ Վարդունուն:  
Հասմիկի առավելուրյունը Վարդունու նկատմամբ նաև  
դարաշրջանի մեջ էր, հայացքի, մոտեցման, ընդգրկման,  
ընդհանրապես այն տարբերուրյան, որ գոյուրյուն ուներ  
սովետական արվեստագետի և նրա նախորդի միջև:

Ամենահիմնականն այն էր, որ Հասմիկը Վարդունու  
կենցաղագրական մոտեցումը փոխարինեց սոցիալա-  
կանով: Վարդունու Շուշանը մի աննման կենցաղագրական  
պատկեր էր, կատարյալ զարդանկար, որի յուրաքանչյուր

մանրամասնությունը՝ մշակված ու հղկված էր ամենանըքին հոգածությամբ։ Վարդումուխաղն, անշուշտ, ուրիշ կողմեր էլ ուներ, բայց զիսավորը միջավայրի հարազատ վերաբաղրությունն էր, կոլորիտի խորագույն առկայությունը։ հաճդիսականի աշբի առաջ դերասանումուխ խաղով վերակենդանանում էր հին Թիֆլիսը իր ժողովրդական տիպերով, իր նիստ ու կացով։ Հասմիկը, որ նույնական կամ շիամարդ էր, բայց չհենվեց դրա վրա, ինչպես իր նախորդը, դա շիամարեց ամենակարեռը։

Հասմիկի խաղի մեջ հիմնականը, որոշողը Շուշանի մաքերն ու ապրումներն էին։ Պատկերավոր ասած՝ կենցաղագրականը Հասմիկի համար միայն շրջանակ էր, որի մեջ նա ամփոփել էր Պեպոյի մոր ողբերգական կերպարը։ Բնորոշ մեսարը, ինտոնացիոն երանգավորումները Հասմիկի մոտ միայն թերե ակնարկներ էին, այնքան, որ միերկու տիպիկ շարիխներ արտահայտեն տեղական միջավայրը։

Այդպես էր քեմում, այդպես է նաև «Պեպո» կինոնկարում, ուր Շուշանի դերը կատարում է դարձյալ Հասմիկը։

Հասմիկի Շուշանը տանջված կին էր։ Նաև ու շարժաշ կյանքը զգացվում էր նրա ամեն մի արտահայտության մեջ։ Նույնիսկ այն պահին, երբ նրա շուրջը կատակում էին և ինքն էլ ժպտում էր կամ ծիծաղում, դարձյալ դեմքը տանջված արտահայտություն ուներ։ Աշենքը խամրած էին, վշտու, ինքը փոքր ու կուշ եկած։ Միամանակ էին, վշտու,

նրա դեմքը, հայացքը, ասած խոսքը, արտահայտում էին հոգեկան մի շտեսնված մաքրություն:

Միանման ապրումը Հասմիկը միատեսակ չէր խաղում. նա շերմ էր Կեկելի և Պեպոյի նկատմամբ: Սակայն երե դեպի վերջինն ունեցած շերմուրյունը մայրական հպարտությամբ էր լի, նույնիսկ պատկառանք էր զգացվում դեպի որդին, ապա աղջկա նկատմամբ մի ինչ-որ մտերմիկ բնիշշուրյուն կար, որի մեջ՝ շարտահայտված ցակ ու տանջանք: Կամ որքան բնական էր այն սահմանական համբերությունը, որով նա լսում էր Գիեռյի երկար ու բարակ գրուցքը, որքան պարզամտություն կար, և նահապետական կնոջ համար որքան բնորոշ միամտություն այդ ամբողջ գրուցի ընթացքում:

Հասմիկի բեմարվեստի մի շատ կարեռ առանձնահանատկությունն էլ այն էր, որ նա երբեք պատրաստ կերպար չէր խաղում: Նրա խաղը հետեանք կամ արդյունք չէր: Նրա կատարումը հոգեկան կյանքի մի պրոցես էր: Սկզբում նրա Շուշանը քեզ դժոնի, բայց համակերպված էր իր շարժաշ կյանքին: «Մեր նակախն էս է գրված», — կարծես ասում էր նրա կսկիծով լի դեմքը: Վերջում նա փոխվում էր, վշտի հետ հաշտված պառավ կնոջ մեջ նույնիսկ շեշտված դիմադրություն էր նկատվում: Զգացվում էր Պեպոյի մայրը. միշտ գլուխը կախ, տառապանքի մեջ կյանքն անցկացրած մայրը չէր կարողանում հաշտվել որդու բանտարկության մտքի հետ: Հակառակորդի հետ շափվելու ոեալ ուժից զուրկ պառավ մորն ի՞նչ էր մնում, բքե ոչ անիծել Զիմզիմովին: Իսկ երբ նրա համար պարերե ոչ անիծել Զիմզիմովին:

զվում է, որ Զիմգիմովը պատրաստ է հաշտության, և Պեպոն է հակառակվողը՝ նա խճնվում, կորցնում էր իրեն։ Ճիշտ է, թե հավատում էր ուղուն, բայց անհանգիստ մեկ Պեպոյին էր նայում, մեկ Զիմգիմովին. շինի՞ ուղու զլիսին մի նոր փորձանք գա:

Արդեն ասել ենք, որ Հասմիկը Զառնիշան խաղալիս առանձնակի հաջողություն էր ունենում անեծքի տեսարանում։ Անեծքի տեսարան, ինչպես հայտնի է, ունի նաև Շուշանը։ Երկու դեպքումն էլ Հասմիկն անկեղծ էր, անմիջական։ Զառնիշանի անեծքը շար էր, բունոտ, ցասումնալի։ Շուշանի անեծքի մեջ կսկիծ կար, տանջլած մոր դառնություն։ Երկու դեպքումն էլ դերասանութին անեծքի բառերն ասում էր արագ, երբեմն ասես՝ կարկանար էր անում։ Եվ, այնուամենայնիվ, տպավորությունը տարբեր էր, որովհետև տարբեր էր նաև հոգին, էուրցունքը։ Ոչ-գայրակղված հանդիսատեսք երբեք չէր ասի, որ այլ երկու և միանգամայն տարբեր ձևով անիծող կահանց դերը խաղում է միևնույն դերասանութին։ Տարբերությունն այնքան մեծ էր, որ չէր ենթարկվում նույնիսկ երեակայության ուժին։

Հասմիկի համար ընդհանրապես այնքան էլ բնորոշ չէր մանրամասների արվեստը։ Նրա համար, ընդհակառակը, հատկանշական էր կերպարի ամբողջական ընդգրրկումը, հիմնական տրամադրության ընկալումը։ Շուշանի մեջ Հասմիկի համար կարենոր ոչ թե այն էր, որ նա հին Թիֆլիսի ծնունդ էր, այլ այն, թե ինչ շարքաշ կյանքի տեր էր, ինչ ծով ցավերի մեջ, ինչ հոգեկան տառապանք-

ների մեջ՝ սկզբում աղջկա, ապա որդու բախտի համար։ Այդ ցնցող ուժով արտահայտվել է «Պեպո» կինոնկարի հարսանեկան տեսարանում։

«Պեպոյի ու Կեկելի դառն կյանքի վրա ծիածանում է Շուշանի մայրական սերը, —կարդում ենք մի նողվածում։ —Եվ այդ սերը Հասմիկը արտահայտում է արվեստի գեղեցիկ պարզությամբ, որը միաժամ խոր է, ինչպես ինքը՝ մայրական հոգին։ Հասմիկը լալկան մայր չի խաղում. միշտ մեծ է նրա ինքնատիրապետումը։ Արցունեները հասնում են աշխերին, բայց չեն գլուրվում։ Դերասանում արտահայտիշ դեմքի վրա մենք տեսնում ենք մեծ վիշտ, որը կամքի ուժից ննչվում, «ներս է զնում» դեպի մարդկային աշխարհի գաղտնարանները։ Այդ բանը շատ ցայտուն է երևում «Պեպո» կինոնկարում՝ շարաբաստիկ «բարարի» անհայտանալու տեսարանում։ Իր աղջկա՝ ւեկելի նշանդրեններ, խրախնանք... հարկավոր է ներկայացնել Կեկելի բաժիննեն ապահովող մուրհակը։ Հասմիկը՝ Շուշանը փետրում է և չի գտնում այդ բղրի կտորը։ Նկարահանող ապարատը մեզ մոտեցրել է Հասմիկին, որ մենք խոշոր պլանով տեսնենք, քե ինչ հրաշալի ձեռվ է դերասանուին արտահայտելու Շուշանի ապրումները։ Շուշանը բուլանում է, նենվում պատին, որ վայր չընկնի... իսկ աշխերը... Հասմիկի աշխերը նայում են խրախնանքի կողմը և ասես խոսում են, ոչ, մեղմիկ շշնչում են վերահաս դժբախտության մասին..., և մենք խոսում ենք այդ մրմունքը։

—Ի՞նչ եք անում, մարդիկ, ինչո՞ւ եք ուրախանում,

լոեցրեմ զուտնան ու դիոլը... Զե՞ր տեսնում, որ դժբախ-  
տությունը կործանում է իմ զավակներին...

Բայց միաժամանակ նորից ինքնատիրապետումն է  
արտահայտվում Հասմիկի յուրաքանչյուր շարժումով և  
դիմախաղով: Նա չի ցանկանում մատնել իրեն, փշացնել  
երշանկության այն պատրանքը, որով ապրում են Պեպոն  
ու Կեկելը: Հասմիկի ստեղծած այս տեսարանի մեջ բեկ-  
վում է հարսանյաց հանդեսի խոր դրամատիզմը: Մար-  
դիկ պարում, զվարենանում են, իսկ մենք շնչակուուր ենք  
լինում, սեղմվում է մեր սիրաք»<sup>108</sup>:

Հասմիկը միշտ էլ կյանքի ռեալ զգացողությունից էր  
ելնում, մի բան, որ նրա արվեստի դեկավարող սկզբունքն  
էր, և հենց դրանով էլ պայմանավորված էր նրա խաղա-  
ձեռում կրկնվելու վտանգի լիակատար բացակայությունը:  
Դերից դեր նա նոր էր և այնպէս բազմազան, ինչպէս  
կյանքն է բազմերանգ ու տարբեր: Որքան էլ շատ նայած  
լինեիք նրան միենույն դերում, որքան էլ լավ իմանայիք  
տեսութ կամ այն, թե հիմա ինչ պիտի անի, ուր պիտի  
շարժվի՝ միենույն է, նա դարձյալ համակում էր, պահում  
իր խաղի հուզական մրենուրառում, որովհետև նա ապրում  
էր կերպարը, և հենց դա էր, որ նրա ամեն մի խաղը  
բարմացնում էր հույզի քրիոռով:

Հասմիկն ապրումների դերասանութիւնի էր:

Այդ հաստատում են ամենք, ով գեր մեկ անգամ  
գրիշ է ձեռն առել ու գրել Հասմիկի մասին: «Նրան այն-  
քան չի հետաքրքրում իր խաղացած դերերի արտաքին  
նկարագիրը, որքան նրանց ներդին հուզական կողմք,

—գրում է մի ժենադատ: —Հասմիկը երբեք չի ոգեռովի, եթե նա բեմի վրա պիտի միայն գործողուրյունները կատարի՝ առանց հնարավորուրյուն ունենալու խորապես ապրել դրամայի ընթացքում ստեղծվող հոգեբանական սիտուացիաները»<sup>109</sup>: «Հասմիկը, — գրում է մի ուրիշը, — դեռ բմբոնում է իր էուրյան բոլոր մասերով, մարմնի բոլոր զգայարաններով և զգայուրյուններով, նա բմբոռնում է դերը ներքին ուժերի և արտաքին հատկուրյունների գարմանալի միասնականուրյամբ»:

Զափազանց հետաքրքիր մի դեպք է պատմում «Պեպո» հկարահանման մասնակիցներից մեկը:

«Յավական է հիշել մի էպիզոդ, որն անմոռանալի է մնում այդ էպիզոդին մասնակցողների հիշողուրյան մեջ: Դա 1934 թ. օգոստոսին էր, երբ Մոսկվայի «Մեծքաբառմիլմի» ատելիյեում հկարվում էր Պեպոյի տունը, որ Շուշանք հստած էր արոռի վրա, գուրզուրում էր իր աճքախտ կեկելին, որին Դարշոն խարել էր ու չէր առնում՝ «խալսի մոտք խայտառակելով»—«վայ իմ բերախտ բալա շան, ժոռանար իմ աշենքը, մենքնի ես և ֆեզ էս օրում շտեսնեի»— ասում էր այս բաները մեր դեղի Շուշանը և սրբում արցունիները: Հասմիկի խաղը, նրա հոգեկան ապրումներն այնքան ուժեղ էին և ազդեցիկ, որ ոչ միայն ինքը լաց եղավ, այլև ստիպեց լաց լինել-իր հետ նաև նկարահանման խմբի անդամներին: Այդ օրը նկարահանումը վերջացավ շատ անսպասելի կերպով, որովհետև բոլորը տխուր և լուրջ դրուրյան մեջ էին. դա Հասմիկի տաղանդի շնորհիվ էր»<sup>110</sup>:

Հուշանի դերակատարմանը մենք առանձնակի նշանակություն ենք տալիս. նախ՝ դա ուսալիստական բեմարվեստի մի կատարյալ գլուխզործոց էր: Հետո սունդուկյանական կերպարների բեմական մարմնավորման տրադիցիան նրա կատարմամբ նոր աստիճան էր բարձրանում: Եվ վերջապես, եթե անցյալում Հասմիկը դրամատիկական-ներոսական կերպարները հաճախ իշեցնում էր կենցաղայնուրյան աստիճանին, ապա այժմ կենցաղային կերպարներից մի ժամփոր նա բարձրացնում էր մինչև ողբերգական մակարդակը:


\* \* \*

Մոր բեմայի գեղարվեստական ընդհանրացման եզակի օրինակ էր Հասմիկի Կնիրայեն («Հույսի» կործանումը):

Հոլանդական դրամատուրգ Հ. Հեյերմանսի այս պիեսը սոցիալական կյանքի մի սրապուշ պատկեր է: Այրի Կնիրայեն ծովագնացի կին է եղել: Տարիներ առաջ, փորորկի ժամանակ կորցրել է ամուսնուն և երկու որդուն: Հիմա էլ, նավապետ Բոսի պահանջով, որի ձեռին կեղեմվում է ծովափնյա ժողովուրդը, ծով են դուրս գալիս Կնիրայեի մյուս երկու որդիները՝ Հերդը, որ ժաշ ծովագնաց է, Բարենտը, որ դեռ երեխա է և ան ու սարսափով լցված դեպի ծովը: Հնամաշ և խարխով «Հույս» նավը, որով ծով էին դուրս եկել նրանք, կործանվում է: Բոսն իրեն հասած վնասի դիմաց ստանում է տաս հազար գուլդեն, և փաս-



Աննա Անդրեևնա («Թեփու»)





Խամբերի՝ Հասմիկ, Զամբախով՝ Ա. Ավետիսյան, Նատալյա Օ. Գուլագյան («Խարարալա»)

տորեն շահում, իսկ Կնիրտյեն կորցնում է ամեն ինչ:

Քննադատուրյունն առանձնապես բարձր է գնահատել Հասմիկի խաղը «Հույսի» կործանումը» ներկայացման մեջ: «Կարելի է ասել, — գրում է մի բնիադատ, — որ Հասմիկի տված խաղը միակն էր, որ համապատասխան էր նեղինակի մտահղացման թե իր արտաքին շարժութելվերով, և թե իր ներքին և խորանույզ ապրումներով»<sup>111</sup>: Մի այլ բննադատ էլ գրում է, թե «Հասմիկը ոչ թե Կնիրտյեի դերն է կատարում, այլ նա ապրում է այդ դերով և իր նետ միասին ապրեցնում ամբողջ դահլիճը»<sup>112</sup>: Եվ ապա նույն նողվածագիրը եցրակացնում է. «մեր քառոնք կարող է պարծենալ իր Կնիրտյենվ, որը եզակի տեղ կարող է բռնել նաև այլ թեմերի վրա»<sup>113</sup>: Դերասանութու արվեստակից ընկերներից մեկն այն համոզման էր, թե Կնիրտյեի դերում նա նասել է «չգերազանցված հաջողուրյան», որ «այստեղ Հասմիկն անբննադատելի էր, անքերի»<sup>114</sup>:

Հասմիկի դերակատարումն աշխի էր ընկնում կյանքի ուալ զգացողուրյամբ, բնավորուրյան շեշտված գծանկարով, նոգերանական հազեցվածուրյամբ և ինտոնացիոն հարստուրյամբ: Սա մի հոյակապ դերակատարում էր, որն իր խորք դրամատիզմով բարձրանում, հասնում էր ողբերգականուրյան աստիճանի:

Հասմիկը, ինչպես հայտնի է, մոր դերեր շատ է կատարել, բայց երբեք կրկնուրյունների մեջ չի ընկել, եթե անգամ նրա խաղացած մայրերը համահման դրույթան մեջ են գտնվել կամ բնավորուրյան կողմից որոշ

ընդհանուր գծեր ունեցել: Գրա զլսավոր պատճառն այն է, որ մայրերի դերերով նոշակված դերասնունու համար գոյուրյուն չուներ մոր «ամպլուա» ընդհանրապես. նա ելնում էր կերպարից, նրա միջավայրից, նոգեվիճակից և այնպես էր զգում կերպարի էուրյունը, նրա ապրած դրաման, դրաման ծնող պատճառները, որ դերասնունու պատկերած մայրն անհատականանում էր և այդ մոր ապրումը, զգացումների աշխարհը ձեռք էր բերում էմոցիոնալ ներգործուրյան մեծ, իսկ երեսն պարզապես ցնցող ուժ:

Հասմիկի Կնիրտյեն ոչ թե դժբախտ մայր էր ընդհանրապես, այլ մի կին, որ մեծացել էր ծովի ափին, գիտեր ու նանաշում էր ծովն իր անեղ փորորիկներով: Շատ դժվարուրյուններ ապրած, շատ գրկանիններ տեսած, դժբախտուրյունների մեջ կյանքն անցկացրած կնոշ պատկեր էր դա: Կյանքի այդ ծանր պայմանները նրան քրծել, որոշ կոպտուրյուն էին հաղորդել, ամրացրել, դարձրել պատրաստ՝ ահարկու փորձուրյունների համար: Բավական է հիշել այն տեսարանը, երբ կրտսեր որդին հրաժարվում է ծով դուրս գալ: Ինչպես էր Հասմիկի Կնիրտյեն կարողանում ազդել որդու վրա. նա չեր խնդրում, այլ պահանջում էր անխախտ պահանել ծովի պապենական տրադիցիան. նրան վիրավորում էր որդու վախն ու երկշոտուրյունը: Հասմիկ-Կնիրտյեն նոգեկան արիուրյան էր կոչում որդուն, շա-

նում նրա մեջ արքացնել արժանապատվորյան զգացում:

Այդ արտաժին կոշտորյան ներքո Հասմիկը բացցընում էր Կնիրայեի հոգեկան բարորյունը, մայրական ամենանուր զգացումները: Որդիների ծով դուրս գալուց հետո Հասմիկի Կնիրայեն նստում էր հոգեած և հուսահատ: Ասես կանխազգում էր նրանց կորուսարը: Նրա դեմքին գծվում էր մի հոգեկան ամայորյուն. թերք պահ մի մեկնում էր առաջ, կարծես ուզում էր կանչել, ես թերել որդիներին:

Հասմիկը երբեք շռայլ չէր իր արտահայտչածերի մեջ. ընդհակառակը՝ զուապ էր, նույնիսկ ժլատ: Ճիշտ և լավ է ասվել նրա մասին, թե «գերադասում է լինել ավելի շատ ժլատ՝ քան շռայլող, զուապ՝ քան աշխ շլացնող, մեղմ՝ քան աղմկող, իսկ որ զլսավորն է նշմարիտ, նշմարիտ և նշմարիտ»<sup>115</sup>: Արտաժին էֆեկտը, պատկերայնորյունը, պարետիկականը խորը էին նրան: Երբեք նա առանձնապես չէր գրիմավորվում, չէր փոխում իր ձայնը. նրա գրիմը լակոնիկ էր, մի-երկու շտրիխ միայն: Կամենում ենք ասել, որ նա երբեք չէր բաքնվում արտաժին փոփոխուրյան ետև: Նա փոխվում էր ներքուստ, փոխվում էր ըստ էուրյան և այդ էլ, իր ներքին, պայմանավորում էր նրա արտաժին փոփոխուրյունը: Երես հարկ կար՝ նրա մեղմ ձայնը հումկու էր ննշում, բարի աշխերը՝ շարուրյուն արտահայտում:

Այդ հաստատում էր Հասմիկի ամեն մի նոր դերա-

լատարումը: Այդ հաստատվեց և «Հույսի» կործանման» մեջ, հասկապես վերջին տեսարանում, որ նրա խաղի բարձրակետն էր:

Կնիրտյեն գալիս է նավապետ Բոսի գրասենյակը՝ իմանալու, թե նի՞շտ է արդյոք իր լսածը «Հույս» նավի կործանման մասին: Նա ներս էր մտնում լուս. հայացքը տիտուր էր, աճհանգիստ ու տագնապալի նայում էր շուրջը, գրասենյակի աշխատողներին, կարծես կամենալով նրանց հայացքներից և պահվածքից իմանալ, թե ինչ է սպասում իրենց: Վերջապես նրան հայտնի է դառնում նշմարտուրյունը՝ «Հույս» նավն իսկապես կործանվել է. ուրեմն՝ որդիներն այլևս տուն չեն դառնա:

Ծանր, ողբերգական պահ: Նա լուս, առանց ձայն հանելու, նստում է անկյունի արռողին, հայացքը սևեռած մի կետի: Դա լուս, սակայն ցնցող տեսարան էր: Արռոին նա ոչ թե նստած էր, այլ կծկված, կուշ եկած, և «անհուն վշտով լեցուն աշխեռով նայում էր տարածության մեջ»: Նրա ժարացած պատկերը շատ ավելի էր վիշտ արտահայտում, քան կարող էր արտահայտել այդ պահին հատաշան ներով լի մի մենախոսություն: Մենք շփոթենք, թե որդեկորույս Կնիրտյեի վիշտն արտահայտելիս Հասմիկը չէ՞ր վերապրում արդյոք նաև իր սեփական մայրական կսկիծը: Սակայն մենք զիտենք և զիտեայդ՝ ով գեր մեկ անգամ դիտել է զերասանունու խաղը, որ Հասմիկի Կնիրտյեն այնպես ծանր էր ապրում որդիների կորուստը, հոգեկան լարվածությունից այնպես ու-

ժասպառ էր լինում, որ «իր վշտի անսահմանությունից այլևս լալու և հառաշելու անընդունակ» էր դառնում<sup>116</sup>,

Կճիրային վերջում միայն շորս բառ է ասում: Եթ Բոսր նախատելով Կճիրային՝ ասում է, թե նրա զոհված որդին՝ Հերդը ապօրինի զավակ ունի և դրա համար նա կզրկվի նպաստից, վշտահար մայրը պատասխանում է. «Այդ արդեն ձեր գործն է»: Այդ փոքրիկ նախադասությունը Հասմիկի խաղով մեծ բովանդակություն էր ստանում, մի ամբողջ ողբերգություն արտահայտում: Տեսնում էիր, որ նա կորցրել է ամեն ինչ և այլևս ոչինչ չի կարող նրան կապել այս աշխարհի հետ:

Հասմիկի խաղով նոր լուսաբանություն էր ստանում պիեսի վախճանը: Պիեսը, ինչպես հայտնի է, վերջանում է կեղծ մարդասիրական մի կոչով, որով Բոսի և Տաղագլխի կանայք խնդրում են «Հույսի» կործանումից հետո քշվու և անօգնական մնացած մի ժանի բնտաճիքի օգնության ձեռք պարզել, նրանց ծանր վիճակը փոքր ի շատե թերեւացնելու համար: Մեզ հայտնի չէ, թե ուրիշ դերասանութիններ ինչպես են խաղացել այս տեսարանը, բայց մեր քատրոնում որքան էլ Բոսի կինը՝ Մարիլը սենտիմենտալ «հոգատարություն» էր հանդես բերում դեպի Կճիրային, այնքան ավելի իմաստ ու խորություն էր ստանում Հասմիկ-Կճիրայի լոռությունը, բողոքով լոռությունը և Կճիրային, «հանկարծ, հասակ էր առնում՝ դառնում աշխատավոր ժողովրդի, բոլոր դժբախտ մայրերի սիմվոլ և մի հումկու, մոնումենտալ նախա-

տինք՝ սեփականատիրական աշխարհին նասցեագր-  
ված»<sup>117</sup>:

\* \* \*

Հասմիկի ստեղծած մայրերի շարքում, ինչպես ար-  
դեն ասլեց, առանձին տեղ է գրավում նաև Աննայի կեր-  
պարը («Արշալույսին»): Աննայի կատարմամբ Հասմիկը  
մոր թեմային նոր լուծում էր տալիս: Ա. Գուլակյանի  
պիեսը հնարավորություն էր ընձեռում մոր հոգեբանու-  
թյան մեջ արտահայտելու այնպիսի կողմերը, որ չէին  
կարող լինել նուշանի և Կնիրտյեի մեջ:

Աննայի կերպարը ամենայն իրավամբ պետք է  
հանաշվի Հասմիկի թեմական ստեղծագործության գլուխ-  
գործոցներից մեկը: Ասենք, որ Աննայի դրական կերպա-  
րը, գրամատուրզի հայտարարությամբ, ստեղծվել է աշ-  
ժի առաջ ունենալով Հասմիկին, ոչ միայն որպես թեմա-  
կան անհատականության, այլև իր մոր<sup>118</sup>: Քննադատու-  
թյունը ժիշ է գրել այս դերակատաւման մասին, բայց  
միշտ չերև ու բարձր է գեահատել, գտնելով, որ «նրա  
խաղն օժտված է պարզ ու մշակված գույներով»<sup>119</sup>, ներ-  
կայացրած կերպարը «քնական է և սիրելի»<sup>120</sup>: Քննա-  
դատությունը ժամանակին արձանգրել է, թե ինչպես  
«հանդիսատեսը շունչ պահած որսում էր ամեն մի բառ,  
ուշադրությամբ հետևում էր սիրելի արտիստունու դեմ-  
ի ամեն մի արտահայտության, որն աննկարագրելի

վարպետուրյամբ խաղում է բոլշևիկի մոր կերպարը»<sup>121</sup>: նույն ժննադատը գրում է. «Հիրավի, տարիները չեն խարարել նրա հոյակապ տաղանդը, որն այս հորելյանական ներակայացման մեջ էլ փայլատակեց իր բազմապիսի երանգներով և խորուրյամբ»<sup>122</sup>: Իսկ մի ժննադատ էլ գտնելով, որ «նրա ստեղծած Աննան անզերազանցելի է»<sup>123</sup>, շեր պատկերացնում ներկայացումն առանց Հասմիկի մասնակցուրյան. «ներկայացմանն առանձնահատուկ փայլ է տալիս Հասմիկ Հակոբյանի խաղը»<sup>124</sup>, — գրում է նա:

Աննան նասարակ զեղչկումի է, որի որդին՝ Վահագնը, պարախզանների գլուխն անցած պայքարում է դաշնակցականների դեմ Հայաստանում Սովետական իշխանություն հաստատելու համար:

Հասմիկի խաղից երեք պատկեր անջնջելի է մնացել մեր հիշողուրյան մեջ:

Նախ՝ նամակի տեսարանը: Հասմիկն այստեղ լուս խաղ ուներ: Նկատենք, որ Հասմիկն այն եզակի դերասանութիններից էր, որոնց լուուրյունը շատ արտահայտիչ էր: Նա ամբողջապես Վահագի նամակի հետ էր. մի ժանի անգամ մոտեցնում էր կրծքին, սեղմում, որպու կարուր նամակից առնում: Կարծես երազում լիներ, որդու հետ, որդու կողքին, և միայն բամին էր, նրա ոռնոցը, որ Աննային վերադառնում էր գեղի իրականություն:

Հասմիկը նամակը մոտեցնում էր լույսին, նայում երկար-երկար: Ի՞նչ էր առում Հասմիկը՝ դժվարանում ենք

ասել. կարծես թե ոչինչ, բայց այդպէս նամակը բռնում են միայն նրանք, ովքեր կարդալ չգիտեն: Այդպէս էր Հասմիկը. նա կարողանում էր կյանքում գտնել մի անրասլի շտրիխ և նրա միջոցով մի ամբողջ հոգերանուրյուն արտահայտել: Այդտեղ և որդու համար անհանգստացած մայրն էր, այդտեղ և մայրական կարուան էր, որդուն գեր մի ակնբարք տեսնելու, կրծքին սեղմելու փափազը, այդտեղ էր և որդով հպարտացող մայր...

Թեև նրա համար Վաշիկը նամակն այնքան է կարդացել, որ նա արդեն անզիր գիտե, բայց խնդրում է նորից ու նորից կարդալ: Տպավորությունն այնպէս է՝ կարծես առաջին անգամն է լսում, ուշադիր, որ շիճի թե ուեկ բառ բաց բռնի:

Սիա և ամենանշանավոր տեսարանը: Դաշնակցականները բռնել են Վահագին, բայց չգիտեն, թե իսկապե՞ս դա իրենց որոնած հայտնի պարտիզանն է, թե ոչ: Համոզվելու համար՝ ձեռքերը կապած Վահագին բերում են նրապարակ, ժողովրդի մեջ: Ժողովրդից ոչ ո՛ք չի հաստատում, որ դա իրենց գյուղի Վահագն է: Մի ելք է մնում՝ բերել հարազատ մորը:

Խրնիրի շեմքին երեսում է Աննան: Թեմի լայնի տարրեր կետերումն են գտնվում մայրն ու որդին, իսկ շուշը բռնորդ լուս, սպասողական դրույան մեջ նետեսում են դժբախտ մորը: Այդ ահագին տարածությունը պետք է անցնի Աննան: Կկարողանա՞ս զավել արցունքը, կկարողանա՞ս սահճել, առաջն առնել այն նույզերի, որ հեղեկ դառած՝ նանապարհ են փնտրում՝ նրա կրծքից դուրս

ժայրքելու համար: Պետք է կարողանա: Դժվար է, պարզապես անկարելի, բայց պետք է կարողանա, դրանից է կախված որդու կյանքը: Անա կանգ առավ, չի կարողանում առաջ շարժվել: Ուժերը դավանանում են, ծնկները ծալվում: Նա վերջին նիզն է գործ դնում և ահա որդու մոտ է, Վահագի կողմին: Ինչպես չլա կամ ինչպե՞ս դիմանա, երբ սիրար պատառուվում է որդու խոշտանգված տեսքից. «Քո մերը բոռանա, քո մերը մենի» —ասում էր նա խով, հանգած ձայնով, աշքը շկարելով որդու արյունոտված դեմքից:

Հասմիկը խոսուն ձեռներ ուներ: Որքան անողոք ուժ էր զգացվում այն ձեռների մեջ, որոնցով Հասմիկ—Կարանիսան բռնում էր իր ծանր գավազանը: Որքան կամք, վճիռ ու գործնականություն կար բանալիների հետ խաղացող Հասմիկ—Ժելեզնովայի ձեռների մեջ: Խսկ որքան կեղծիք ու վարձ նարպկություն կար Խայու հետ գաղտնի սակարեկության մեջ մտած Խամփերու ձեռներում: Անճայի ձեռների մեջ նշոյլ անգամ չկար այդ բոլորից: Անա նա բարձրացրել է ձեռները և ուղղում է Վահագի նակատին բափած մազերը. որքան ջերմություն ու բնեշություն էին արտահայտում, ինչպես էին նրանք կրակված սրտի հույզերն հաղորդում որդուն... եվ ապա կոխվ տալով ինքն իր հետ՝ Հասմիկը դեմքը դարձնում էր որդուց, նայում դաշնակ մաուզերիստներին և մեծ ուժ գործ դնելով իր վրա՝ գլուխը բացասաբար շարժում էր, քե այդ մարդուն ինքը չի նանաշում:

Ճենց այն, որ մի ամբողջ տարի Վահագին շտեսած

Սննան, այդ պառակ, անգրագետ գեղջկոմին, այժմ որպուն խոշտանգված տեսնելով, չի կաշառվում իմքապետի սուս խոստումներից և կարողանում է լոել, որովհետև այդպիս է պահանջում գործը, որին նվիրվել է որդին, արդեն իսկ հերոսուրյուն է:

Այս տեսարանը, որ ներկայացման բարձրակետն էր, միշտ իր վրա է սկսել բոլորի ուզադրությունը: Մի ժննադատ ասում է, որ այդ տեսարանը երբեմ չի մոռացվի<sup>125</sup>, մի այլ նողվածագիր էլ խոսել է այն ցնցող տպավորության մասին, որ բողել է դերասանունու խաղը այդ տեսարանում<sup>126</sup>: «Աննայի որդուն նանաչելու տեսարանը վերիշելիս նույնիսկ, —գրված է նողվածներից մեկում, —մարդ չի կարող կրկին անգամ չփշաքաղվել Հասմիկի այն ժան զուսպ, բայց միաժամանակ և այն ժան արտահայտիչ խաղով»<sup>127</sup>:

Ցնցող տեսարան էր նաև, երբ Վաշիկը Աննային հայտնում է, թե «մեր Վահագին սպանել են»: Հասմիկը չէր հառաջում, երա աշերից արցունքներ չեին բափկում: Նա լուր նստում էր, բարացած մնում, ասես մարմնացած կսկիծ լիներ:

Ոչ մի ձայն, ոչ մի խոսք, և միաժամանակ՝ անհունորեն խորը վիշտը:

Երբ Հասմիկին հարցրել են, թե ինչու է այդշափ զուսպ խաղում, դեռասանունին նետեյալ պատասխանն է ավել: «Մենելատանը ո՞՛ր սգլորն է ֆեզ վրա խիստ ազդում, նա», որ զլովար ծեծելով, ձայնն աշխարհ գցելով իր հարազատի զովքն է անում, թե՝ նա, որ բարացած նստած է դա-

գաղի մոտ և արտասույները աշխերում հազիվ են երեւում»<sup>128</sup>:

Գուլակյանի այս պիեսը այլ բարոններում էլ է խաղացվել: Եվ փոքր չի եղել այն դերասանութիւների թիվը, որոնք Աննայի կերպարին մելոդրամատիկ բնույր են հաղորդել: Հասմիկը խաղում էր գուսավ, շափազանցուրյան ոչ մի նշույլ չկար: Ընդհանրապես նրա խաղը պարզ էր ու անպահույն, միաժամանակ խորհ էր: Քիչ է պատահում, որ պարզուրյունը խորուրյան հետ այդպես ներդաշնակ հանդես գա, ինչպես տեսել ենք Հասմիկի խաղում: Երբեմ նա չէր սահում պատկերած երեւուրյի մակերեսին, չէր սահմանափակում իրեն՝ միայն տպավորուրյուն արտահայտելով: Մարդու նոզու խորեք բափանցելու բացառիկ ուժի տեր լինելով, դերասանութիւն միաժամանակ երբեք չէր հասնում ծայրահեղուրյան, նոզեկան տանջանք պատկերելիս՝ երբեք չէր ընկնում հիվանդագին արտահայտուրյան մեջ: Եվ ապա, որ, իհարկե, ավելի կարեռ է, Աննայի կերպարի բմբոնումը դրսեռվում էր ավելի նիշտ: Նա Աննայի մեջ տեսնում էր ոչ միայն լոկ տառապող մայր: Աննայի մեջ նա կարեռ էր համարում նաև նրա նոզեկան մաքրուրյան, գեղջկական պարզամտուրյան նետ միացած մեծ կամքքը, նոզու արիուրյունը, այսինքն այն բանկագին հատկուրյունները, որ ժողովուրդը ձեռք էր բերել իր աշխախում բշխամիների դեմ մղած հերոսական պայքարում:

Այդպես էլ ժամանակին գնահատվել է Հասմիկի խաղը: Բոլոր հնադատներն էլ նշում էին, հատկապես ընդ-

գծում հերոսականության տարրը: Մի ոեցենզենտ, օրինակ, ասում է, թե դերասանուին խոր նշմարտացիությամբ էր ստեղծում «աշխարհի շարճ ու քարին դեռ պրիմիտիվ կերպով ըմբռնող հայ կնոջ, հերոս մոր՝ Աննայի հարազատ տիպարը»<sup>129</sup>: Նույնն է ասված և մի այլ բննադատության մեջ. «հանդիսատեսք տեսնում է,— կարդում ենք հողվածում,— հանուն ժողովրդի ամեն տեսակի անձնագործության ընդունակ խսկական հերոսունիու»<sup>130</sup>: Տարիներ անց, երբ Հասմիկը նորից հանդիս եկավ նույն դերով, բննադատությունը հատկապես շեշտեց Հասմիկի ստեղծած կերպարի բարոյական ուժը, կամքը, նոգեկան այն կորովը, որով Աննան կարողանում է զոհաբերել իր մայրական զգացմունքները. այդպես է պահանջում ժողովրդի գալիք երշանկությունը<sup>131</sup>:

Սյսպիսով, եթե Շուշանի և Կնիքրայեի կերպարները Հասմիկի խաղով բարձրանում էին մինչև ողբերգության աստիճանը, ապա Աննայի, այդ պարզ ու հատակ գեղջկունու նկարագիրը Հասմիկը բարձրացնում, հասցնում էր հերոսականության:

\* \* \*

Մենք շափազանց հատկանշական ենք համարում մի իրողություն, որ շատ անգամ է կրկնվել Հասմիկի ստեղծագործական կյանքում և որի մասին, տարբեր առիթներով, ասել են նրա հետ զործող ոեժիսյորներն ու դերասանները:

Անա թե ինչ է գրում Քաղաքարք Հասմիկի հորելյանի առքիվ հրապարակած իր մի հոդվածում. «Ով առիք է ունեցել աշխատել Հասմիկի հետ, շատ լավ գիտե, թե պիեսների սկզբնական փորձերին որքան դժգույն, անհետաքրքիր է լինում Հասմիկը, պարզապես նմանվում է անվարժ աշակերտունու: Ուշիմ և զգայուն ոեժիսյորք, իհարկե, չի անապարի ներխուսմել Հասմիկի որոնումների մեջ և չի բռնանա նրա հոգու վրա, որովհետև բազ գիտե, որ արտաքնապես անարտահայտիշ այդ փորձելաձեի ետևում կատարվում է եռուն ստեղծագործական աշխատանք»<sup>132</sup>:

Նույնն են պնդում Հասմիկի հետ աշխատած այլ ոեժիսյորներ ևս, օրինակ՝ Արմեն Գուլակյանն ասում է. «Հասմիկը դերը կենդանի էր պատկերացնում և տեխսոր սկզբում նրան խաճգարում էր»: Այդ հաստատում են նաև դերասանները. «Զէր սիրում դերը միանգամից փորձել», — ասում է մեկը: «Զէր սիրում տեխսոր սկզբից սովորել», — վկայում է մի ուրիշը:

Մի գրույցի ժամանակ Վ. Վաղարշյանը պատմեց, թե ինչպես «Եզոր Թուլբչովի» փորձերին, թ. Զախարյան երկար ժամանակ անհանգիստ էր մայրապետի կերպարի համար, մտածելով, որ Հասմիկից Մելանիա չի ստացվի, և թերևս նիշտ վարված կլինի, եթե փոխարինի մի ուրիշով: Սակայն դերասանները, որ լավ էին նանաշում Հասմիկին և ծանոր էին նրա փորձելաձեի յուրահատկությանը, ամեն կերպ աշխատում էին փարատել ոեժիսյորի տարակուսանքը, հավատացնելով նրան, որ վերջում անպայման գոհ կմնա: Եվ, իսկապես, անդրանիկ ներկայա-

ցումից մի փոքր առաջ, գրեթե վերջին փորձի ժամանակ, Երբ Զախարյանի տարակուսաներ Հասմիկի նկատմամբ հուսահատուրյան էր հասել, իսկ Հասմիկն արդեն գտել էր իրեն, ավելի նիշտ՝ ընտելացել, հարազատացել էր կերպարին, այնպես փայլեց, որ ոեժիսյորը շփտեր, ըե ինչպես արտահայտի իր հիացմունքը:

Այս վկայուրյունները մենք շատ կարենոր ենք համարում: Տեսափառ դժվար յուրացումը, կամ ավելի նիշտ՝ տեսափառ սկզբնական օտարութիւրյունը մի այլ պատճեան շուներ, բան այն, որ Հասմիկը ձգուում էր նախապես հասկանալ կերպարը, զգալ նրան, կենդանացնել նրան իր երեկակայուրյան մեջ: Այդ նպատակի համար սկզբնական շրջանում, բավական էր կերպարի ընդհանուր պատկերացումը: Սա մի բարդ պրոցես էր, մինչև որ դերասանունին գտնում էր կերպարի կենսական հատիկը, սկսում էր զգալ նրան, մի ինչ-որ հարազատուրյուն էր առաջ գալիս դերասանունու և կերպարի միջև, մի մերձեցում, ուր ի վերջո հանգում են դերասանունու և կերպարի միաձուլմանը: Երբ այլևս վերասում էր Հասմիկին Շուշանից կամ Կանիրտյեից, Կարանիխայից կամ Ժելեզնովայից բաժանող տարածուրյունը, կերպարի ապրած նոզեկան ցավը, հույզը, անհանգստուրյունը դառնում էր արդեն իր սեփականը, համակվում էր մեկի վշտով, մյուսի դառնուրյամբ՝ նոր միայն նա սկսում էր զգալ նաև տեսարք, վերասում էր սկզբնական խորուրյունը և բառերը գալիս-ընկնում էին իրենց տեղը:

Ներկայացման ժամանակ, որքան էլ դա զարմանալի

է, Հասմիկը միանգամայն հարազատ էր մնում հեղինակի տեխստին, երբեք նա հեղինակից չէր շեղվում, տեխսար չէր խառնում, ոչ մի բառ ավելի կամ պակաս չէր ասում: Այսպիսով, ուրեմն, սկզբնապես խուսափելով տեխրատից, նա հետազայտ ավելի էր մոռենում նրան, ավելի նիշտ ու ավելի խորն էր արտահայտում, քան այն դերասանները, որոնք նենց սկզբից բարեխղնաբար սերտում են տեխստը: Եվ նրա հետ գրաղփող գրերե բոլոր ոեժիսյուններն էլ վկայում են, որ նա շատ շուտ էր զգում պիխում եղած անբնականությունը, այն խոսքը, որ ինքնանպատակ էր, չէր բխում կենապարի բնույրից:

Դերապատրաստման այս ձևին հանդիպում ենք անցյալի դերասաններից Սիրանույշի<sup>133</sup> մոտ, իսկ սովորական բեմի վարպետներից՝ Ա. Բուշմայի<sup>134</sup> ստեղծագործական պրակտիկայում: Հետաքրքիր է նշել և այն, որ Ստանիսլավսկին, որը «սեղանի շուրջ» դերապատրաստման սկզբունքի հեղինակներից էր, ինչպես վկայում են նրա հետ աշխատած ոեժիսյունները, իր կյանքի վերջին տարիններին «ապստամբեց» ներկայացման իր կողմից օրինականացված կարգի դեմ, և ամենակրթուու կերպով պաշտպանում էր մի փորձելաձե, ըստ որի պիխուր չի կարդացվում սկզբնապես բայ դերերի և տեսաւառնների, բայց վերլուծվում է զործողության տեսակետից և էտյուդավորվում ինքնահնար տեխստի հիման վրա:

Ստանիսլավսկին բեմական խոսքին տալիս էր առաջնակարգ նշանակություն: Նա համոզված էր, որ հե-

ղինակի գաղափարի արտահայտման գլխավոր միջոցը խոսքն է և ասում էր, որ բառը բեմում (ինչպես և է կյանքում) ոչ թե պետք է անշատ առաջանա, այլ այն պետք է անբաժանելի լինի իր արտահայտչության ինտելեկտուալ, էմոցիոնալ և ֆիզիկական ողջ ոլորտից: Բեմական խոսքին չի կարելի օրգանապես տիրել, քանի ենթատեխստի ամենաբարդ հյուալածքը դեռ չի մշակված, քանի դեռ դերասանը չի գտնում դեպի հեղինակի տեխստը տանող բոլոր ուղիները:

Մինչդեռ, հին կարգի համաձայն, փորձի հենց սկզբից անցնում են տեխստին, պիեսը կարդացվում է ըստ դերերի այսօր, վաղը, ամեն օր, և դեռ ներքին իմպուսով շամրապնդված խոսքը արդեն մեքենայորեն մտնում է դերասանի հիշողության մեջ: Դրա հետևանքով, ներկայացման մեջ խոսքը ոչ թե գրուցակցի մտքի կենդանի ուսակցիան է դառնում, ոչ թե գործողություն, և ոչ էլ կամային մի ակտ, այլ լոկ պատասխան ուղիկա՝ ուսպիկային:

«Աերպարի ստեղծումը երկարատև և բարդ մի պրոցես է, և դրա ընթացքում դերասանը դեռ շատ բան պետք է նշտի և խորացնի պիեսի վրա աշխատելու հետագա աստիճաններում: Բնական է, որ էտյուդներում նա, համենայն դեպս, չի հասնի մտքի այն հարստությանը, որը տալիս է նրան հեղինակային տեխստը: Սակայն նա պարագատ կլինի հեղինակի խոսքի ընկալմանը, որովհետև խորապես ըմբռնած կլինի բոլոր ուղիները, ուր ծընվում է գործող անձի այս կամ այն բառը»<sup>136</sup>:

Ինչի՞ մասին են վկայում այս փաստերը, եթե ոչ այն,



Թուտիկով՝ Ա. Ավետիսյան, Նաստասյա՝ Հասմիկ  
(«Ինք»)



• ԱնիկանսենՏԱՄ Պայման Քսեղիսա («Ենուրվենցիա»)

ՀԱԿԱՑՈՒՅՆ

որ Հասմիկը, որպես նշմարիտ արվեստագետ, ինքնարեւարար հանգել է մի փորձելածեփ, որին զուցե և ապագա է պատկանում: Այս մի անգամ ևս հաստատում է այն նշմարառուրյունը, որ Ստանիսլավսկու «սիստեմը» ոչ թե հինարված մի ուսմունք է, այլ թեմի մեծ վարպետների փորձի ընդհանրացում: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Հասմիկն այնպիսի պատրաստուրյուն չուներ, որ տեսականութեն ուսումնասիրեր Ստանիսլավսկու «սիստեմը», բայց որ նա իր արվեստի հիմունքներով ստանիսլավսկիական էր, վեր է ամեն կասկածից:

\* \* \*

Ավարտելուց առաջ մեր այս սեղմ ակնարկը սովետանայ թեմի անվանի դերասանութուն մասին՝ կամենում ենք վերադառնալ այն հարցին, ինչից սկսեցինք: Խոսքն այն մեծ, անձնազն սիրո մասին է, որ տածում էր Հասմիկը դեպի բարոններ: Հասմիկի սերն այն շափերի էր հասնում, որ նա իրեն չէր պատկերացնում առանց բարոնի: Թարոննը նրա համար երկրորդ հարազատ տունն էր: Այդ զգացումը ոչ միայն սկզբում էր, երիտասարդուրյան տարիներին, այլև նետո: Կարելի է նույնիսկ ասել, որ կյանքի հասուն տարիներին, դերասանութուն կապը բարոնի հետ ավելի խոր և ամուր գարձափ: Նրա սերը եղել է բոլորանվեր: Գերասանունին հանախ էր այն միտքն արտահայտում, թե արդյունքի է հասնում «նա, ով կառղանում է իրեն ամբողջապես նվիրել սիրելի գործին:

129

ՄԵՐ արհեստը, — սիրում էր կրկնել նա, — շատ խանդոտ  
արհեստ է և խսկույն իր վրեծք կլուծի»<sup>137</sup>,

Հասմիկը շատ էր խաղացել շար ու նենգ կանանց  
կերպարներ: Նա զիտեր, որ իր մերկացնող խաղը օգնում,  
նանապարհ է բացում ազնիվ ձգումների առաջ, բայց  
նա բուռն պահանջ էր զգում բեմից պատկերել այդ ձրգ-  
տումների ծնունդը, նրանց երշանիկ կրողին:

Դերասանութու այդ տենչը եղիշե Զարենցը ձեակեր-  
պել է այսպես.

Երեսուն տարի բեմի վրա դու  
Դեմք ես պատկերել մարդակեր մարդու:  
Որքան ես տքնել, աշխատել անդուզ,  
Որպեսզի այսօր առույգ, զվարթուն  
Դեմքը պատկերես մարդակերպ մարդու...<sup>138</sup>

Բանաստեղծը ողջունելով դերասանութուն, բարեմաղ-  
րում էր նրան «կյանք անհատնում», որ հասնի իր նպա-  
տակին և բեմում ստեղծի խսկական մարդու՝ սովետա-  
կան կնոջ կերպարը:

Դերենիկ Դեմիրենյանը պատմում է.  
«Մի անգամ զանգատվեց.  
— Ախ, մի կնոջ դերով պիես չի գրվում, որ խաղամ:  
— Մի՞րե միշ են եղել դերերդ, — հարցրի ես:  
— Շատ են եղել, բայց ես ուզում եմ նոր կյանքի  
կնոջ, լավ, խորը կնոջ դեր: Կան, բայց կցկառու են, մինչեւ  
բացվում ես՝ նա էն է պրծնում է: Խորը, ուժեղ, ընդարձակ:  
Սյս զանգատը ուրիշ վարիանտներով կրկնում էր նա

և իր մահից ոչ շատ առաջ... նա չէր դադարում ստեղծագործելուց, ձգտելուց ստեղծել, աշխատել, առաջ գլուխալ»<sup>139</sup>:

Ճիշտ է դիտված, որ «Հասմիկը մեծ պոտենցիայի դերասանութիւնը և շսպառվեց երբեք, մինչև իր ֆիզիկական վախճանը», որը վրա հասավ 1947-ի օգոստոսի 23-ին:

Հասմիկի ստեղծագործուրյան, նրա արվեստի ուսումնաժողովուրյան պահանջը առաջարվել է նրա կենդանուրյան օրով, երբ ասվել է, թե «Հասմիկի բեմական գործունեուրյունն արդեն կուտակված մեծ արժեք է և զգալ է տալիս իրեւ ամբողջացած մի պատմական հուշարձան, իրողուրյուն, և ինքնին պահանջում է մի ամփոփված գնահատական»<sup>140</sup>:

Չենք կարող գանգատվել, թե Հասմիկի մասին իիշ է գրվել: Ընդհակառակը. մեր բննադատները շատ շերտ հոդվածներ են նվիրել նրան: Սակայն դրանք, ինչպես և մեր այս ակնարկը, ապագա շենքի հիմնաբարեն են միայն: Մեր բատերազիտական միտքը դեռ շատ անգամներ է անդրադառնալու նրան: Մեծ և ընդարձակ ուսումնախորուրյուններ են գրվելու նրա մասին: Նվարիշ կերպ էլ չի կարող լինել: Հասմիկը ազգային բեմի այն ներկայացուցիչներից է, որի ստեղծագործուրյունը շատ բարձր է գնահատվելու, որպես ոեալիստական արվեստի մի անզուգական կորող:

## Ա.ՂԲՅՈՒԹՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

1 Գրականության մեջ սովորաբար հիշվում է 1883 թվականը, որ սխալ է:

2 Հասմիկի կենսագրական տվյալները մեծ մասամբ քաղված են դերասանուհու հիշողությունների զրբից, որ 1947-ին, Հայպետհրատի հրատի հայտարակությամբ լույս է տեսել «Թատերական հուշեր» խորագրով:

3 Հասմիկի իսկական անունը Թագուհի էր: Տե՛ս 6-րդ ծանոթությունը:

4 Տեղեկությունը քաղված է Հասմիկի «Թատերական հուշերից» (էջ 57): Պարբերական մամուլում մեղ Հաշողվեց գտնել դերասանուհու ատած ռեցենզիան:

5 Հասմիկի ասած հայտարարությունը հրապարակված է «Մշակութային» (1906, № 191):

6 «Ինձ նկատելուն պես,— հիշում է դերասանուհին,— Արեւանը իսկույն մոտեցավ ու իր հաստ ձայնով ասաց:

— Տիկին, ինչո՞ւ չես երևում, սեղունը քացվելուց արդեն մի ամիս է անցել, իսկ դու շկաս ու շկաս:

Կարմրելով ու հայացքս գետին հառելով նրան հայտնեցի ու շացմանս պատճառը:

— Գիտե՞ս ինչ կուրյող է պատահել, — ծիծաղելով խոսեց նա, — ախար այն բլոկնոտս, որտեղ զրել էի քո անունը, կորցրի, իսկ անունդ, մեղքս ինչ թաքցնեմ, մոռացել էի: Հիմա որ ուղեցանք թեր-

թերում հայտարարություն տալ, ևս որոշել էի քո անոնը անպայման դրեւ Բայց ի՞նչ գրեի: Մտածեցի, մտածեցի ու մեկ էլ հիշեցի մեր Սիրանուշի բրոջ անոնը: Մեր Սիրանուշը մի քույր ուներ՝ Աստղիկ անունով, լավ գերասանուհի կդառնար, բայց շատ շուտ վախճանվեց: Ահա և ևս էլ քո մոռացված անվան տեղը նրա անոնը՝ Աստղիկ դրեցի, ենթազրելով ին կհասկանաս, որ Աստղիկը դու ես:

Ես մաքումս ծիծաղեցի ինձ վրա,— չէ՞ որ երկար ժամանակ տաելությամբ էի լցվել գեղի այդ Աստղիկը, շիմանալով, սակայն, որ այդ անվան տակ Արելյանն ինձ է նկատի ունեցել:

—Հետո որ տեսա չես երեսմ,— շարունակեց Արելյանը,— ուրիշներից իմացա անունդ և էսօր էլ գրություն ուղարկեցի: Լավ արիր, որ եկար Լսիր,— թիւ հետո գարծավ նա ինձ,— արի հենց անունդ էլ Աստղիկ դնենք, ամբո Թագուհի գերասանուհու անոն չէ: Թագավորն ի՞նչ է արել բեմի համար, որ Թագուհին ինչ անի: Գու լավ ուժ կդառնաս, արի այդ վատ անունիցդ հրաժարվիր:

—Այն ժամանակ Հասմիկ դրեք,— ասացի ևս, տալով այն անոնը, որն իմ սրտին, շղիտեմ ինչու, ավելի սիրելի էր:

—Հասմիկ... ինդերմ, զա էլ վատ անուն չէ,— ասաց Արելյանը:

ել այն օրվանից Թագուհին դառավ Հասմիկ» (էջ 65—66):

7 Հասմիկի մահից հետո, թատերական թանգարանին է հանձնվել շատ տարիներ առաջ նկարված ծաղրանկարների մի տեսք: Այդ շատ տարիներ առաջ նկարված ծաղրանկարների մասությամբ՝ պրիմիսկարներն աշքի չեն ընկնում կատարողական հմտությամբ՝ արիմիտիվ են, բավական անվարժ, բայց բովանդակությամբ՝ չափազանց հետաքրքրի են. յուրաքանչյուրը մի կենդանի փաստաթուղթ լինելով, հատաքարտ է, թե բավական երկար ժամանակ Հասմիկն ինչ դարձուագտմում է, թե բավական երկար ժամանակ Հասմիկն ինչ դարձուագտմում է, մաքումս նրա դեմ, ինչպես է բերի շրջապատի մեջ է զտնվել և, մաքումս նրա դեմ, ինչպես է կարողացել ճանապարհ հարթել դեպի իր ապագան:

«Հարազատ բարեկամ» խորագրով նկարում հանգուցյալ ամուսնու եղբայրը Հասմիկին ասում է. «Մենք անկեղծ խորհուրդ ենք տալիս քեզ թողնել բեմը. դու վարեկարեկում ես մեր ամբողջ ցեղը»: Հաջորդ նկարում նույն հոգատար բարեկամը գավաղանը ձեռքին

գոշում է՝ «Ինչ, առ Հասմիկը համարձակվել է բեմ բարձրանալ և... ու թե դերձակ դառնալ»: Մի այլ նկարում պատկերված է, թե ինչ-պես մի խումբ շներ հաշոցով և կատաղած մոռիթներով շրջապատել են Հասմիկին: Նկարի տակ գրված է.

«Տիկին Հասմիկի բարեկամների վրդովմունքը նրա բեմ գուրս գալու առթիվ»:

Տեսրի հեղինակը վերջում մի բացատրություն է տվել, ուր ասում է, թե Հասմիկից «բոլորը երես դարձրին, սկսեցին հալածել, արհամարհել, սպառնալ և նույնիսկ թալանել, իր տագրները օգնելու փոխարեն մուրճակներ էին ձեռք բերում և դատարանի միջոցամբ զումարներ պոկռում»:

Ասել, թե այս ամնեը չի աղգել Հասմիկի վրա, չի դառնացրել, պղտորել նրա հոգին, իհարկե, ճիշտ չի լինի: Բայց ճիշտ է և այն, որ Հասմիկը ոչ մի զիջման չի զնացել և իր կյանքի միակ մխիթարությունը որոնել է աշխատանքի մեջ: Տեսրի հեղինակը հենց դա էլ դարձրել է իր նկարներից մեկի նյութը: Բարձրության վրա նկարված է վարագույրով ծածկված բեմ: Մի կին բարձրանում է գեղի այդ բեմը տանող աստիճաններով, յուրաքանչյուր աստիճան բնութագրված է մեկը՝ բարձրասանք, մյուսը՝ խոռվություն, երրորդը՝ նախանձ, հաջորդը՝ տգիտություն, այնուհետև սպառնալիքներ, ծաղր, թուր ու մուր, անեծք, հալածանք, նկարը կոչվում է «Ի՞նչ աստիճաններով է բարձրանում Հասմիկը բեմ» (ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գրականության և արվեստի թանգարանի անտիպ նյութերից):

Տեսրի հեղինակը այս և մյուս պատկերները գուցե և նկարել է կատակով, բայց փաստորեն ապագա սերունդներին թողել է բրոժուական հասարակության մեջ տառապող հայ դերասանությունոցիալական դրաման արտահայտող մի պերճախոս փաստաթուղթի:

8 Այս այն Հակոբյանն է, որ գրել է «Սիրո դարուն »վերնագրով պիեսը: Այս պիեսը ներկայացվել է Թիֆլիսում, 1912-ի նոյեմբերի 29-ին, Հայ դրամատիկական ընկերության դերասանական խմբի

կողմից Արտիստական թատրոնում, Մասնակցում էին՝ Ալիսանյանը, Արմենյան ամուսինները, Մանվելյանը, Մամիկոնյանը, իհարկե, նաև Հասմիկը, որ կատարում էր աղախնու գերը: Նույն օրը բեմադրվել է երկու պիես և այդ կապակցությամբ մատուց հետեւյալ ձևով է զնահատել Հակոբյանի երկը. «իբրև պիես անկասկած ավելի հաջող էր «Սիրո զարունը», որի թեման սակայն ավելի նեղ է և սահմանափակի: Նա զեղեցիկ հորինվածք է և կրում է նմանողության բնույթ, փոխառված ևլրոպական դրականությունից: Պիեսի բովանդակությունը կատարվում է մի արձանի շորջը: Քանդակագործ Գարբելը, ստեղծագործում է հրաշալի արձանը սիրո ազգեցության տակ: Կինը տեսնելով, որ հրաշագեղ արձանը քանդակված է ոչ իր, այլ մի ուրիշ կնոջ ազգեցության տակ, շարդում է արձանը: Տեսարանները զեղեցիկ են, գործողությունները ներդաշնակ, փոքր ինչ ձգդպված» («Մշակ», 1912, 260): Գերակատարների մասին ասված է:

«Խաղում էին սահուն», «Չատ բավարար էին իրենց դերերում»

(նույն տեղում): Նախորդ ժանոթագրության մեջ հիշված նկարների հեղինակը դարձալ Ալեքսանդր Հակոբյանն է:

9 «Խորհրդային արվեստ», 1936, № 8:

10 Սունդուկյանի պիեսներից Հասմիկը միայն վեցի մեջ է հանդես եկել, բայց խաղացել է տաս կանացի դեր. Քալի, Սալոմե, Միստ («Քանդած օչախ»), Կատարինե («Բաղնըսի բոխչա»), Նինո («Եվլ այլն»), Նատո («Սիր և աղատություն»), Շուշան, Կեկել, էփեմիա («Պեպո») և համփերի («Խաթարալա»):

11 «Խորհրդային արվեստ», 1936, № 8:

12 Հասմիկ, էջ 36:

13 «Մշակ», 1907, № 154:

14 «Մշակ», 1911, № 241:

15 Նույն տեղում, 1915, № 13:

16. Նույն տեղում, 1916, № 230:

17 «Գեղարվեստ», 1909, № 3:

18 «Մշակ», 1912, № 282:

19 Նույն տեղում, 1914, № 232:

20 Պահարե, «Բատկրական հուշեր և խոհեր» (ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի անտիպ նյութերից):

21 «Մշակ», 1914, № 14:

22 Հասմիկ, էջ 14:

23 Նույն տեղում, էջ 103:

24 Եկրվանդագիր պիհսներից Հասմիկը ութի մեջ է խաղացել, կատարելով առանվիզ գեր. Երանուհի, Մարդարիտ («Պատվի համար»), Երմոննե, Մարթա («Եվզիննե»), Նունուփար, Օվսաննա, Նոյնմզար («Ավելակների վրա»), Մելանիա («Արմենուհի»), Մարիամ, Շպանիկ, Սուսան («Նամուս»), Նաղանի, Անահիտ, Եղիսարիթ («Կործանվածք»), Զառնիշան («Զար ողի»), Արու («Էրզրումի ճանապարհին»):

25 Ռւշպրության արժանի է այն փաստը, որի տարրերություն Զմշկյանի, որ Սոնդուկյանի գրամատուրպիհայում խաղացած կերպարների անդրանիկ կատրողն եղավ, Արելյանը, եթե նկատի չունենանք Գիծ-Դանիելը, ապա «Նամուսի» առաջին բեմադրության մեջ խաղացել է Ռուստամ և ոչ Բարխուդար, որի կլասիկ գերակատարն է Համարիում նա. Էլիոբարտիք անդրանիկ գերակատարը հայ թատրոնում Գևորգ Պետրոսյանն է և ոչ Արելյանը, թեև վերջինս խաղացել է աշնաբիսի փայտով և այնպիսի ամրողական բնգործումով, որ այդ կերպարի բեմական տրադիցիան կապված է նրա անվան համար:

26 Բեկ Լիսնյանն ասում է՝ «Ենք», բայց ի պատիվ նրա պետք է ասել, որ դրանից մի բանի տարի առաջ նա դրել է. «Տիկին Հասմիկը նոր ուժ է և մոտիկ ապագայում նա խաղալով միայն աննշան գերեր, հնարավորություն չէր ունեցել ցուց տալ իր ընդունակությունները. Այս տարի նա առաջին անգամները դուրս եկավ բավական պատասխանատու գերերում, ինչպես նատօն («Սեր և աղառություն»), Եղորո («Թրիանի կուլյոր»), Լուշա («Ազրայիլ») և ոչ միայն բավարար տարավ, այլև գովելի հանդիսացավ: Հմուտ, բարեխիղձ ուժիսյորի ձեռքի տակ ևս կարող է ավելի կատարելագործ-

- վել, մանավանդ, որ նրա խաղի մեջ նրբություն և ինքնուրույնություն կա» («Գեղարվեստ», 1909, 3):
- 27 «Գեղարվեստ», 1911, № 4:
  - 28 «Մշակ», 1911, № 423:
  - 29 Նույն տեղում, 1914, № 4:
  - 30 Նույն տեղում:
  - 31 «Թատրոն և երաշտություն», 1917, № 3:
  - 32 Առևն Սպանդարյան, Հողվածներ, 1949, էջ 110:
  - 33 «Մշակ», 1913, № 117:
  - 34 Նույն տեղում:
  - 35 Մ. Մելիքսեյյանի հողվածից, կցված Հասմիկի «Թատերական հաշերին», որպես առաջարան, էջ 11:
  - 36 Հայաստանում սովետական կարդերի հաստատման ժամանակ Հասմիկը Գիլիչանում էր գտնվում. աղջկը ծանր հիվանդ էր և մայրը նրան Գիլիչան էր տարեկ բուժելու նպատակով:
  - 37 «Խորհրդապատճեն արվեստ», 1938, № 2:
  - 38 1931-ին Հասմիկն ընտրվում է Քաղխորհրդի անդամ, իսկ 1931-ին Հասմիկն ընտրվում է ՀՍԽՀ Գերագույն սովորականի գեղարվատատ:
  - 39 «Խորհրդապատճեն Հայաստան», 1938, № 148:
  - 40 «Կոմմունիստ», 1939, № 3:
  - 41 «Թատրոն և երաժշտություն», 1917, № 3:
  - 42 1927-ին ՀՍԽՀ Կենտգործկոմի որոշմամբ Հասմիկին շնորհվում է վաստակավոր արտիստուհու կոչում: 1935-ի մարտի 16-ին նրան է ժողովագրական գերասանուհու բարձր կոչումը: Նույն թվա-տրվում է ժողովրդական գերասանուհու բարձր կոչումը: 18-ին նշվում է Հասմիկի 18-ին նշվում է Հասմիկի բեմական գործունեության կանի մայիսի 30-ին օրը ՀՍԽՀ Կենտգործկոմի որոշմամբ նրան արվում է աշխատանքի հերոսուհու կոչում: 1945-ին ՍՍՀՄ Գերագույն Սովորականի հախաղահության Հրամանադրուվ պարգևատրվում է «Աշխա-տանքային Կարմիր զրոշի» շքանշանով: Պարգևատրվել է նաև «Կով-կասի պաշտպանության համար» և «Հայրենական Մեծ պատերազմի

19 Նույն տեղում, 1914, № 232:

20 Պահապետ, «Թատերական հուշեր և խոհեր» (ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի անտիկ նյութերից):

21 «Մշակ», 1914, № 14:

22 Հասմիկ, էջ 14:

23 Նույն տեղում, էջ 103:

24 Շիրվանդակեր պիեսներից Հասմիկը ութի մեջ է խաղացել, կատարելով տասնվեց գեր. Երանուճի, Մարգարիտ («Պատվի համար»), Երմոննե, Մարթա («Եվզինն»), Նունուփար («Ավերակների վրա»), Մելանիա («Արմենուճի»), Մարիամ, Շպանիկ, Սուսան («Նամուս»), Նաղանի, Անահիտ, Եղիսաբեթ («Կործանվածք»), Զառնիշան («Չար ողի»), Արու («Էրզրումի ճանապարհին»):

25 Ուշագրության արժանի է այն փաստը, որ ի տարբերություն Զմշկյանի, որ Սունդուկյանի դրամատուրգիայում խաղացած կերպարների անդրանիկ կատրողն եղավ, Արելյանը, եթե նկատի չունենանք Գիծ-Դանիկը, առաջ «Նամուսի» առաջին բեմադրության մեջ խաղացել է Ռուսամ և ոչ Բարխուզար, որի կլասիկ գերակատարն է Համարվում նա. Էլիզաբետի անդրանիկ գերակատարը հայ թատրոնում Գեորգ Պետրոսյանն է և ոչ Արելյանը, թեև վերջինս խաղացել է աշնաբսի փայլով և այնպիսի ամբողջական ընդդրկումով, որ այդ կերպարի բեմական տրադիցիան կապված է նրա անվան հետ:

26 Թեև Լեոնյանն ասում է՝ «Ճենք», բայց ի պատիվ նրա պետք է ասել, որ դրանից մի քանի տարի առաջ նա դրել է. «Տիկին Հասմիկը նոր ուժ է և մոտիկ ապագայում նա խաղալով միայն աննշան գերեր, հնարավորություն չեր ունեցել ցուց տալ իր բնդունակությունները. Այս տարի նա առաջին անգամները գուրս եկավ բավական պատասխանատու գերերում, ինչպես նաև աղատություն», իգորո («Օրեւանի կուլուց»), կոշա («Ավրայիլ») և ոչ միայն բավարար տարավ, այլև գովելի հանդիսացավէ Հմուտ, բարեխիդ ուժիւթորի ձեռքի տակ ևս կարող է ավելի կատարելագործ-

վել, մանավանդ, որ նրա խաղի մեջ նրբություն և ինքնուրույնություն կա» («Գեղարվեստ, 1909, 3):

ընթացքում ցուց տրված ծառայությունների համար», «Գերազանց աշխատանքի» մեղալներով:

43 Անոն Քալանքար. Հուշեր և ուրվագծեր Սունդուկյանի անվան պետական թատրոնի պատմությունից (ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի անտիպ նյութերից):

44 Գերենիկ Գեմիրճյանը պատմում է հետևյալը. «Հասմիկն ուներ և իր արտօնչը. զա այն էր, որ ինչպես ինքն էր ասում՝ իրեն չեն հանձնում զրանդ-զամաների դերեր. Ուրիշ խորքով՝ դերեր, որ հանդես են զալիս սալոնի «բարձր» հասարակության, թերևս ինտելիգենտ կանայք: Եվ իրոք՝ այս տենդենցը նկատվում էր: ...ինձ զանգատվում էր և հարցնում. «Մի՞թե ես չեմ կարող, մի՞թե ուրիշները (և նա տալիս էր անունները) կարող են, ես՝ ոչ»:

45 Անոն Քալանքար. Հուշեր և ուրվագծեր Սունդուկյանի անվան պետական թատրոնի պատմությունից (ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի անտիպ նյութերից):

46 «Խորհրդային Հայաստան», 1925, № 262:

47 «Խորհրդային Հայաստան», 1936, № 115:Տե՛ս հակ Անոն Քալանթար. «Հուշեր և ուրվագծեր Սունդուկյանի անվան պետական թատրոնի պատմությունից» (ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի անտիպ նյութերից):

48 Նույն տեղում:

49 Նույն տեղում, 1925, № 48:

50 Նույն տեղում:

51 «Խորհրդային արվեստ», 1936, № 10:

52 «Խորհրդային Հայաստան», 1922, № 287:

53 Նույն տեղում, 1923, № 207:

54 Նույն տեղում, № 50:

55 Նույն տեղում, 1924, № 44:

56 «Բանվոր», 1924, № 32:

57 Նույն տեղում:

58 «ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում»: 1954, էջ 447:

59 «Խորհրդային Հայաստան», 1925, № 51:

60 Նույն տեղում, 1926, № 81:

61 Նույն տեղում, № 96:

62 Նույն տեղում, 1924, № 42:

63 Նույն տեղում, 1927, № 103:

64 Նույն տեղում:

65 Նույն տեղում:

66 «Խորհրդային արվեստ», 1936, № 8:

67 «Խորհրդային Հայաստան», 1927, № 107:

68 «Խորհրդային արվեստ», 1936, № 9:

69 Նույն տեղում, 1938, № 2:

70 Նույն տեղում:

71 «Խորհրդային Հայաստան», 1927, № 107:

72 Նույն տեղում:

73 Вера Пашенная, «Искусство», 1954, էջ 163:

74 Թատրոնի պատմությունից հայտնի է, թե ինչպիս ամեն անզամ, երբ անհույս փորձ է արվել մեկնաբանել Յարովյայի կերպարը «Հերոսուհու» պատկերման արտաքին հնարներով, որպիս օրինակ, հիշվում է այնպիսի օժտված դերասանուհի, ինչպիս Վ. Պ. Գորդիկովան է (ան «Очерк истории русского советского драматического театра» т. 1, 1954, стр. 460):

75 Բարվի հայ թատրոնում կյուրովի դերով հանդիս է նկել Ժան Բենը (բեմ. Լ. Քալանթարի և Ա. Հովսեփյանի), Թրիլիսիի Հայութ-գրամայում՝ Մ. Պ. Մոճոյանը (բեմ. Ա. Արարյանի):

76 Տե՛ս Е. Сурков. «Կ. А. Тренев», 1953, էջ 193:

77 Նույն տեղում:

78 «Խորհրդային արվեստ», 1936, № 9:

79 Նույն տեղում, 1936, № 6:

80 Լեռն Քալանքար. «Հուշեր և ուրվագծեր Սունդուկյանի անվան պետական թատրոնի պատմությունից» (ՀՍՍՀ գիտությունների ակա-

գեմիալի Գրականության և արվեստի թանգարանի անտիպ նյութերից):

81 Նույն տեղում:

82 Կարանիխայի դիրք Հասմիկն առաջին անգամ խաղացել է 1915-ի Հունվարի 26-ին:

83 «Խորհրդային արվեստ», 1935, № 13:

84 «Գրական թերթ», 1935, № 17:

85 «Մշակ» թերթի ուցենդենտը նրա խաղի մասին գրել է Հետելյալը, «տիկ, Հասմիկը այնքան էլ ցայտուն չտվեց ավանդամոլ, շատախոս և համար պառավի տիպը» (1915, № 19):

86 «Սովետական դրականություն և արվեստ», 1948, № 3:

87 «Խորհրդային արվեստ», 1932, № 1: Տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան», 1932, 254:

88 «Խորհրդային արվեստ», 1933, № 6:

89 Նույն տեղում:

90 «Խորհրդային Հայաստան», 1933, № 129: Տե՛ս նաև «Գրական թերթ», 1933, № 10:

91 Վերջին ժամանակներս Վասսայի գերակատարմամբ Հանդիս եկալ Վերա Պաշեննայան, որի խաղը տեսնելով Մոսկվայի Փոքր թատրոնում, մենք զարմացած մնացինք, թե որքսն ընդհանրություն կա նրա և Հասմիկի պատկերած կերպարների միջև երկու գերասանութիւնների միանդամայն անկախ նմանությունն առաջացել է նյութի միատեսակ զգացողությունից, միատիպ ըմբռնումից: Թեև ոեֆիխուրը Պաշեննայային դգուշացրել է, որ Վասսան երբեք Հանդիսավիճակում չէ, այնուամենայնիվ գերասանուէին նրան ներկայացնում է ներքուստ տագնապած, իսկ արտաքուստ՝ Պաշեննայան մի այդպիսի դեպք է պատմում. Վասսայի Հետ վիճելիս Ռաշելը նրան և նրա նմաններին զաղան է անվանում: Վասսայի կատաղությունն հասնում է զագաթնակետին:

«Մի անգամ, ներկայացման ժամանակ,— գրում է նա, — Ռաշելի այդ ժամկետից հետո, ես համարյա թե կորցրեցի ինքնատիրապետումս. «Գարձյալ զաղանայինը», — գոռում է Վասսան, և ինձ ամբող-

զովին պաշարեց վայրի այնպիսի շարություն, որ քիչ մնաց ձեռք բարձրացնեի Ռաշելի վրա, բայց արտիստուհու ինքնավերահսկումը և, գլխավորը, նրա ունակությունը՝ ստեղծագործական պրոցեսի ժամանակ տիրապետելու ոչ միայն դերի բնաւական մարմնավարմանը, այլև իր հոգեբանությանը, ժամանակին կանխեցին իմ բռնկումը: Ես արագությամբ ձեռքերս դրի մեջքիս և, ցավացնելու աստիճան սեղմելով, Ռաշելից հեռացա սենյակի հակառակ անկյունը: Միայն մի քիչ հանգստանալուց հետո, ես դարձա զետի կանգնած Ռաշելը և, արդեն թարցնելով իմ կատաղությունն ու շարությունը, ասացի: «Իսկ ես քեզ կասեմ՝ մարդիկ ավելի վատն են զավաններից» և այն: Հետաքրքիր է այն, որ իմ ստեղծագործական անալիզի ժամանակ ևս, չնայած ծայր աստիճան հուզմունքի, ոչ միայն ինձ պահեցի, այլև ֆիբուացիայի ենթարկեցի վասսայի այդ վիճակը, որպես նրա վարվեցողության մեջ նոր, ճշգրիտ մոմենտ» (*«Искусство актрисы», 1954, № 239—240*):

92 «Խորհրդային Հայաստան», 1937, № 152:

93 Նույն տեղում:

94 *Տե՛ս Բ. Բյալիկի «Драматургия М. Горького советской эпохи»* գրքի շորրորդ գլուխը:

95 «Մշակ», 1917, № 260:

96 Նույն տեղում, 1916, № 240:

97 Նույն տեղում:

98 К. С. Станиславский, Собрание сочинений, т. 2, Работа актера над собой, часть 1, 1954, № 168:

99 Նույն տեղում:

100 Նույն տեղում, № 170:

101 Նույն տեղում:

102 «Խորհրդային արվեստ», 1936, № 8:

103 «Սովետական գրականություն և արվեստ», 1948, № 3:

104 «Մշակ», 1916, № 221:

105 Օբինակ՝ մի քննադատ գրում է. «Ծուշանի դերում առ. Հասմի-

կից ավելին էինք սպասում»: Դա 1910-ին էր, իսկ 1916-ին նրա մասին գրվել է. «տիկ. Հասմիկը ավելի լավ էր Շոշանի դերում, սիրող մոր, միշտ անհանդիստ, միշտ հոռեան կնոջ պատկերը ներկայացրեց մեզ Հարազատ գույներով» («Մշակ», 1916, № 244):

106 «Խորհրդային Հայաստան», 1929, № 110:

107 «ԿՈՅՄՍԻՆՏ», 1936, № 237:

108 Ա. Արաքսան. Հասմիկ («Սովետական գրականություն և արվեստ», 1948, № 3):

110 «Խորհրդային արվեստ», 1936, № 9:

111 «Խորհրդային Հայաստան», 1922, № 272:

112 Նույն տեղում, 1927, № 13:

113 Նույն տեղում:

114 Պահարե. «Թատերական հուշեր և խոհեր» (ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի անտիպ նյութերից):

115 «Խորհրդային Հայաստան», 1936, № 113:

116 Նույն տեղում, 1922, № 272:

117 Անն Քալանքար. «Հուշեր և ուրիշագծեր Սունդուկյանի անվան թատրոնի պատմությունից» (Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի անտիպ նյութերից):

118 Մեմորարային գրականության մեջ նման մի այլ վկայություն ևս պահպանվել է. «Հասմիկով տարված, — պատմում է զերասան Պահարեն, — սկսեցի զրել զրամաներ, ուր իմ հերոսուհիներին պատկերացնում էի նրա կատարումով, յուրաքանչյուր զործողություն հարմարեցնելով նրա տվյալներին» (ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի անտիպ նյութերից):

119 «Խորհրդային Հայաստան», 1938, № 7:

120 Նույն տեղում:

121 «ԿՈՅՄՍԻՆՏ», 1945, № 247:

122 Նույն տեղում:

123 «Սովետական Հայաստան», 1945, № 240:

- 124 Նույն տեղում:
- 125 «ԿՈՄՄՈՒՆԻՍՏ», 1938, № 2:
- 126 Նույն տեղում, 1945, № 247:
- 127 «Ավագութական Հայաստան», 1945, № 240:
- 128 Ալ. Արամիան. «Գերասանու՞ի Հասմիկի բևմական արվեստի մի քանի հատկանիշները» (ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի անտիպ նյութերից):
- 129 «Խորհրդային Հայաստան», 1938, № 8:
- 130 «ԿՈՄՄՈՒՆԻՍՏ», 1938, № 2:
- 131 Նույն տեղում, 1945, № 247:
- 132 «Խորհրդային արվեստ», 1936, № 8:
- 133 Տե՛ս Միքանուցի մասին մեր գրած հոդվածը («Տեղեկագիր», 1954, № 1):
- 134 Տե՛ս «Ամվառոսի Մաքսիմիլիանովիչ Բուշմա» ակնարկը («Առվեստական գրականություն և արվեստ», 1954, № 5):
- 135 Տե՛ս Մ. Կներելի հոդվածը («Թատր», 1945, № 1):
- 136 Նույն տեղում. Ստանիսլավսկին այդ մասին, բացի գրուցներից, արտահայտվել է «Գերասանի աշխատանքը դերի վրա» գրքի չափար պատրաստած գլուխներից մեկում, որ կոչվում է «Реальное ощущение жизни пьесы и роли» (К. С. Станиславский, Статьи, речи, беседы, письма, 1953, 617—652).
- Այդ տեսակետից հետաքրքիր է Գիկենի «Битва жизни»-ի փորձը, որի կենդանի նկարագրությունը գտնում ենք ն. Գորշակովի «Режиссерские уроки К. С. Станиславского» գրքում (1952, «Режиссерские уроки К. С. Станиславского» գրքում 61—158):
- 137 «Խորհրդային արվեստ», 1936, № 10:
- 138 «Գրական թերթ», 1936, № 13:
- 139 Գերենիկ Գևորգինայան. «Հուշեր և խոհեր Հայ թատրոնի մասին» (ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի անտիպ նյութերից):
- 140 «Խորհրդային արվեստ», 1936, № 9.



50277

Ոռովեն Վարոսի Զարյան

Հ Ա Ս Ա Ի Կ

22

Խմբագիր՝ Ս. ՀԱՐԴԵՆՅԱՆ  
 Նկարիչ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ  
 Գեղ. և տեխ. խմբագիր՝ Ս. ԳՈՅՉՈՒՅՅԱՆ  
 Սրբագրիչ՝ Ս. ԲԱԲԱՅԱՆ

Վ.Ֆ. 01569

Պատուհան 2359

Տիրաժ 1000


Հանձնված է արտադրության 28/XII—70 թ.

Առողջապահության 1/IV—1971 թ.

Թուղթ՝ տպագրական № 1, 70 × 108  $\frac{1}{32}$ , հրատ. 4,3 մամ. + 6 ներդիր:  
 Տպագրական 4,5 մամ. = 6,4 պայմ. մամ.: Գիրք՝ 34 կոպիկ:

ՀԿԿ ԿԵՆՏՎՈՒՄԻ-ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄՊԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ,  
 ԽԱՀԱԼՅԱՆԻ ՓՈղոց № 28

Վ.1209



A 1  
12240